

Ռաֆայել Համբարձումեան



ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԽՈՒՃԱՊԸ
ՅԱՂԹԱՆԱԿԻ ՎԵՐԱԾՈՂ ՈԳԻՆ

9(47.925)

ն-20

Ռաֆայել Համբարձումեան

5250

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ԽՈՒՃԱՂԸ ՅԱՂԹԱՆԱԿԻ
ՎԵՐԱԾՈՂ ՈԳԻՆ

 **ՆԱՄԻՋԵՒՆ** Հրատարակչութիւն

Երևան - 2005

Գիրքը տպագրում է բժիշկ և հասարակական գործիչ
Սկրտիչ (Մերժ) Սկրտչեանի հովանաւորութեամբ

Աշխատութեան մէջ նորայայտ բազմաթիւ փաստերի ու վաւերագրերի վկայակոչումով ապացուցում է այն իրողութիւնը, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրէին բուրբական յարձակման հետեւանքով արեւմտահայաստանի ու արեւելահայաստանի գրաւեալ շրջաններից խուճապահար դէպի Արարատեան դաշտ և Թիֆլիս փախչող հարիւր հազարաւոր զաղթականների առկայութեան պայմաններում հայոց զօրքը քաղաքական ու ռազմական բարձրագոյն ղեկավարութեան հետ միասին բուրբերին դիմադրութիւն ցոյց տալը անհնար ու անիմաստ է համարել: Խուճապահար մինչև Դիլիջան նահանջող և դիմադրութիւն ցոյց տալուց հրաժարող զօրքին, զօրքի վրայ ոչ մի ազդեցութիւն չունեցող ռազմական ու քաղաքացիական վերին ղեկավարութեանն ու ժողովրդին ոգեշնչել ու կուի է տարել Գարեգին Նժդեհը՝ միաժամանակ հանդիսանալով նաև բուրբական զօրքի դէմ առաջինը դուրս եկած և յաղթանակած զօրամասի հրամանատարը:

Նուիրում են Ղարաքիլիսայի հերոսամարտի անգուգական
հերոս-նահատակ Գուրգէն Տէր-Մովսիսեանի յիշատակին

Հեղինակ

«1918 թ. մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսի ճակատամարտը: Վիրառուել եմ, ներկայացուել ամենաբարձր քաջութեան շքանշանի: Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսի ճակատամարտի ոչ թե օրուայ Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենա: Ղարաքիլիսի եռօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը դրեց Հայկական պետութեան»:

Գարեգին Նժդեհ,
«Ինքնակենսագրութիւն», 1944թ. սեպտեմբեր

Ղարաքիլիսայի ճակատամարտի առանցքային նշանակութեան մասին Նժդեհի արտայայտած այս միտքը ժամանակի բազմաթիւ աղբիւրներից վկայաւած իրողութիւն է: Բոլոր ժամանակակիցներն անխտիր Ղարաքիլիսեան դնում են Սարդարապատի կողքին՝ երբեմն արելի կարելու դրելով, քան Սարդարապատը:

Բայց, ցաւօք, այս իրողութիւնը մեր պատմագիտութեան մէջ արձանագրուած չէ իբրեւ պատմական փաստ: Ընդհանրապէս առանց վարանելու կարելի է պնդել, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի վճռորոշ դերի ու նշանակութեան բացայայտումը հայ պատմագիտութեան շուտումնասիրուած խնդիրներից է: Յատկապէս չի շեշտուում այն իրողութիւնը, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի ոգեշնչողն ու կազմակերպիչը Գարեգին Նժդեհն էր, ինչպէս Սարդարապատինը՝ Գեորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հայաստանեայց եկեղեցին:

Գրա հիմնական պատճառն այն է, որ նախ՝ ճակատի պետը Ալ. Բէյ-Մամիկոնեանն էր, իսկ հրամանատարների մէջ էին բազմաթիւ նշանաւոր բարձրաստիճան սպաներ՝ Նիկողայոս(Նիկոլայ) Ղորանեանից սկսած, Սամարցեանից ու Կ. Ղամազեանով (Համազեան, Ռ. Հ.): Վերջացրած, իսկ Նժդեհն այդ ժամանակ պորուչիկի աստիճան ունէր: Եւ երկրորդ՝ հարցը չի ուսումնասիրուած այդ տեսանկիւնից, քանի որ Գարեգին Նժդեհի ամուրը 1921-1990 թթ. փակի տակ էր Խորհրդային Հայաստանում, իսկ անկախութեան վերականգնումից յետոյ էլ խնդիրը հիմնաւորապէս չի հետազօտուել:

Ժամանակակիցների յուշերից եւ աշխատութիւններից բերուած վկայութիւններով նախ թուցիկ ներկայացնենք Ղարաքիլիսայի առանցքա-

յին դերը 1918 թ. հայութեան մղած առիւծամարտում, ապա *անդրադառնանք խուճապահար փախչող բազմութիւններին ու հայ զօրքին ոգեշնչելու եւ դէպի ճակատ մղելու մէջ Գարեգին Նժդեհի վճռական դերակատարութեանը*: Ընդ որում՝ այդ դերակատարութիւնը հաստատող աղբիւրների մեծ մասը Ղարաքիլիսայի ճակատամարտին նուիրուած գիտական աշխատութիւններում շրջանառութեան մէջ չի դրուած:

Որեւէ կասկածից վեր է, որ թուրքական յարձակման հիմնական նպատակը հայութեանն իր պատմական հայրենիքի արեւելեան մասից եւս վտարելն էր, որով «այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենա»:

Գեաքերին ժամանակակից եւ ազատամարտի ղեկավար մասնակիցներից մէկը՝ Կարոյ Սասունին, խօսելով 1918թ. զարնանը Հայաստանի վրայ թուրքական յարձակման մասին, գրում է. «Թուրքական բանակի յարձակողականի ուղղութիւնները մեր երեսկայածէն շատ արելի ճարտարութեամբ կը զարգանային: Մէկ թեւը Վանի շրջանէն կառաջանար դէպի պարսկական Ատրպատական(այժմ՝ պարսկական Ադրբեջան, Ռ. Հ.), անկէ անցնելու Զանգեզուր, Ղարաբաղ, Բագու: Միւս թեւը Տրապիզոնի շրջանէն կը մտնէր Արտահան եւ կ'ուղղուէր դէպի Ախալքալակ եւ Ղարաքիլիս: Հայաստանի հիւսիսային բոլոր ճանապարհները կտրելու: Բորչալուի թաթարները կոնակէն պիտի հարուածէին եւ շփոթութեան մատնէին հայութեանը:

Կարսէն յառաջացած թրքական բանակը, Ալեքսանդրապօլը գրաւելէն ետք, երկու թեւի կը բաժանուէր: Առաջինը երկաթուղիի գիծը բռնելով կը մօտենար Սարդարաբաղին, յոյս ունենալով որ Արագածի, Աշտարակի եւ Էջմիածնի թաթարները ապստամբութեան դրօշը պիտի բարձրացնեն եւ թրքական բանակին առջեւ պիտի բանան Երեւանի դռները: Երկրորդ թեւը կը մտնէր Բաշ-Աբարան, որպէսզի Սարդարաբաղի եւ Ղարաքիլիսի հայ բանակները իարմէ կտրէր եւ փոխադարձ օժանդակութեան հնարաւորութիւնները անկարելի դարձնէր:

Թրքական բանակի այս շարժումները թելադրուած էին թաթարական շրջաններու ապստամբութեանց լոյսին տակը եւ կը ձգտէին օղակի մէջ առնել ամբողջ հայութեանը եւ ցեղասպանութիւնը լրացնել Արարատեան աշխարհի մէջ»:

«Այս պայմաններում, - հիմնուելով Ա. Յարութիւնեանի աշխատութեան եւ դիւանական փաստաթղթերի վրայ գրում է Հր. Աւետիսեանը, - Եադուր Շելքի փաշայի հրամանատարութեամբ ստեղծուած «Կարս» զօրախմբի... հիմնական նպատակը Էնէր փաշայի ծրագրի իրագործումն

եր: Նա նախատեսում էր գրաւել ամբողջ Արեւելեան Հայաստանը, դուրս գալ Թիֆլիս, վերահսկել Թիֆլիս-Բաքու երկաթգիծը, շարունակել արշարդ դէպի Բաքու-Գաղստան-Վլադիկաւկազ, Անդրկասպեան երկրներ: Առաջին կորպուսի հրամանատար Քեազըմ Կարաբեքիրին հրամայուած էր Ալեքսանդրապոլի (Գիւմրի)գրաւումից յետոյ ուժերի մի մասը շարժել Ջուլֆա-Թաւրիզ, զաւթել իրանական Ադրբեջանը: Այդ ծրագիրը պէտք է իրականացուէր Մոսուլի շրջանից դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւելք շարժող թուրքական 6-րդ բանակի զօրամասերի օգնութեամբ: Թուրքական վերահսկողութեան տակ էր առնուելու նաեւ Ալեքսանդրապոլ-Նախիջեւան-Ջուլֆա-Թաւրիզ երկաթգիծը... Նախիջեւանի գրաւումով թուրքերը ծրագրում էին...Ջանգեզուրով եւ Ղարաբաղով դուրս գալ Ելիզաւետպոլ(Գանձակ):Շարունակելով իրագործել Էնկեր փաշայի առաջադրած նուաճողական ծրագիրը, Եաղուբ Շէրի փաշան «Կարս» զօրախումբը բաժանելով չորս մասի, իր առջեւ դրել էր ռազմական հեռու գնացող խնդիրներ:

1-ին զօրախումբը յարձակուելով Տաշիրի(Վորոնցովկա) ուղղութեամբ, Ղարախաչ լեռնանցքով դուրս էր գալու Բոլնիս- Խաչէն, Բորչալու, Թիֆլիս: 5-րդ հետեւակային դիվիզիան համագործակցելով Ղազախից շարժող թուրքական զօրքերի հետ՝ գրաւելու էր Թիֆլիսը: Այս գործում նրան աջակցելու էր կովկասեան 11-րդ հետեւակային դիվիզիան:

2-րդ զօրախումբը յարձակուելու էր Ջաջուռ-Սպիտակ-Վանաձոր-Գիլիջան-Ղազախ-Գանձակ (Ելիզաւետպոլ)ուղղութեամբ: Նպատակն էր՝ Ղազախ-Աղստաֆա-Գանձակ գծով հասնել Բաքու: Այստեղ գլխաւոր ուժը կովկասեան 11-րդ դիվիզիան էր՝ լրացուած տեղական մահմեդականներով:

3-րդ զօրախումբը, որի հիմնական կորիզը կովկասեան 9-րդ հետեւակային դիվիզիան էր, յարձակուելու էր Գիւմրի(Ալեքսանդրապոլ)-Ապարան ուղղութեամբ: Նրա խնդիրն էր՝ Ապարանի եւ Աշտարակի վրայով ներխուժել Երեւանը, անհրաժեշտութեան դէպքում պիտի ուղղութիւն վերցնէր դէպի Սպիտակ (Համամլու)-Վանաձոր(Ղարաքիլիսա):

4-րդ զօրախումբը յարձակուելու էր Գիւմրի-Երեւան երկաթգծի ուղղութեամբ՝ Անի-Մարդարապատ-Էջմիածին գծով Երեւանը գրաւելու եւ, ինչպէս Ս. Աֆանասեանն է գրում, 3-րդ դիվիզիայի օգնութեամբ քաղաքը արքանի մէջ առնելու համար: Այստեղ հարուածային ուժը 36-րդ հետեւակային դիվիզիան էր:Այսպիսով՝ 3-րդ եւ 4-րդ զօրախումբերը, որոնց մէջ մտնում էին առաջին բանակային կորպուսի 9-րդ եւ 36-րդ հետեւակային դիվիզիաները, խնդիր ունէին Մարդարապատի եւ Աշտարակի կողմից

ներխուժել Երեւան, աշխարհի քարտեզից ջնջել Հայաստանը...²(ընդգծումն իմն է, Ռ.Հ.):

Ինչպէս հիմնաւորում է պատմաբան Ա. Յարութիւնեանը,«Այսպիսով, Ղարաքիլիսա-Ղազախ ուղղութիւնը գլխաւորն էր, որովհետեւ թուրքերը շտապում էին Ղազախ-Աղստաֆա-Ելիզաւետպոլ գծով հասնել Բաքու... Որ թուրքական արշաւանքի ամենաառաջնակարգ նպատակներից մէկը Բաքուի գրաւումն էր, կասկածից վեր է»³: Նոյն կարծիքին են նաեւ խնդրով զբաղուած գրեթէ բոլոր հայ եւ օտար պատմաբանները: Այսպէս, ադրբեջանցիների համար այդ շրջանի իրադարձութիւնները ռուսերէն շարադրած Ե. Ա. Տոկարժեւսկին յղում է Մոսկուայի բոլշեիկեան բարձրագոյն դեկավարութեանն ուղղուած Ստ. Շահումեանի երկու հեռագրերը, որոնցում բոլշեիկեան դեկավարութիւնից Կովկասի արտակարգ կոմիսար նշանակուած այդ գործիչը զեկուցում է, որ թուրքերը ձգտում են Բաքու մտնել Ջուլֆայ-Ախստաֆա եւ Ղարաքիլիսա-Գիլիջան-Ախստաֆա գծով: Իրօք, 1918 թ. յունիսի 5-ին թուրքական 5-րդ դիվիզիան՝ Միւրսել փաշայի հրամանատարութեամբ Գանձակ հասաւ Բաքում-Ղարաքիլիսա-Ղազախ գծով, միւսը՝ Նազըմ բէյի փոքրաքանակ զօրամասը(7000 զինուոր) Ղազախ մտաւ Ատրպատականով ու Ախստաֆայով⁴: Քանի որ Ղարաքիլիսայինց մինչեւ Բաքու ձգող հայոց դիւցազնամարտերը վիժեցրեցին մայիսի վերջին Բաքու մտնելու թուրքերի ծրագրերը, Գանձակ մտող թուրքական ուժերի ընդհանուր հրամանատար Նուրի փաշան(Էնկեր փաշայի եղբայրը) ստիպուած եղաւ Ադրբեջանի կառավարութիւնը՝ Խան- Խոյսկու գլխաւորութեամբ կազմել Գանձակում:

Հայութեանը բնաջնջելու եւ մեր երկիրը հայերից դատարկելու թուրքերի քաղաքականութիւնը ակնյայտ էր նաեւ օտարների համար:Օրինակ՝ Բաքումի բանակցութիւններում գերմանական առաքելութեան դեկավար, զօրավար Ֆոն-Լոսերը Բեռլին ուղարկած իր մի զեկուցագրում գրում է.«Նոյնիսկ զուտ հայկական շրջանների՝ Ախալքալակի, Ախալցխայի եւ Երեւանի նկատմամբ չափն անցնող թուրքական պահանջները շատ հեռագնայ նպատակ ունեն, այն է՝ Կովկասի բացարձակ տնտեսական կողոպուտը եւ հայերի կատարեալ բնաջնջումը նաեւ Այսրկովկասում: Թուրքական քաղաքականութեան նպատակն է՝ ընդմիշտ տիրել հայկական շրջաններին եւ բնաջնջել հայերին (Ընդգծումներն իմն են,Ռ.Հ.): Թալաաքի ու Էնկերի սրան հակադիր խօսքերն անարժէք են: Պոստում իշխում է հայերի նկատմամբ ծայրայեղ թշնամական մի ուղղութիւն»⁵:

«Աստաշօրէն կարելի է ասել,– գրում է Ղարաքիլիսայի ճակատամարտի վստահելի ու ճշմարտապատում տարեգիր Աւետիս Ահարոնեանը,– թէ ինչ որ է Մարնի ճակատամարտը* Յրանսիայի համար, նոյնն էր Ղարաքիլիսան ու Սարդարապատը Հայաստանի համար: Երբեք մենք չէինք ունենա այսօրուան Հայաստանն իր մէկ միլիոն հոծ հայութեամբ, եթէ չլինէին Ղարաքիլիսան ու Սարդարապատը: Եւ եթէ թուրքերն ստիպուած եղան փոխանակ Երեւանի վրայ քայլելու, ճամբան ծռել եւ արշաւել դէպի արեւելք, եթէ նրանք համակերպուեցին ստորագրել Բաթումի դաշնագիրը՝ ճանաչելով փոքրիկ հայ հողամասի անկախութիւնը եւ զիջան Պոլսում գրոյցի նստել մեր պատուիրակութեան հետ, դա ամբողջապէս պարտական ենք Ղարաքիլիսայում եւ Սարդարապատում մարտնչող մեր հերոսական բանակին»⁶: Մէկ այլ առիթով Աւետիս Ահարոնեանը գրում է. «Հայկական ամբողջ ազատամարտի եւ մասնաւորապէս Ղարաքիլիսայի բախտորոշ ու արիւնայեղ ճակատամարտի ոգին ու մեծութիւնը ըստ արժանոյն գնահատելու եւ ըմբռնելու համար հարկ է գրեթէ կրօնական երկիրաճութեամբ մօտենալ փաստերին: Խղճմտօրէն եւ առանց կանխակալ, ամբոխամիտ կարծիքներ նկատի առնելու, կշռադատել ստեղծուած տարապայման կացութիւնն ու անսահման դժուարութիւնները քաղաքական, նիւթական, բարոյական– որոնք ամէն մի ռազմական բախում դարձնում էին հերոսութիւն՝ հայ բանակի, եւ մարտիրոսութիւն՝ հայ ժողովրդի համար:

Այդ տեսակետից Ղարաքիլիսայի պատմական կռիւը հայ-թրքական պատերազմի ամենէն բնորոշն է թէ՛ իր ծաւալով ու տեսողութեամբ եւ թէ՛ մանաւանդ այն առանձնայատուկ, դժխեմ զուգադիպութեամբ բարոյալքիչ ու աւերիչ պայմանների, որոնք միշտ այնպէս ծանրացան հայ մատաղ ու անձնուրաց բանակի ուսերին (*Ընդգծումն իմն է, Ռ. Հ.*): Եւ յետոյ հոգեբանական ահաւոր մղձաւանջային մթնոլորտը, որի մէջ կատարուեց Հայոց աշխարհի մեծագոյն ընդունումը իր դարաւոր թշնամու եւ իր դժխեմ ճակատագրի դէմ: Խօսքն այն սարսափահար, սովալլուկ գաղթականների բազմութեան մասին է, որոնց խղճալի դիրքը, աղիողորմ լացն ու ողբը, ճիչերն ու օգնութեան աղաղակները, հայ բանա-

* ճակատամարտ ֆրանկո-անգլիական եւ գերմանական զօրքերի միջեւ ֆրանսիական Մարն (Մառն) գետի մօտ 1914 թ. սեպտեմբերի 5–12-ը: ճակատամարտին երկու կողմերից մասնակցում էր մօտ երկու միլիոն մարդ: Մարնում ֆրանկո-անգլիական բանակների յաղթանակը վճռեց առաջին աշխարհամարտի ճակատագիրը յօգուտ Անտանտի, Յրանսիան ազատուեց գերմանական գրաւումից:

կի սրտի վրայ մտտում էին թանձր ձիւնի պէս եւ սպաննում ամէն մի ոգեւորութիւն եւ ռազմական խոյանք: Գաղթականութիւնը միշտ մեր բանակի ոտքերին ու բազուկներին կաշկանդիչ շղթան եղաւ, եւ նրա արիւթեան բեկումը⁷: Հայ ցեղի լինել-չլինելու խնդիրն էր վճռուում Ղարաքիլիսայի առջեւ»⁸:

Ընդ որում՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ Ա. Ահարոնեանը՝ իր գրչի ու հաղորդելիք տեղեկութիւնների հանդէպ մեծ պատասխանատուութիւն ունեցող մեր նշանաւոր գրողն ու ազգային գործիչը, «Աւարայրի ոգեկոչումը» երկի՝ Ղարաքիլիսայի ճակատամարտը ներկայացնող հատուածը շարադրելիս օգտուել է նաեւ Գ. Նժդեհի յուշերից, որը վերջինս Ահարոնեանին էր տրամադրել նրա խնդրանքով:

Այդ առիթով Ա. Ահարոնեանը գրում է. «Աշխատանքիս այս վերջին մասը կազմելիս ինձ մեծապէս օժանդակեց քաջածանօթ ու հայրենապաշտ ռազմիկ Գարեգին Նժդեհը, որ շատ սիրալիք կերպով ինձ տրամադրեց իր գրաւոր յուշերը: Այդ աջակցութիւնը շատ քանկազին եղաւ ինձ, վասնզի Գ. Նժդեհի Ղարաքիլիսայի ճակատամարտի սկզբից մինչեւ վերջին վայրկեանը արիասիրտ մարտնչողներից մէկն էր»⁹: Սա նշանակում է, որ Ա. Ահարոնեանը մեծապէս վստահում էր Նժդեհի անաչառութեանը: Դրա պերճախօս վկայութիւններից մէկն էլ այն է, որ Անդրանիկին շատ բարձր գնահատելով հանդերձ (նրա մասին մի ամբողջ աշխատութիւն է գրել)՝ Ա. Ահարոնեանը, որպէսզի կարողանա պատասխանել այն հարցին, թէ ի՞նչն էր պատճառը, որ 2700 լաւ զինուած զօրաջոկատ ունեցող Անդրանիկը օգնութեան չը հասաւ Ղարաքիլիսայում հերոսացող հայոց զօրքին, վկայակոչում է ընդամենը երկու հեղինակութեան՝ Գ. Նժդեհին եւ զինուորական ժամանակագիր, զօրավար Գ. Դորդանեանին. «Հայ ազատագրական պատերազմի խոշոր մարտիկին վերագրուած ընթացքը առնուազն առեղծուածային է եւ կարօտ խղճմիտ լուսաբանութեան: Անդրանիկ քմայքոտ ու դժուարահաճ ու բռուն անհատականութեան տէր անձն էր, այդ յայտնի է: Ի միջի այլոց պատմում են, որ նա չափազանց դժգոհ՝ որ զօր. Նազարբեգեան ճակատի հրամանատարութիւնը յանձնել է զօր. Բէյ-Մամիկոնեանին, բացականչել է.

– Ես զօրավար Վարդան Մամիկոնեանը կը ճանչնամ, ես Բէյ-Մամիկոնեան զօրավար չեմ ճանչնար:

Հնարաւոր¹⁰ է միթէ, որ Անդրանիկ սոսկ այսպիսի պատճառով, մի տեսակ խռովկանի պէս ճակատն ու հայ ժողովրդի բախտը լքեր հեռանար: Չափազանց ծանրակշիռ քայլ է այս, որպէսզի Անդրանիկի պէս մէկը թոյլ տար իրեն կատարել: Մութ է այս կէտը. դժուար է վճռական խօսք

ասել. քող այդ անի սպագայի անաչառ պատմաբանը: Առայժմ ես կը բաւականանամ առաջ բերելով երկու վկայութիւններ. մէկը անմիջական ականատեսի, ինչպէս Գ. Նժդեհ, եւ միւսը զինուորական ժամանակագիր գօր. Գ. Կորզանեանի.

«Ի գուր սպասեցինք Անդրանիկին,-ասում է Գ.Նժդեհ իր յուշերում,- նա չկար եւ չպիտի յայտնուէր: Նրա ունեցած մի քանի հազար զինուորների մէկ եօթերորդն անգամ բաւական պիտի լինէր կտրելով երկաթուղու գիծը՝ զալ ու քառել Ղարաքիլիսան եզերող արեւելեան բարձունքներին: Այդ անելով նա ոչ թէ միայն ձախողանքի մատնած կը լինէր մեր զօրքերը Ղարաքիլիսայի մէջ շրջապատելու թշնամու փորձը, այլ եւ մեզ հնարատրութիւն կընձեռէր ռազմագիտական արցանի մէջ առնելու թշնամուն, դէպի Ալեքսանդրապոլ շարտելու նրան»: Այա Նժդեհը պատասխանելով Անդրանիկի չքննողանքին՝ շարունակում է. «Հինգ օր վերջ, ասում է Անդրանիկը («Զօր. Անդրանիկը կը խօսի», էջ 22)¹⁰, Քարաքիլիսէն հեռաձայնով իմացա Մանասեանէ, թէ վերադարձած են Քարաքիլիսէ եւ ոչ մէկ թուրք չէ մտած քաղաքը: Երեք ժամ վերջն ալ հրաման ստացա Նազարբէկեանէ պահել երկաթուղիին գիծը: Յետոյ հեռաձայնով կ'իմացնէ ինձ գոմիսէր Մանասեանը, թէ հայ զինուորները ոգեւորուած կը հալածեն թշնամին Քարաքիլիսէի երկաթուղիի ուղղութեամբ: Անմիջապէս կիմացնեմ, որ թշնամիի նահանջը կեղծիք է, խորհուրդ կուտամ չառաջանալ կեղրոնով ու երկու թեւերն ամուր պահել միշտ, կեղրոնէն չվախնալով բնաւ»:

«Երկաթուղու գիծը ռազմագիտօրէն պաշտպանելու համար,-շարունակում է Նժդեհն իր յուշերում,-Անդրանիկին պէտք էր գրաւել մատնանշած լեռնաշղթան, որպէսզի իր թիկունքում թողնէր երկաթուղին եւ իշխող բարձունքներէն սպառնալիօրէն կախուէր թշնամու գլխին: Նրա կրաւորականութիւնը սակայն, կը մնար անհասկանալի: Նրան տեղեկացնում են թէ «հայ զինուորները ոգևորուած կը հալածեն թշնամին», բայց եւ այնպէս նա շարունակում է նստած մնալ Գսեղում: Աւելին կայ. երբ Մանասեանը նրան հաղորդում է մեր յաղթութեան լուրը, նա պատասխանում է. «Խորհուրդ կը տամ չառաջանալ կեղրոնով եւ երկու թեւերը ամուր պահել միշտ»: «Տեսնում էք, որ Անդրանիկը զիտէ, թէ թշնամին մեր թեւերն առնելով, պիտի փորձէր մեզ գերեզմանել ձորում: Նա կը հասկանար այդ, բայց եւ այնպէս կրաւորական վիճակում կը պահէր իր հրամանատարութեան յանձնուած ոյժերը: Այս դէպքերից երեք տարի յետոյ Փարիզում հրատարակուած «Զօր. Անդրանիկը կը խօսի» գրքոյն մէջ խեղաթիւրելով դեռ այնքան քարն պատմական իրողութիւնը,

ասում է. «Առաջին օրուան չորս ժամ կոխէն վերջ, հետեւեալ առաւօտ կռիւր կը վերսկսի եւ երեք ժամ յետոյ կ'իմանամ, թէ Քարաքիլիսէն յանձնած են արդէն եւ նահանջած դէպի Գիլիջան»:

«Կարիք չեմ զգում,-պատասխանում է Նժդեհ,- վկայութեան կոչել մեր նորագոյն պատմութեանը, Անդրանիկի ասածները սրբագրելու համար: Ղարաքիլիսէն անմահացնող հայ զօրքը ոչ թէ «հետեւեալ առաւօտ» նահանջեց, ինչպէս կը գրէ Անդրանիկ, այլ չորրորդ օրը երեկոյեան: Անդրանիկ երկրորդ օրը առաւօտեան կիմանայ թէ «Գարաքիլիսէն յանձնած են արդէն»:

«Ո՞վ, ի՞նչ ճամբով,-բացականչում է Նժդեհ,- կարող էր այդ ստայօղ լուրը հաղորդել նրան, այն էլ մեր ամենամեծ յաջողութեան օրը: Անդրանիկ լռում է այդ մասին:

«Փախչողները գետը թափած են միլիոնաւոր փամփուշտ», ի միջի այլոց գրում է Անդրանիկ: Եւ այդ այն զօրքի մասին, որ ռազմամթերքի սուր կարիքն զգաց կռուի հենց առաջին օրը:

Մեր մեծ ճակատամարտից յետոյ, առանց սպարապետի (Թ. Նազարբէկեանի, Ռ.Հ.)կարգադրութեան, անցնում է(Անդրանիկը)Գիլիջան, ուր «ոչ ոք չկայ, բոլորն ալ փախած են»: Եւ այդ այն ժամանակ, երբ մեր զօրամասերը խաղաղ դիրքապահութիւն կը տանէին: Հասկանում են Անդրանիկին, նա ճգնել է արդարացնել իր ունեցած անգործութիւնը Ղարաքիլիս եւ Մարդարապատի օրերին: Խորապէս ցաւում են այն արտայայտութեան համար, որ նա թոյլ է տուել այն մահուան բանակի մասին, որն իր հերոսական խոյանքով հիացումի խօսքեր խլեց Վեհիք եւ Խալիլ փաշաներից:

Կռուի երրորդ օրն էր եւ մեր զօրքը յաճախ իր հայեացքը կը դարձնէր դէպի Գուգարաց լեռները Անդրանիկի սպասումով: Նա չկար. նա սովորութիւն ունէր գործելու մեկուսի: Արդեօք չէ՞ր գիտակցում, թէ մի գօրամասի ընթացքը դառնում է կորստաբեր, երբ այդ վերջինը հրաժարում է իր օրգանական աշխատակցութիւնը բերել իր բանակին, երբ խզելով իր կապը մայր բանակի ընդհանուր գործառնութեան հետ, սկսում է գործել առանձնակի: Գ. Նժդեհ¹¹»: Աւ.Ահարոնեանը բերում է նաեւ գօր. Գ.Կորզանեանի վկայութիւնը, որ նա հրատարակել էր Փարիզում տպագրած իր մի ֆրանսերէն ուսումնասիրութեան մէջ. «Ահա թէ ի՞նչ է գրում այդ ցաւօտ առեղծուածի մասին գօր.Կորզանեան. «Զօր.Անդրանիկ, որ բռնել էր վորոնցովկայի շրջանը, պահպանում էր հայկական բանակի աջ կողմ...Զօր. Անդրանիկ ի գօրու չեղաւ թուրքերի ձախ թելի դէմ կռուել, որոնք նրա դէմ կենտրոնացրել էին ամբողջ իրենց 5-րդ դիվիզիոն»:

նը: Կարաղաջի լեռնանցքի բուռն կռիւներից յետոյ Ալէքսանդրապոլ-
Թիֆլիս տանող ճամբի վրայ, Անդրանիկ ստիպուած եղաւ քաշուել Մա-
յիսի 19-ին դէպի Ջալալօղլի... Մայիս 30-ին Անդրանիկ իր զօրաբաժի-
նով հասաւ Դիլիջան»: «Ու՞ր եւ եւ ի՞նչ էր անում Անդրանիկ մայիսի 19-
ից 30-ը, շարունակում է Ա. Ահարոնեանը, - ահա այս է առեղծուածը, որ
մնում է ապագայ պատմութեան անաշտ քննութեան»¹²:

Թ. Նազարբէկեանը նոյնպէս մատնանշել է Անդրանիկի վերոյիշեալ
տարօրինակ պահուածքը: Իր զօրամասով ՀՀ սահմաններից հեռանալու
մասին Անդրանիկի 1918 թ. յունիսի 4-ի մեղադրանք - հեռագրին ուղղու-
ած պատասխանում Նազարբէկեանը բաւական վրդովուած գրում
է. «Մտանալով Ձեր հեռագիրը յայտնում եմ, որ դա ինձ չի վիրաւորում,
որովհետեւ անյաջողութեան զլխաւոր յանցատրներից մէկը ես համա-
րում եմ Ձեզ եւ ձեր զօրամասը: Ունենալով այնպիսի մեծ ուժ, ինչպիսին
Ձերն էր, միամիտ է պաշարման վտանգի եւ կորստի շտաբի հետ կապ
չունենալու պատճառաբանութիւնը: Ջալալօղլուց (այժմ՝ Աշոցք, Ռ.
Հ.) նահանջեցիք, ունենալով Ձեր դիմաց տաճկական մի գումարտակ հե-
տեակ զօրք եւ որով մերկացրիք Ղարաբախի զօրամասի շատ կա-
րեւոր քեր: Նման երեւոյթ տեղի ունեցաւ նաեւ Էրզրումի ու Սարիղամիշի
տակ: Նախքան այդպէս անթոյլատրելի կերպով մեղադրելիք ձեր ղեկա-
վարին, որի անձնաւորութիւնը եւ հայացքները անցեալի փորձից շատ
լաւ գիտէք, պէտք էր որոնել ամօթալի հաշտութեան (նկատի ունի Բաբու-
մի 1918 թ. յունիսի 4-ի հաշտութիւնը թուրքերի հետ, Ռ. Հ.) իսկական յան-
ցատրներին ու պատճառները: Պատուաւոր հաշտութիւն մենք ստանալ
չէինք կարող այն միջոցին, երբ մեր ժողովուրդը ենթարկուած էր բռնութե-
ան ու կողոպուտի, եւ [երբ իմ] մարտական հրամանները ինձ ենթարկող
հրամանատարների կողմից չէին կատարուում (նկատի ունի Անդրանի-
կին, Ռ. Հ.): Պատմութիւնը կը քննի ու կը դատապարտի իսկական յան-
ցատրներին, որոնց պատճառով Հայոց Ազգային խորհուրդը ստիպուած
եղաւ ընդունել ստորագուցիչ հաշտութիւն»¹³:

Իհարկէ, այստեղ հարկ է նշել, որ զօրքի մէջ բաւարար հեղինակու-
թիւն չունեցող Բէյ Մամիկոնեանին հապշտապ ճակատի հրամանատար
նշանակելը Թ. Նազարբէկեանի ճակատագրական սխալն էր (Նազար-
բէկեանն այս քայլը ստիպուած կատարեց, քանի որ զօրավար Արեշեա-
նը ճակատը լքել, Վանաձորի վրայով հեռացել էր Թիֆլիս), ինչը մեծա-
պէս ազդեց Ղարաբախի ճակատամարտի վերջնական ելքի վրայ:
Բացի այդ՝ չը պիտի մոռանանք, որ Ղարաբախի ճակատի հրամա-
նատարութեան բացարձակ մեծամասնութիւնը Բէյ-Մամիկոնեանի գլ-

խաւորութեամբ այնքան էին հաշտուել պարտութեան ու նահանջի հետ,
որ, ինչպէս կը տեսնենք ստորեւ, նրանք զօրքին նահանջի հրաման տու-
եցին նաեւ մայիսի 27-ի փառաւոր յաղթանակի յաջորդ օրը՝ թէւ ռազ-
մամթերքի պակասի պայմաններում իսկ հնարաւոր էր երկարած գել դի-
մադրութիւնը:

Ղարաբախի ճակատամարտի դերը վճռորոշ է համարել նաեւ
Յովհ. Քաջագունին՝ իր «Ղաշնակցութիւնն անելիք չունի» հանրայայտ
գրքում եւ ուրիշ հայ եւ օտար ժամանակակիցներ, որոնք իրենց վկայա-
կոչումներում Ղարաբախի միշտ դնում են Սարդարապատից առաջ եւ
յիշատակում միասին: Ճակատամարտի մասնակից Սուրէն Մելիքեանն
օրինակ, գրում է. «Ապագայում պատմաբաններ հիացումով կ'արձա-
նագրեն Ղարաբախի ու Սարդարապատի կռիւները, որ հայ ազգը աս-
պարէզ հանեց իր երիտասարդութեան ծաղիկը, ուր նա յանկարծակի
երեւան ելաւ իբրեւ մարտական ժողովուրդ: Աշուղները կ'երգեն դիցագ-
նական երգը մեր նորկազմ զօրքին, որ Ղարաբախում եւ Սարդարապ-
ատում քսան անգամ սուիներով յարձակում կատարեց թուրքերի վրայ...
Եւ շատերը նրանցից, որ մասնակցել են այդ ճակատամարտերին կը
պատմեն... թէ միմիայն Ղարաբախի եւ Սարդարապատի կռիւներից յե-
տոյ էր, որ հնչեց Հայաստանի ազատութեան ժամը»¹⁴:

Կովկասում թուրքական զօրքերի հրամանատար Վեհիբ փաշան, որը
թուրքական բանակը ղեկավարել է նաեւ Ղարաբախի մասին գրում է. «Բացա-
ռիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմութեան մէջ: Ղարաբա-
խի մօտ հայերը ցոյց տուեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի
լաւագոյն զինուորները»¹⁵: Ղարաբախի վճռական նշանակութիւնը
ընդգծուած է նաեւ այն հանգամանքով, որ թէւ Երեւանից 20 կմ վրայ
գտնուող թուրքերը մայիսի 22-ին Եղեգնուտի (այն ժամանակ՝ Ղամշլու)
մօտ կրելով ջախջախիչ պարտութիւն, նահանջեցին, բայց օգտուելով
այն հանգամանքից, որ «հայկական զօրքերը Սարդարապատը գրաւե-
լուց յետոյ թուլացրել էին իրենց հետապնդումը, ուշքի եկան եւ պաշտ-
պանութեան անցան Արաքս կայարանի եւ նրա հիւսիս-արեւելեան բար-
ձունքների բնագծում: Պաշտպանութեան համար տեղանքը, անշուշտ,
նպաստաւոր էին: Սիիկեանը մի քանի անգամ փորձեց ճակատային
գրոհով դուրս մղել թշնամուն, սակայն ապարդիւն» (Ա. Յարութիւնեան,
նշ. աշխ., էջ 178,): Աւելին՝ նրանք մայիսի 23-ին իրենց բանակը բաժա-
նեցին երկու մասի. մի մասը Փամբակի ձորով շարժեցին Ղարաբախի
վրայ, միւս մասը՝ դէպի Ապարան՝ անցնելու Երեւանի քիկունքը: Մա-

յիսի 22-ից 25-ի ընթացքում Սարգարապատի ճակատի մի քանի էական կետերում, իսկ մայիսի 24-ից 26-ը՝ Ապարանի ուղղութեամբ (մերոնք մայիսի 24-ին չը դիմանալով հիսսիսային կողմից Ապարանի վրայ թուրքերի յարձակմանը՝ յետ էին քաշուել), մեր զորքերի յարձակումները արդիւնաւետ չէին, ինչը շեշտում են նաեւ ճակատամարտերի հրամանատարներ, մասնատրապէս զօրավար Թ. Նազարբէկեանը*, Սարգարապատի ճակատի սպայակոյտի պետ, փոխգնդապետ *Շնէուրը* («Սարգարապատի կռիւների նկարագրութիւն» վերնագրով մի ռուսերէն արժէքատր զեկուցագրի մէջ), հայկական հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Արարատեանը եւ ուրիշներ, որոնց զեկուցագրերը չր. Աւետիսեանն ամբողջովին մէջքերել է իր նշուած գրքի «Յատելուած»-ում (էջ 195-201, 192-194):

Այսպիսով՝ աղբիւրների միահամուռ վկայութեամբ հայկական զօրքը վճռական ու յաղթական յարձակումը վերսկսեց Սարգարապատում՝ միայն մայիսի 26-ի լուսաբացին, Ապարանում՝ մայիսի 27-ին եւ դա շնորհիւ մայիսի 24-ից 27-ի ընթացքում Ղարաքիլիսայի ճակատամարտում թուրքերի հանդէպ հայ զինւորի տարած փայլուն յաղթանակներով: Քանի որ եթէ թուրքերը 1918 թ. մայիսի 24-27-ին Ղարաքիլիսայում դիմադրութեան չը հանդիպէին, ապա Սարգարապատի, նաեւ Ապարանի մայիսի 26-29-ի վերջնական յաղթանակները չէինք ունենալու, քանի որ Դիլիջանից ու Ապարանից թուրքերի անկասելի մուտքը երեւան եւ սբ. Էջմիածին կղաւնար անխուսափելի:

Ղարաքիլիսայի մեր զօրքի եռօրեայ հերոսականը ունեցաւ նաեւ միջազգային նշանակութիւն: Ղարաքիլիսայի եւ Սարգարապատի ճակատամարտերը թուրքական ներխուժումից փրկեցին ոչ միայն Վրաստանն իր մայրաքաղաքով, այլ յատկապէս Բաքուն, որը փաստօրէն հայկական հանրապետութիւն էր: Ուստի այն վերացնելու եւ Բաքուի նաւթին տիրանալով Կովկասը նուաճելու սեւեռուն նպատակով էր թուրքական զօրքը շարժում այդ քաղաքի վրայ: Ա. Յարութիւնեանը այս մասին գրում է. «...Իսկ մի՞թէ պարզ չէ, որ եթէ Սարգարապատում եւ Ղարաքի-

*Նա իր օրագրութեան մէջ նշում է, որ մայիսի 24-ին թեւ. մերոնք Արագած կայարանի մօտ հակառակորդին հարկադրել էին երկաթուղու երկայնքով նահանջել, բայց «դէպի Սարգարապատ եւ Արաքս են շարժուում թշնամու մեծաքանակ խմբեր»: Բայկական առանձին կորպուսի գործողութիւնների համառօտ նկարագրութիւնը 1917 թ. դեկտեմբերի մէկից մինչեւ 1918 թ. օգոստոսի մէկը, Բանբեր Դայաստանի արխիւների, Երեւան, 1992 թ., թիւ 3, էջ 143/:

լիսայում հայկական զօրքերը չը կաշկանդէին, չը կազմալուծէին թուրքական դիւիզիաների հարուածային ուժերը, նրանք յաղթական արշաւով կը յայտնուէին Ղազախում, Ելիզաւետպոլում եւ այն ժամանակ Կորգանովի բանակը (նկատի ունի Բաքուի կոմունայի զօրքերի գլխատր հրամանատարին: Ռ. Հ.) Զիւրդամիլի տակ թուրքական 5-րդ դիւիզիայի փոխարէն կընդհարուէր թուրքական մի քանի դիւիզիաների հետ: Աւելին, այդ դիւիզիաներն արեւի շուտ կը յայտնուէին Բաքուի մատոյցներում, քան Շահումեանն ու Կորգանովը կը հասցնէին կազմալուծել կոմունայի զօրամասերը (որոնց զինուորների ու հրամանատարական կազմի 90-տոկոսը հայեր էին, Ռ. Հ.): Այդ նոյնը կարելի է ասել նաեւ Թիֆլիսի մասին: Թուրքերին հայկական զօրքերի ցոյց տուած դիմադրութիւնը... կանխեց նրանց ներխուժումը... Վրաստանի մայրաքաղաք: Վրացիները հնարատրութիւն ստացան բանակցութիւնների գնով յամոզել զերմանացիներին եւ թուրքերին, որպէսզի ռազմական էշելոնները Թիֆլիսով չանցնեն: Սակայն, եթէ թուրքական այն դիւիզիաները, որոնց մարտունակութիւնը ջարդուեց Սարգարապատում եւ Ղարաքիլիսայում, իրենց լիարժէք կազմով յայտնուէին Սաղախլո կամ Նաւթլու կայարաններում, ապա հազիւ թէ որեւէ մէկը կասկածէր, որ նրանք, արհամարհելով բոլոր համաձայնագրերը, տակնուվրայ կանէին Թիֆլիսը: Կրկնում ենք, Թիֆլիսը զերծ մնաց թուրքական արշաւանքից՝ թուրքերին Ղարաքիլիսայում, Սարգարապատում եւ Բաշ-Ապարանում հայկական զօրքերի հասցրած հակահարուածի շնորհիւ»¹⁶: Աւ. Սահրոնեանն էլ նշում է. «Հայ ժողովուրդը չափազանց շատ զոհեր յանձն առաւ դաշնակից պետութիւնների կողքին, բայց այն, ինչ նա կատարեց Բազուի ճամբին եւ Բազուի շուրջն իր գործնական արժէքով, զերազանցում էր բոլոր նորաստեղծ պետութիւնների արածները՝ յօգուտ համաձայնական (դաշնակից, Ռ. Հ.) պետութիւնների: Շնորհիւ հայ զօրքերի հերոսական դիմադրութեան, կենտրոնական պետութիւններն ու Թուրքիան Բազուի քարիտին տիրացան առնուազն կէս տարի արեւի ուշ. եւ սրա հետեւանքն ահագին եղաւ իրենց պարտութեան պատճառների մէջ: Ահա թէ ինչ է գրում Գերման սպայակոյտի պետ զօրավար Էր. Լիտենդորֆ. «Բազուի քարիտը կարող էր մեզ օգնել պայմանով, որ մեր ձեռքն անցնէր այն: Գերմանիայում խիստ պակաս էր կարբուրան (carburant) եւ մենք չափազանց նեղն էինք ձմրան լուսատրութեան համար... Մեր 7-րդ բանակի յարձակողականից յետոյ կարբուրանի մեր պաշարը վերջացել էր... Ուկրաինայի երկաթուղին նոյնպէս քարիտի պէտք ունէր: Անհնարին էր կատարուած Ռումինիայից քարիտը հանելու համար եւ սակայն յոյս չկար մեր կարի-

քը լրացնելու: Այժմ այս հնարարը էր համարում. եթէ մենք այն բերեինք Անդրկովկասից, մանաւանդ Բագուից, եւ եթէ կազմակերպուէր փոխադրութեան գործը... Եւ վճռական հարց էր, սակայն, թէ ինչպէ՞ս հասնել Բագու ...» (Լիւտենդորֆ. Յիշողութիւններ, էջ 287-297, հատոր Բ)՝:

Վճռական ճակատամարտերի նախօրէին իրավիճակը ողբերգակաճօրէն անյուսալի էր եւ բոլոր ժամանակակիցների կարծիքով՝ յատկապէս Ղարաքիլիսայում թուրքերի դէմ կռուելը բացառում էին բոլորը: Զինուորական ու քաղաքացիական ղեկավարութիւնը, զօրքն ու ժողովուրդը միահամուռ այն կարծիքին էին, որ կռուելն անհնար է, որ փրկութիւնը նահանջելը, փախչելն ու թուրքերին յանձնուելն է: Այսպէս, երբ թուրքերը 1918թ. փետրուարի 13-ին գրաւեցին Երզնկան, 27-ին՝ Էրզրումը, ապրիլի 10-ին՝ Մարիղամիշը, ապրիլի 25-ին՝ Կարսը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը, Արեւմտահայաստանից, Երզնկայից, Էրզրումից, Կարսից ու Ալեքսանդրապոլից դէպի Ղարաքիլիսա-Դիլիջան փախչող բազմութեան քանակը ժամանակակից-ականատեսը հաշում է կէս միլիոն¹⁸, ամենուր տիրում էր համատարած խուճապ եւ յուսալքում, ոչ մէկը չէր հուատում թէ հնարարոր է կռուել ու փրկուել: Դեռ թուրքերը Դիլիջան չը հասած՝ ժողովրդի մէջ լուրեր էին տարածել, թէ թուրքերը գրաւել են նաեւ Դիլիջանը, որ կռուելը անիմաստ ու կործանարար է, որ փրկութիւնը սպիտակ դրօշով թուրքերի ողորմածութեանը ապաւինելը, թշնամուն անվերապահ հնազանդութիւն եւ հպատակութիւն յայտնելն է:

Տասնեակ վկայութիւններից բերենք մի քանիսը:

Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետ Մմբատեանը, որն իր խնամքին յանձնուած գիւմրեցի փախստականներով Գիւմրիից Վանաձոր էր հասել 1918 թ. մայիսի 16-ին, Գէորգ Ե Վեհափառին յղած իր զեկուցագրում եւ յետագայում Գիւմրիի Ս. Աստուածածին եկեղեցու միաբան, Ամբակում քահանայ Տէր-Գէորգեանի, նոյն եկեղեցու երեսփոխան Յ. Էլբակեանի եւ ս. Փրկիչ եկեղեցու երեսփոխան Յակոբ Էրիւմանեանի հետ ստորագրած մէկ այլ զեկուցագրում այսպէս է նկարագրում վիճակը. «Մի սոսկալի պատկեր էր ներկայացնում Ղարաքիլիսան: Ամբողջ գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի շրջանի, մեծ մասամբ դուրսը, բաց դաշտում, մնացել էր քաղցած, անձրեւի տակ: Մարդիկ, անակնկալի գալով, չէին կարողացել մինչեւ անգամ հաց վերցնել, նոյն իսկ փողերն էին մոռացել եւ ոսկիները...»

Այդ օրերին սկսեցին երկարատեւ անձրեւներ տեղալ ամբողջ Շիրակի եւ Փամբակի, Լոռայ եւ Դիլիջանի շրջաններում: Ժողովրդի

առանց այն էլ ծանր դրութիւնը այժմ աննկարագրելի դարձաւ, ամբողջ Կարսի եւ Աղեքսանդրապոլի ժողովուրդը հաւաքուել էր փոքրիկ Ղարաքիլիսայի մէջ: Դէպի Թիֆլիզ շատ դժուարացել էր գնացքների երթելուութիւնը: Ղազախի թուրքերը Մաղախոյում կտրել էին ճանապարհը եւ թալանում ու սպանում էին դէպի Թիֆլիզ գնացողներին, առեւանգում աղջկերանց, կանանց, ուստի եւ գնացքները շատ դժուար էին բաց թողնում Ղարաքիլիսայից դէպի Թիֆլիզ: Այդ պատճառով թէ Ղարաքիլիսան ի՞նչ էր ներկայացնում՝ չէ կարելի գրի առնել: Մարդիկ միմեանց վրայ թափուած էին ձկան պէս. ոչ մի դատարկ անկիւն չէր մնացել, ժողովուրդի մեծ մասը դուրսը, փողոցներում, հրապարակներում էր մնացել: Իսկ անձրեւը տեղում էր ու տեղում: Փողոցների ցեխը մարդու մինչեւ սրունքներն էր հասնում, եթէ չափազանցութիւն չի լինի ասելը... Մայիսի 4-ին (նոր տոմարով՝ 17-ին, Ռ. Հ.:) ...Մամարցեւը արցունքն աչքերին մեզ խնդրեց խրատ կարդալ ու յորդորել զինուորներին, որ իրենց դիրքերում մնան ու չը փախչեն: Հաւաքելով բոլոր զինուորներին յորդոր կարդացիւնք, թէ եւ ամենքի երեսին էլ անվճռականութեան արտայայտութիւն կար, կարծէս ուզում էին ասել թէ՛ հենց որ հեռանաք, այնուամենայնիւ մենք փախչելու ենք... Նալբանդի մօտովն անցնելիս տեսանք, որ խեղճ Մամարցեւի զինուորներից մէկն էլ չէր մնացել. բոլորն էլ փախել էին. ուստի եւ ինքն էլ գնացել էր:»¹⁹: «Սոսկալի էր վիճակը Ղարաքիլիսայում, գրում է դէպքերին ականատես Իրազեկը (Յակոբ Տէր-Յակոբեան, Ռ. Հ.), շփոթ եւ յուսահատութիւն: Ամենքը իրենց գլուխները կորցրած՝ անյուսօրէն վաղուայ ապագային էին նայում: Անգամ զօրքը խուճապի մատնուած, դարձել էր մէկ խուճան, ոչ կարգ ու կանոն էր ճանաչում, ոչ էլ մեծ ու փոքր: Վրաստանը դարձել էր իսկական Աւետեաց երկիր ամենքի համար եւ ամեն ոք մի գերագոյն մտահոգութիւն միայն ունէր՝ իրեն մի կերպ Վրաստան գցել... Յիշում են՝ վերջին գնացքներից մէկն էր գնում, կարծես՝ ամենավերջինը: Անձրեւտ օր էր եւ ջուրը հեղեղի նման թափում էր երկնքից: Անհամար ժողովուրդը կայարանում խռնուած՝ իրարանցման մէջ էր: Ով որ ճարպիկ էր՝ կարողացել էր տեղ բռնել գնացքի մէջ-վագոնում, պլատֆորմների ու աստիճանների վրայ, վագոնների կտրին, ամեն տեղ: Ասեղ գցելու տեղ չկար: Նստել կամ կանգնել էին իրար խիտ առ խիտ կպած, տակառում դարսուած ձկների պէս: Յանկարծ նրանց չար բախտից երկիւնքը չափազանց ուժգին որոտաց: Լեռների բազմապատիկ արձագանգն էլ հետը միախառնուելով՝ ստացուեց մի սոսկալի

0525

պայքիւն, թնդանոթի որոտի պէս: Խուճապահար բազմութիւնը մի թոպէ կարծեց, թէ տաճկական թնդանոթները գոռացին: Ինչ սոսկալի տեսարան- լաց, աղմուկ, աղաղակ: Շատերը վագոնների կտորներից իրենց վայր թափեցին եւ այսահարի պէս վազեցին այս ու այն կողմ, իրենք էլ չիմանալով թէ ուր»²⁰: Իսկ Լեոն, որը Բաքումում Հայոց Ազգային խորհրդի եւ թուրք կառավարութեան միջեւ ընթացող հայ-թուրքական հաշտութեան խորհրդածողովի խորհրդակցանք էր եւ քաջատեղեակ էր իրադարձութիւններին, գրում է. «Ժողովուրդը խելակորոյս փախչում էր դէպի Ղարաքիլիսա, լցնում նրա ձորն իր անասուններով, սայլերով: Փախչում է հայկական զօրքը: Գեներալ Նազարբեկովը, դրանց հրամանատարը, նահանջելով Գիլիջան, յուսահատական հեռագիրներ էր ուղարկում Ազգային Խորհրդին, զանգահարում էր, թէ իր մօտ մնացել են միայն երեք հարիւր հոգի եւ իրեն մնում է գերի ընկնել թուրքերի ձեռքը»²¹:

Վանաձորի հոգեւոր հովիւ Խորէն աւագ քահանայ Խանգաղեանն իր յուշերում այսպէս է նկարագրում խնդրոյ առարկայ գաղթը. «Ո՛չ մի տեղ ընդդիմութեան չը հանդիպելով կամ շատ աննշան (Ղարսի տակ)՝ թուրքերը...անցան Ախուրեան գետը եւ ամբողջ Ալեքսանդրապոլը շրջակայ գիւղերով թաղեցին իրենց սուր մագիլների մէջ: Շարունակ յորդ անձրեւներ էին տեղում: Բայց չը նայելով բնութեան արհաւիրքներին եւ արգելքներին՝ սկսուեց անծայր հայ գաղթականութիւնը (հնաբանութիւն է, նկատի ունի՝ գաղթը, Ռ. Հ.): որը տարածում էր Ալեքսանդրապոլից Գիլիջան... Գաղթականութիւնը շարունակում է գունդեզունդ թափուել Ղարաքիլիսայ՝ հայից ընկած, ջարդ ու փշուր եղած՝ ճանապարհին կորցնելով իր անասունների, տնային իրերի ամենամեծ մասը: Կենդանի մնացած ձիերն ու եզները այնքան էին ուժասպառ եղած, նիհարած, որ այլեւս անկարող լինելով իրենց ետեւից քաշ տալ սայլակները՝ խորը ցեխի մէջ թաղուած, կանգնած էին մնացել. շատերը նրանցից դիակնացած փռուած էին փողոցների այս այն անկիւնում՝ ամբողջովին ցեխի մէջ շաղախուած: Փողոցներում շարժուելու հնարատրութիւն չկար, անց ու դարձը գրեթէ կանգ էր առել: Գաղթականութիւնը գլուխը կորցրած, շըշմած՝ իր անելիքը չէր հասկանում: Մնալ Ղարաքիլիսայում հնարատրութիւն չկար, թշնամի կրկակոխ գալիս էր ետեւից: Հարկադրուած էր իր հետ վերցրած տնային իրերի մեծ մասը թողնել Ղարաքիլիսայում եւ հազար ու մի չարչարանքներով, դժոխային տանջանքներ կրելով, իր փախուստը շարու-

նակել դէպի Գիլիջան, դէպի անյայտ աշխարհներ, դէպի անյայտ ապագան»²²:

Աննկարագրելի է գաղթականութեան վիճակը,- Գեորգ Ե Կաթողիկոսին ուղղած իր 1918 թ. մայիսի 21-ի զեկուցում ահազանգում էր զօրքին եւ ժողովրդին դէպի ճակատ մղելու մէջ կարեւոր դեր ունեցած Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը*, - մահացութեան դէպքերը սկսել են ծայր առնել: Կերակրել եւ տեղաւորել նոցա մարդկային կարողութիւնից հեռու է: Մի մասը նոցա գնում էր դէպի Տփլիս...ընդհատուել է հեռագրային հաղորդակցութիւնը... Այստեղի գաղթականութիւնը կտրուած է թէ Տփլիսի եւ թէ Ախալքալակի կողմից: Մթերքներ ամենեւին չկան, տեղափոխութեան միջոցներ ամենեւին պակասում են: Անասունները կտորուտ են կերի պակասութեան պատճառով»²³:

Մէկ այլ գրութիւնում Մեսրոպ սրբազանը վկայում է. «Երբ երկու օր անց ատոմոթիւով վերադարձա Ղարաքիլիսա, ականատես եղա սոսկալի փախուստի աննկարագրելի ատերին: 38 վերստ տարածութիւն ճանապարհը լցուած էր անթիւ սատկած կենդանիների լէշերով, կտորտուած սայլերով, թափուած բեռներով, որոնց փտումից երկիրը պիտի ապակամուխ»:

Իսկ Ամենայն Հայոց Գեորգ Ե կաթողիկոսին յղած 1920 թ. մայիսի 27-ի զեկուցագրում Մեսրոպ սրբազանը գրում է. «Ղարաքիլիսայում իմացանք, որ թուրքերը նոյնիսկ մինչեւ Ղշլաղ գիւղը չէին հասել, հետեւապէս շտաբի եւ հայ զօրքի փախուստը իր ահռելի հետեւանքներով որեւիցէ հիմք չունէր: Ղարաքիլիսայում...Կարսից տեղափոխուած կային 3000 թուրք զերիներ, որոնք չը նայած շտաբի եւ զօրքի հեռանալուն, երկու ամբողջ օր սպասել էին առանց պահապանների(այն է՝ հայ զօրքի, Ռ. Հ.)... թողել հեռացել էին, միանալով թշնամու առաջ խաղացող բանակի հետ եւ ուժեղացրել նրա կազմը»²⁴: Մէջբերուած վաւերագրերից յստակօրէն

* Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանը(1865-1939) ծնունդ է Գորիսի Շիկահող գիւղում, ասարտել է Շուշու թեմական եւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցները, 1891 թ.՝ Դորպատի համալսարանը, 1893 թ. ձեռնադրուել է արեղա, ապա մէկ ամիս անց՝ վարդապետ, 1908 թ. ստացել է եպիսկոպոսական գաւազան, 1903 թ. նշանակուել է «Արարատ» ամսագրի խմբագիր, դարձել է բոլշեիկեան ահաբեկչութիւնների գոհ, բաղուել Վաղարշապատի ս. Գայիանէ եկեղեցու բակում(Գ. Տէր-Վարդանեան, Մեսրոպ մագիստրոս արք. Տէր-Մովսիսեան, Երեւան, 1999թ., էջ8-12,64), Թիֆլիսի Գայոց Ազգային խորհրդին կից՝ պատերազմից տուժածներին ցոյց տրուող օգնութեան ազգային կենտրոնական բիւրոյի եւ գաղթականութեանն օգնող արտակարգ յանձնաժողովի նախագահ:

երևում է, որ հայոց զորքը իր պարտադրական տրամադրություններով լեղապատառ փախչող բնակչությունից շատ չէր տարբերում, երբ ազատ էր արձակում բնանույց վերցուած գերիներին:

«Փամբակի 1,2 հարիւր քառ.վերստ տարածութիւն բռնող ձորը, – գրում է Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին անդրամիկ աշխատութեան հեղինակ, դէպքերին ակնատես Մուշեղ Ղազարեանը,– մայիսի 19–20–ը փոխել էր գաղթականական ալեկոծ ծովի, որի յորձանքների մէջ մարդ արարածը դառել էր մի աննշմարելի շիղ: Փախստական կարաւանի հանգրուանը սկսում էր Համամլուից (այժմ՝ Մպիտակ, Ռ.Հ.), մինչեւ Համգաչիման (այժմ՝ Մարգահովիտ, Ռ. Հ.) բարձունքը– շուրջ 30 վերստ տարածութիւն: Հսկայ զանգուածի խտութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է յիշել, որ այնտեղ էին կուտակուած Երեսանի եւ Ղարսի նահանգների ազգաբնակչութեան 90 տոկոսը– կէս միլիոնից աւելի ժողովուրդ, եւ Երզնկայից, Էրզրումից ու Մուշի դաշտից ճողպրած տաճկահայ հոծ բազմութիւնը: Տեղական բնակչութիւնը կորել էր գաղթականական հոսանքի մէջ... Մայիսի 19–ին... Համամլու գիւղն առանց դիմադրութեան անձնատուր եղաւ: Այս լուրը կայծակի արագութեամբ անցաւ փախստական կարաւանի մի ծայրից մինչեւ միւսը... Խուճապն ու լքումը աւելի սաստկացաւ: Գաղթականութիւնը, խելակոբուս սոսկումով՝ իր կեանքն ազատելու համար՝ իր հետ բերած հարստութիւնը... ստիպուած եղաւ բողնել վերջին իջեւանում կամ դէն շարտել ճանապարհի այս ու այն կողմը... Համամլուից մինչեւ Ղարաքիլիսա, Ղարաքիլիսայից մինչեւ Համգաչիման– քէ՛ ճանապարհի ուղղութեամբ եւ քէ՛ ընդարձակ տարածութեան վրայ թափթփուած էին ամէն ինչ... Խաս շորերի բոխչանքից մինչեւ լիք խուրջիներ, անկողիների մաֆրաշներից մինչեւ հացահատիկի լիք ջվալներ, շորագեայցու հարուստ պղնձակայից մինչեւ նրա տաշտն ու խնոցին, ռանչպարի գերանդի ու մանգաղից մինչեւ արհեստաւորի ուրագն ու սղոցը... Ամենքին զբաղեցնում էր միայն մի միտք– ժամ առաջ փախչել, խուսափել այն ահռելի ուրուականից, որ կամաց–կամաց հետեւելով իրեն, դառնալու էր մի վիշապ եւ կուլ էր տալու սարսափահար բազմութեան... Ղարաքիլիսան ընկաւ ահ ու սարսափի կօշմարի տակ: Փրկութեան յոյսի վերջին կայծերը կամաց–կամաց հանգան ու կորան.մահուան օրհասը տիրեց ամենքին. խորհրդաւոր լռութիւնը կապարի պէս ճնշեց մասսային, որ դառել էր մի հսկայ կենդանի դիակ,իսկ Փամբակի գեղեցկանիստ ձորը–մի ահռելի գերեզման...»²⁵:

Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից Սերգէյ Թորոսեանն իր յուշերում գրում է.«...Սարսափելի էր նահանջը Ղարաքիլիսայից Դիլի-

ջան: Ամբողջ ճանապարհը բռնուած էր գաղթական հոծ բազմութեամբ...Կին, երեխայ, անասուններ, խառնուել էին ձիերի հետ եւ գրեթէ անհնար էր առաջ շարժուելը»²⁶: Ղարաքիլիսայում կռուած հայոց բանակի վաշտապետներից Վախտանգ Տէր- Յարութիւնեանը եւս վկայում է.«Ժողովրդի տրամադրութիւնը առանձնապէս վատ էր Կարաքիլիսի շրջանում: Յուսահատութիւնն ու դասալքութիւնը ծայր էին տուած: Փախչող փախչողի յետեւից դիմում էին դէպի աւելի «ապահով» շրջաններ, կռուի ճակատից հեռու»²⁷: Մի քանի մէջբերումներ անենք նաեւ Ղարաքիլիսայի ճակատամարտի հրամանատարների զանազան ատեաններ յղած զեկուցագրերից, որոնք ոչ մի կասկած չեն թողնում, որ հայոց զորքը, գլխաւոր հրամանատարից սկսած, դիրքերը եւ զօրանոցները համատարած լքող զինուորներով վերջացրած,քայքայուած էր, կազմալուծուած եւ փաստօրէն որպէս համակարգ ու կառոյց գոյութիւն չուներ, ուստի չը պիտի կռուէր...

Ճակատի հրամանատար Թովմաս Նազարբեկեանն իր յուշերում գրում է.«20 մայիսի- ժ.15-ի մօտերը բուրքերը գրաւեցին Ադիբեկ գիւղը: Ստացուած տեղեկութիւնների համաձայն բուրքերը մտադիր էին առաջ գնալ մինչեւ Թիֆլիս: Ալեքսանդրապոլի ջոկատի պետին հրաման արձակեցի բուրքերի կողմից Ղարաքիլիսայի վրայ յարձակուելու դէպքում առաջին դիվիզիայի եւ երկրորդ լեռնային զումարտակի հետ ետ քաշուել Շահայի, իսկ Արդուբինսկու հրամանատարութեամբ գործող միւս զօրամասերին՝ նահանջել Դիլիջան»²⁸: Վկայակոչենք նաեւ Հայոց Ազգային խորհրդի նախագահին ուղղած նրա երկու պերճախօս զեկուցագրերը .

«Հայկական կորպուսի հրամանատար, զօրավար Նազարբեկեանի 1918 թ. մայիսի 18-ի հեռագիրը Հայոց Ազգային խորհրդի նախագահին՝ Ղարաքիլիսայի ուղղութեամբ գործող բանակի զինուորների դասալքութեան մասին(հատուած,քարզմանութիւն ռուսերէնից: Կրճատուծ տեղերը նշուած են բազմակէտերով)

Չորրորդ գնդի զինուորները լքել են դիրքերը եւ հեռացել...Չինուորների մէջ յուրեր են պտտում, քէ գնդերից զինուորները հեռանում են, քէ 4-րդ եւ 8-րդ գնդերի երեսնցիները, եւ ուրիշներ հեռացել են ամբողջական վաշտերով, որ 2-րդ հեծելազունը եւ ամբողջ կազմով հեռացել է Երեսանի ուղղութեամբ...Տեղացիները զինուորներին բացէիբաց յայտարարում եւ յամոզում են չը կռուել, քանի որ «ձեր պատճառով են բուրքերը մեզ կոտորում... Գնացէք ձեր տները»: Պարմի եւ Եայլա գիւղերի ողջ բնակչու-

թիւնը եւ փախստականները սպիտակ դրօշներ պարզելով յայտարարում են. «Մենք սպասում ենք թուրքերին, մի՛ կռուէք»: Հէնց նոր լուր ստացա, որ Երեւանի ուղղութիւնը պաշտպանող գումարտակի զինւորները, օգտուելով խիտ մառախուղից, խմբերով դասալքում են: Գումարտակի պետը զեկուցեց, որ դիրքերում մնացել են միայն սպաները եւ 30 հոգիանոց զինւորների մի խումբ: Չը դասալքած զինւորներն ասում են, որ մառախուղի պայմաններում հնարաւոր է չհետեւել դասալքներին եւ վաշտերում մնացել են 8-10-ական զինւորներ: Նրանք յայտարարում են, որ Փամբակի բնակիչները թուրքերի մօտ պատուրակութիւն են ուղարկել՝ յանձնուելու առաջարկով, իսկ հայ զինւորներին բացառապէս յայտարարում են. «Հեռացէք մեզանից, մենք թուրքական հպատակութիւն ենք ընդունում...»: Այսպիսի իրավիճակում սպաների աշխատանքը դրական արդիւնք չի տալիս...

18 մայիսի, 1918 թ., ժամը 10 անց 30 րոպէ
Կորպուսի հրամանատար՝ Նազարբէկեան
(Բնագիրը ստորագրել է զօրավար Արեշեանը)²⁰)

Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբէկեանի 1918 թ. մայիսի 22-ի զեկուցագիրը Հայոց Ազգային խորհրդին

«...Թուրքերի դէմ կուելու պատրաստ մարդ բացարձակապէս չկայ: Դա՛ է հաստատում երեկուայ յապշտապ նահանջը, ինչը թուրքերին հնարաւորութիւն տուեց առանց կռուի գրաւել Ղարաքիլիսան: Եթէ թուրքերը որոշեն յարձակուել Դիլիջանի վրայ, նրանք վաղը եւէք կը գրաւեն Դիլիջանը եւ նրանց ո՛չ որ դիմադրութիւն ցոյց չի տա:

Դիլիջանում պահեստաւորուած պարէն եւ փամփուշտ բացարձակապէս չկայ, զօրքերը մատնուած են սովի եւ եթէ նոյնիսկ ուզենան էլ, չեն կարող կռուել...*

Նշուած իրողութիւններն... ինձ հարկադրում են ձեռնարկել հետեւեալ միջոցները.

առաջին՝ նախկին ալեքսանդրապոլեան զօրամասի բոլոր զինւորներին, որոնք փաստօրէն հեռացել են զօրամասերից, բաց թողնել տները: Զինուորական մասերի հրամանատարների հայեցողութեամբ զինուորական մասերում պահել միայն կադրային անձնակազմը (Իմա՝ սպայական կազմը, Ռ.Հ.):

*Իսկ այդ ինչպէս է որ երկու օր յետոյ կռուեցին: Ռ. 7.

Երկրորդ՝ այժմ եւէք յայտարարել, որ զօրքերի զօրամասերը պիտի բացառապէս յոյսները դնեն իրենց ունեցած միջոցների վրայ, քանի որ ռազմամթերքի եւ պարէնի առաքումների ստացման յոյսեր չկան:

Խնդրում են սոյն իմ առաջարկները հաստատել:

Դրա հետ միասին զեկուցում են, որ անհրաժեշտ է անյապաղ հրաժարուել ռազմական գործողութիւններից եւ հաշտութիւն կնքել... Նաեւ խնդրում են ցուցում տալ՝ ի՞նչ անեն, եթէ թուրքերը շարունակեն յարձակուել Դիլիջանի վրայ, քանի որ կորպուսի սպայակոյտը (շտաբ, Ռ.Հ.): այլեւս նահանջելու տեղ չունի, որովհետեւ եթէ թուրքերը Դիլիջանը գրաւեն եւ նոյնիսկ եթէ սպայակոյտն էլ որեւէ այլ տեղ փոխադրուի, ապա ես կը զրկուեմ Թիֆլիսի, նաեւ որոշ զօրամասերի հետ որեւէ ձեռի կապ ունենալու հնարաւորութիւնից:

22 մայիսի, 1918 թ. Կորպուսի հրամանատար՝ Նազարբէկեան²⁰»:

Այդ օրերին Դիլիջանում գտնուող վերոյիշյալ Իրազեկը իր յուշերում պատմում է. «Մի օր, առաւօտ կանուխ, Նժդեհի հետ միասին, գնում ենք Ջօր. Նազարբէկեանի մօտ, խնդրելու թէ նախ՝ չալտր է թողնել, որ զինուորները, խուժանի հետ միասին, լքեն այս ճակատը եւ փախչեն Երեւան կամ այլուր, որովհետեւ ճակատն այդպէս մերկացնելով՝ մենք վտանգում ենք նաեւ Երեւանի, այլեւ Բագուի դրութիւնը: Երկրորդ՝ Ղարաքիլիսայից Դիլիջան տանող միակ խճուղին անցնում է նեղ եւ անտառապատ ձորով: Եթէ անտառների մէջ մի քանի հարիւր զինուոր դրուի՝ նրանք կարող են տաճկական հազարաւոր զօրքերին արգելք հանդիսանալ Ղարաքիլիսայից Դիլիջան անցնելու: Ջօրավար Նազարբէկեանը, որ ծայրայեղօրէն յուսալքուած էր ու տխուր, մեզ պատասխանում է բառացի. «Ես այլեւս զօրք չունեմ, ինչ կարող էք՝ դուք արէք»: Մտաբեկ ու տրտում դուրս ենք գալիս զօրավարի մօտից... Այդ օրերին հնդկա-եւրոպական զօրքերը եւ շարունակ հեռախօսային կապ էի պահպանում Արամի կամ նրա կողմից՝ Արշալոյս Աստուածատրեանի հետ: Մարդաբարդի հերոսամարտի նախօրեակին էր... Մովորական հարց ու փորձից յետոյ Արամն ինձ ասաց. «Պատրաստուում ենք վճռական ճակատամարտ տալու Մարդաբարդի մօտ: Ի սէր Աստուծոյ, զոնէ երեք օր էլ պաշտպանեցէք Ղարաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերի մեր վրայ (ընդգծումն իմն է, Ռ.Հ.): »: Իհարկէ, խոստում տուինք, բայց որտեղի՞ց եւ ինչպէ՞ս պաշպանէինք, երբ ո՛չ զինուոր կար, ոչ զօրք³¹»: Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակալից վերոյիշեալ Մանուկ Ղազարեանն էլ պնդում է. «Մեր զինուորական յայտ-

նի ուժեր- Նազարբեկով, Բեկ Մամիկոնով, Անդրանիկ եւ ուրիշներ- կորցնելով իրենց հաւասարակշռութիւնը՝ չունէին հմայք ու հեղինակութիւն մասսայի աչքում»³²:

Ինչպէս տեսնում ենք, հայոց զօրքերի գլխաւոր հրամանատարը ամբողջովին հաշտուել էր նահանջելու- դիմադրութիւն ցոյց չը տալու մտքի հետ եւ 1918 թ. մայիսի 22-ին Հայոց Ազգային խորհրդին զեկուցում էր, որ կռուելը անհնար է, որ անհրաժեշտ է նահանջել, քանի որ խուճապ է եւ ոչ ոք չէր ուզում կռուել: Ասել է թէ՛ հրամանատարութիւնը ոչ մի ազդեցութիւն չունէր զօրքի վրայ, այսինքն՝ բարձրագոյն հրամանատարութիւն գոյութիւն չունէր, ո՛չ ոք ո՛չ մէկին չէր ենթարկում:

Այս իրողութիւններից մեկնելով անվերապահօրէն կարելի է յայտարարել, որ թէեւ այնտեղ էր գտնուում եւ ռազմական գործողութիւնները անձամբ ղեկավարում էր գլխաւոր հրամանատար Թ. Նազարբեկեանը, *այդուամենայնիւ հայ- թուրքական ճակատներից ամենախարխուլն ու բարոյալքուածը Ղարաքիլիսայի ճակատն էր*

Գա այդպէս է, քանի որ եթէ Մարդարապատում եւ Ապարանում պարտուողական տրամադրութիւնները կազմակերպուած նահանջից եւ բշտամու դէմ պայքարը լեռները փոխադրելու մտայնութիւնից այն կողմ չէին անցնում, բանակը կազմալուծուած չէր, իսկ բնակչութիւնը որոշ տեղերում, մինչեւ կանոնաւոր հայոց բանակի ժամանումը, կազմակերպել էր ինքնապաշտպանութիւն(օրինակ՝ Ապարանում, որտեղ բնակչութիւնը մայիսի 22-ից 24-ը Փարսի գիւղի ծխատէր քահանայ Տէր Գեորգ Հայրապետեանի, Վարդենիս(այն ժամանակ՝ Քիւլիճայ)գիւղի աւագ քահանայ Յովհաննէս Տէր-Մինասեանի, գիւղի աշխարհականներ Դ. Մելիքսէփեանի, Մ. Յովհաննիսեանի եւ այլոց գլխաւորութեամբ), ապա Ղարաքիլիսայում զօրքը եւ ժողովուրդը չէր լսում դիմադրութիւն կազմակերպելու մի քանի անձանց կոչերին եւ գլուխները առած փախչում էր: Ուստի, ինչպէս վկայում են գրեթէ բոլոր ականատեսները, իսկական հրաշք էր, որ այդ անյուսալի պայմաններում զօրքն ու ժողովուրդը ճակատում կռուեցին ու տարան յաղթանակներ:

«Յուսարթումը տեղի տւեց ռզեւորութեան.-չեշտում է Ս. Վրացեանը,- Մայիսի 24-ին... Ղարաքիլիսայի մօտ... թուրքերը ջարդուած՝ խուճապով քաշուեցին դէպի Համանլու... Մայիսի 25-ին եւ 26-ին... տեղի ունեցան յամառ եւ արիւնալի ճակատամարտեր... Ղարաքիլիսայի ճակատամարտում հայ զինուորը երեւան բերեց ռազմական բարձր կարողութիւն եւ անսահման հայրենասիրութիւն»³³: Խորէն աւագ քահանայ

Խանգաղեանը, որ մռայլ գոյներով էր նկարագրում հայերի փախուստը եւ զաղքը, դարձեալ զարմանքով շեշտում է.«Անսպասելի կերպով, սակայն, տեսարանը փոխուեց... հայ բանակը վերադարձաւ Դիլիջան եւ պատրաստուեց ճակատամարտի: Ղարաքիլիսայի տակ սկսուում է անհաւասար կռիւր: Կենտրոնում յաջողութիւնը հայերի կողմն էր, դժբախտաբար թեւերը չափազանց թոյլ էին, եւ գործը չարաչար տանու տուին»³⁴: Ռազմաճակատի հրամանատար Թ. Նազարբեկեանը եւս, որը երկու օր առաջ Հայոց Ազգային խորհրդին ուղղած վերոյիշեալ զեկուցագրում անհնար էր համարում դիմադրութիւնը, շեշտում է ռազմիկների հոգեփոխութիւնը՝ վկայելով, որ մայիսի 24-ին տեղի ունեցաւ «*Չինուորների ու սպաների տրամադրութիւնների կտրուկ փոփոխութիւն, ոգու համընդհանուր*» բարձրացում. Ղարաքիլիսայի զօրախումբը անցաւ յարձակման... մայիսի 26-ին Մայմեխի մօտ... Թուրքերը փախչում էին»³⁵: «...Մայիսի 24-ին, մի անսպասելի դէպք, աւելի շուտ մի զարմանալի հրաշք եկաւ ցրելու համատարած լռութիւնը,-գրում է Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին առաջին աշխատութեան հեղինակը,- պատռեց մահուան վարագոյրը եւ մարդկանց երակների մէջ խոսեց ապրելու եւ կռուելու տենչը: Ղարաքիլիսայից դէպի արեւելք Դիլիջանի ոլորապտոյտ ճանապարհին երեւաց մի անորոշ զանգուած, որ քանի մօտենում, աւելի եւ աւելի նկատելի էր դառնում: Շատ չանցած գիւղում երեւացին մի խումբ ձիաւորներ, ոտքից գլուխ զինուած : Ժողովրդի սարսափահար դէմքերին նկատուեց եւ զարմանքի եւ ուրախութեան նշան... Եկուորները ծանօթ դէմքեր էին. Նժդեհի տղերքը:

- Գալիս է հայ զօրքը, գալիս են հայ կամաւորները: Կռիւ պիտի տանք, փախչելն ամօք ա, տղամարդկութիւն պիտ շանց տանք- արար աշխարհի պիտ զարմացնենք- ծլկուղ ու կորչողը- նամարդ է:

Լսողները չէին հաւատում իրենց ականջին. Ամենքին բոււմ էր մի երագ, մի քաղցր ու կարճատեւ երագ...»³⁶: Ի՞նչ էր պատահել, ինչպէ՞ս էր ի՞նչ պայմաններում է կատարուում այդ, իրօք որ, հրաշքը:

Առաջինն այն էր, որ մայիսի 24-ին, երբ բարձրագոյն հրամանատարութեան պահանջով Դիլիջանում գումարուած զինուորական եւ աշխարհիկ ղեկավարութիւնը բննարկման էր դրել *անխուսափելի նահանջը լաւագոյնս կազմակերպելու հարցը*, ստացում է Մարդարապատի մատոյցներում մեր զօրքերի տարած մայիսի 22-ի յաղթանակի լուրը, որը արագօրէն տարածուում է եւ մեծ ռզեւորութիւն առաջացնում յուսահատ զանգուածների մէջ:

«Հրաշք էր պէտք մէջըը կտորած բանակը ոտքի հանելու համար,-գ-

րում է Ա. Ահարոնեանը, — եւ հրաշքը կատարուեց: Մայիսի 24-ն էր. Երեւանից մի հեռագիր հասաւ հետեւեալ բովանդակութեամբ. — Բաշ աբարանում Դրոն իր փոքրաքիւ գնդով ջարդել է թուրքին եւ հետապնդում է ցար ու ցրի փախչող թշնամուն: Ջորավար Սիլիկեանի գլխաւոր ղեկավարութեան տակ գործող զօր. Փիրումեան Սարդարաբադում ճակատում է եւ թուրքերին սաստկօրէն նեղն է դրել՝ յաղթանակի մեծ հաստով...

Յուսակտուր ու վեհերոտ դասալիքների ճամբարներին յայտնում էր ծերունի զօրավար Ղամազեանը, — շարունակում է Ա. Ահարոնեանը, — մէկ տեղ սայլերի առջեւը փակելով, ուրիշ տեղ ձիաւորի ձիու սանձը բռնելով՝ կանգնեցնում էր խուսափող զինուորներին եւ հաւար էր ձգում աղաչանքով, բարկութիւնով, սպառնալիքով. «Ձեր տունը քանդուի, անխելքներ, — կոչում էր նա, — ո՞ր էք գնում, ո՞ր էք փախչում. Ձեր փրկութիւնը միայն կռուի մէջ է: Չլսեցի՞ք, որ թշնամին պարտուած է Սարդարապատում, Բաշ Ապարանում: Ինչո՞ւ այստեղ էլ չպիտի պարտուի...»

Եւ իր այս փոքրաքիւ զօրքը հայ հրամանատարը [Նազարբէգեանը] դասաւորեց հետեւեալ կարգով. —

Աջ թեւը պիտի պաշտպանէր Անդրանիկ՝ փակելով թրքական 5-րդ դիվիզիոնի առջեւ Ջալալ-Օղլիի ճամփան:

Չախ թեւը յանձնուեց գնդապետ Սամարցեանին, որը պիտի ճգներ գրաւած պահել Գեղա-Մայմեխ լեռը:

Ամբողջ հեծելազօրքը գնդապետ Ղորղանեանին եւ հրետանիների գլխաւոր ղեկավարութիւնը զօրավար Ղամազեանին յանձնուեց: Ջօր. Բէյ-Մամիկոնեան կարգուեց հրամանատարի անմիջական օգնական եւ առաջիկայ կռուի գլխաւոր ղեկավար: Ճակատամարտը սկսուեց մայիսի 24-ին, ճաշից յետոյ ժամը 3-ին³⁷:

Նոյնն է պնդում նաեւ ֆրանսահայ պատմաբան Սերժ Աֆանասեանը. «Տեղեկանալով Սարդարապատում ձեռք բերուած յաղթանակի մասին, Նազարբէգեանը մայիսի 24-ին հրամայում է Բէյ-Մամիկոնեանին գնալ Ղարաքիլիսայի վրայ... Բէյ-Մամիկոնեանի զօրքերը բաժանուած էին երեք մասի: Յիսիսում, ռազմաճակատի աջ թեւը վստահուած էր Անդրանիկին, որն իր 2700 կամաւորներով պէտք է պաշտպանէր Գեառզեանի լեռնանցքը: Չախ թեւում, Հաջիդարայ գիւղի մօտ գտնուում էին գնդապետ Սամարցեանի զօրաբաժինը եւ կապիտան Տէր-Մովսիսեանի 4-րդ մարտկոցը: Մրանք պէտք է ապահովէին Գեառդա-Մայմեխ լեռնագագաթի պաշտպանութիւնը՝ Ղարաքիլիսայի հարաւում, խանգարելու համար թուրքերին թիկունքից գրոհելու հայերի մարտական շղթան:

Կենտրոնում, գնդապետ Նիկոլայ Կորզանովի հեծելաւորները եւ Նժդեհի կամաւորները պաշտպանում էին Գարապաից մինչեւ Ղշլաղ ձգող հատուածը: Հրետանին դրուել էր զենեքալ Ղամազեանի հրամանատարութեան տակ: Բոլորը միասին՝ մօտ 7 հազար մարդ, 20 գնդացիք եւ 12 թնդանոթ, մի ուժ, որ... պէտք է հանդէս գար 10 հազար թուրքերի դէմ³⁸:

Երկրորդ, *հիմնական եւ կարեւորագոյն գործոնը Գարեգին Նժդեհն* էր, որը կարողանում է ճակատ յարդարելու եւ դիմադրութիւն կազմակերպելու նախաձեռնութիւնը վերցնել ձեռքը, բազմութիւններին ոգեշնչել ու տանել անբաղդատելի հերոսամարտի՝ իհարկէ մինչ այդ ունենալով անգուզական հերոս հրետանատար կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանի, Գարապա գիւղի քահանա տէր *Կոմիտաս Սարգսեանի**, գաղթականութեանն օգնող արտակարգ յանձնաժողովի նախագահ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանի, Երեւանից Ղարաքիլիսա ժամանած զօրավար Ղամազեանի եւ սակաւաքիւ այլ իր նմանների անվերապահ զօրակցութիւնը: Ընդ որում՝ պէտք է անպայման շեշտել ու ընդգծել, որ Նժդեհականք (տէր Կոմիտասը, կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանը, գնդապետ Սամարցեանը, Մոսրոպ եպիսկոպոսը եւ ուրիշներ) *զօրքին կոչ էին անում կռուի՝ դեռեւս մինչեւ հայոց զօրքի եւ ժողովրդի հոգեփոխութիւնը*:

Սա նշանակում է, որ Նժդեհը, համատարած խուճապին եւ հրամանատարութեան պարտողական դիրքորոշումին հակառակ, թուրք զօրքերի դէմ կազմակերպել ու վարել է դիմադրական կոիւներ՝ *մինչեւ իր նշանաւոր ճառից յետոյ զօրքերի ոգու բարձրացումն ու հակայարձակման անցնելը*: Այս պնդումը հաստատող անուղղակի փաստ կարելի է նկատել Յ. Իրազեկի վերոյիշեալ այն տեղեկութիւնը, ուր նա պատմելով զօր. Նազարբէգեանի «ծայրայեղօրէն յուսալքուած» լինելը («Ես այլեւս զօրք չունեմ, ինչ կարող էք՝ դուք արէք...») շարունակում

*Օնուել է 1861 թ. Շիրակի գաւառի Պեմզաշէն գիւղում, աւարտել է Գառիճի վանքի դպրոցը, ապա՝ երեք տարի սովորել ս. էջմիածնի Գեւորգեան ճեմարանը: Երբ 1918 թ. մայիսի 21-23-ը թուրքերը մի շարք բնակավայրերի հետ միասին գրաւեցին նաեւ Սպիտակը, տէր Կոմիտասը Դարբաս գիւղի եկեղեցիների զանգերի ղողանջներով գիւղացիներին ոտքի հանեց ինքնապաշտպանութեան: Երեք օր շարունակ Կոմիտաս քահանայի ջոկատը, որին միացել էին նաեւ շրջակայ գիւղերի բնակիչներ, կռոււմ էր թուրքերի դէմ՝ հրաշքներ գործելով: Մահացել է 1928 թ. իր ծննդավայր Պեմզաշէնում, որտեղի քահանան էր (Տես Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երեւան, 1991 թ., էջ 60; Միհրան Մուրադեանի նիւթերը, «Ուրբաթ» շաբաթաթերթ, 1991 թ. մայիսի 10, թիւ 18, էջ 4):

է. «...Որոշում ենք փորձել մեր ուժերով ու խօսքով աշխատել գէթ զինուորների փախուստի առաջն առնել: Անգամ խուզարկութիւններ էլ ենք անում սայլերի ու բեռների մէջ, որպէսզի, եթէ ընտանիքները գնում են՝ գնան, բայց գոնէ հրացան, փամփուշտ չտանեն հետները: Եւ այդ մասամբ յաջողում է մեզ»³⁹:

Մինչեւ մայիսի 24-ի համընդհանուր հոգեփոխութիւնը բուրքերի դէմ դիմադրութիւն կազմակերպելու Նժդէի սեւեռուն փորձերի մասին տուեալներ է բերում գրող Մ. Ամիրբէկեանը, որը 1960-ական թթ. իրագեկնեւորից ու ականատեսներից հաւաքելով բազմաթիւ վկայութիւններ, գրում է. «Ժողովուրդը հաւաքուեց Ղարաքիլիսայի երկաթուղային այգում (ընդգծումն իմն է, Ռ.Հ.): Ծովացաւ նրա կենտրոնում գտնուող՝ չորս կողմը բաց, կլոր տաղաւարի շուրջը: Տաղաւար բարձրացան Նժդէի, գաղթականութեանն օգնող արտակարգ յանձնաժողովի նախագահ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը, աւագ քահանայ Խորէնը, կոմիսար Արսենանց Վանն: Տաղաւարում կանգնած զինուորականը (Նժդէի, Ռ.Հ.): առաջ եկաւ, պարզեց ձեռքը, ամբոյսը մէկէն լռեց: Զինուորականը սկսեց.

—Պատմական Գուգարք աշխարհի քաջորդիներ, անտուն, անտիրական հայ գաղթականներ: Եկել է ժամը, որ մենք՝ Հայկ Նահապետի թոռներս, արժանին հատուցենք մեր նենգ ու դաւադիր թշնամուն, որն այնպէս անողորմաբար գերեզմանների վերածեց յոյսի եւ արդար վաստակի մեր սուրբ հայրենիքը... Դարեր ի վեր այսպէս է եղել մեր ճակատագիրը: Միշտ էլ մենակ ենք կուրծք տուել մեր երկրին սպառնացող բիրտ ուժերին...

Մենակի այդ ողբերգութիւնը մեր ժողովուրդն աւելի սուր, աւելի յստակ տեսնում եւ զգում է այսօր, երբ մեր անագորոյն թշնամին նորից իր սուրն է բարձրացրել մեր կեանքի վրայ, մեր Աստծոյ վրայ: Սակայն քիչ չեն մեզանում եւ այն մոլորեալները, որոնք դեռ օգնութիւն են սպասում դրսից եւ ողորմութիւն սպասում թուրքից... Իզուր, իզուր է այդ սին պատրանքը: Քրիստոնեայ մեծ պետութիւնները չէի՞ն, որ կարելի դարձրեցին մեր ահաւոր ջարդերը. Նրանց աչքերի առաջ չէ՞ր, որ այսպէս անգութ ու անզիջում խաչում է քրիստոնէութեան առաջամարտիկ մեր ժողովուրդը: Այո, իզուր են, հայեր, իզուր են մեր սուրբ յոյսերը, սպասումները: Հայկական ողբերգութիւնը օտարը չի համարում իրենը: Նա չի զգում, որ Արեւելքի քրիստոնեայ ժողովրդի ոչնչացումը իր բարոյական մահն է...

Էլ բա՛ւ է, հայեր, ցնորք է օտարի հետ կապած յոյսը: Մեր յոյսը մենք

ենք այլեւս: Հաւատանք միայն մեր ուժին, մեր Աստծուն: Մարդկանց եւ ազգերի նկարագրի չափանիշը հաւատարմութեան այն աստիճանն է, որ ցուցաբերում են նրանք իրենց գոյութեան ուխտի հանդէպ:

—Ուրեմն, հայեր, եկէք միանանք յանուն սուրբ գործի, յաղթանակ տանենք մահի ու արհաւիրքի հանդէպ, Գուգարքի այս խոր, նուիրական ձորը դարձնենք թշնամու գերեզմանը:

Երիտասարդներ, որ միշտ եւ ամէն տեղ եղել էք փսն գաղափարների կրողներ, միացէ՛ք ժողովրդին, խտացրէ՛ք հայ զօրքի շարքերը:

Եւ դո՛ւք, պեզարդ ծերունիներ, ոգետրէք ձեր որդիներին եւ օգնէք նրանց՝ ձեր խօսքով, փորձառութեամբ:

Եւ դո՛ւք, հայ կանայք, ոգի ներշնչեցէք հայ քաջերին այս սուրբ կռիւ մէջ:

Եւ դո՛ւք, հարուստներ, բացէք ձեր քսակները, որ կուտղները գէնք ունենան, ուտելիք:

Եւ դո՛ւք, եկեղեցականներ, օրհնեցէ՛ք հայ զինուորներին, որ նրանք Աստծոյ օգնութեամբ կարող լինեն պաշտպանել իրենց կրօնները, որ բաց են արել թշնամու առաջ:

— Ի գէն, հայեր, ի մարտ...

Հնչեցին ծափահարութիւններ, ուրախ բացականչութիւններ: Ամբոյսը չէր կարողանում հանգստանալ: Բոլորը յուզել էին: Անտառապահ Ռոստոմը ցուցադրաբար զխարկը նետում էր վեր ու վար, Երեմ աղան ձեռքերը ցաւեցնելու աստիճան ծափ էր տալիս, Հռոմանց Ալեքսոն ժողովրդի միջից ինչ—որ տեղ ոգետրիչ խօսքեր էր ասում, իսկ կանայք՝ մեծ ու ջահել, լաց էին լինում ու գոգնոցներով սրբում աչքերը: Յուզումքի անհանգիստ կայծեր էին թրթռում ներկաների աչքերում: Անթարք նայում էին ճառախօսին ու հիանում:

Տաղաւարում առաջ եկաւ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը, սա էլ, յուզած, ինչ—որ խօսքեր ասաց, յետոյ օդում ճօճելով արեւի տակ փայլիլով խաչը, աղօթեց ժողովրդին, կոչ արեց՝ մէկ մարդու նման դուրս գալ դիմադրելու անարգ թշնամուն⁴⁰:

Բազմաթիւ ականատեսներից հաւաքած Մ. Ամիրբէկեանի տուեալները հաստատում եւ ճշտում են Գիւմրիի փոխանորդ վերոյիշեալ Արտակ վարդապետ Մմբատեանը, քաղաքի սբ. Փրկիչ եկեղեցու երեսփոխան Յ. Էլբակեանը, սբ. Աստուածածին եկեղեցու միաբան Ամբակում քահանայ Տէր-Գեորգեանը եւ նոյն եկեղեցու երեսփոխան Յակոբ Էհրամճեանը (մահացել է 1928 թ.), որոնց Գիւմրիի անկումից յետոյ Վանաձոր փախած Գիւմրեցիները յատուկ լիագորութեամբ պատգամաւոր էին ուղարկել

Գլխնրի՝ քուրքերից խնդրելու, որպէսզի գաղթական բնակիչները ետ դառնան իրենց տները: Թուրքերից մերժում ստանալուց յետոյ պատուիրակութիւնը մայիսի 20-ին վերադառնում է Վանաձոր: Յիշեալ անձինք հետգալուսմ մի ընդարձակ զեկուցագիր են կազմում, որտեղ գրում են.

«...Մայիսի 20-ին...Ղարաքիլիսայում մեզ ժողովուրդը խումբ-խումբ հաւաքած անհամբեր սպասում էր: Երկու տեղ ժողովուրդը մեծ հաւաքոյք ունեցաւ, կայարանի առաջի պարտեզի մօտ(ընդգծումն իմն է,Ռ.Հ.):Եւ եկեղեցու բակում: Երկու տեղում եւս յուսակտուր ժողովրդին եւ եւ Այթունեան Գեորգը հաղորդեցինք պատգամատրութեան կատարած միսիայի մասին, փաշայի պատասխանը, քնդանոթների սարեր բարձրանալը եւ այլն: Որ այս բոլորը լաւ նշաններ չէին... Այստեղ էր նաեւ Նժդեհը: Նա խօսեց, կոչ արաւ երիտասարդներին զինուելու եւ իրեն հետեւելու՝ ժողովրդին փրկելու համար: Չաւաքուեցին բաւական թուով երիտասարդներ, դիմեցին դէպի Չամաձի, սակայն ինչպէս տեղեկացանք, մի քանի ժամից յետոյ նորից ետ եկան»⁴¹: «Մայիսի 23-ին,-օտարալեզու եւ հայալեզու բազմաթիւ աղբիւրներից քաղած տեղեկութիւնների վրայ հիմնուելով գրում է ֆրանսահայ պատմաբան Ս.Ա.Ֆանասեանը,- Ղարաքիլիսայի քահանայ Տէր Կոմիտաս Սարգսեանը, փամփշտակալներով գօտետրուած եւ մինչեւ ատամները զինուած, հնչեցնել է տալիս եկեղեցու զանգերը եւ հաւաքելով իր ծխականներին եւ Հաջիղարայի(այժմ՝ Լեռնապատ,Ռ. Հ.) ու Ղշլաղի(այժմ՝ Վանաձորի Տարոս անուանակոչուած քաղամասն է,Ռ.Հ.) զիւլագիներին, դիմադրութիւն կազմակերպում: Նոյն օրը(պէտք է լինի՝ յաջորդ օրը,Ռ. Հ.) Ղարաքիլիսայում կազմակերպուած մի հաւաքում Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը, գեներալ Ղամազեանը, գնդապետ Սամարցեւն ու Նժդեհը, որոնք վերադարձել էին Գիլիջանից, որոշում են դիմադրութիւն ցոյց տալ»⁴²: Այսպիսով՝ դիմադրութիւնը անհնար ու անիմաստ համարելու եւ համատարած բարոյալքումի պայմաններում, երբ զօրքը չէր ենթարկուած իր ղեկավարներին եւ զլուխն առած՝ գաղթականների հետ փախչում էր ճակատից, նժդեհականք ուժերի գերագոյն լարումով փորձում էին կազմակերպել ինքնապաշտպանութիւն:

Իրադարձութիւնները զարգանում են հետեւեալ կերպ: Հայոց բանակի բարձր հրամանատարութիւնը, նկատի ունենալով զօրքի կազմալուծուած ու բարոյալքուած վիճակը, ստիպուած տեղի է տալիս պարտուողական համատարած տրամադրութիւններին եւ Գիլիջանում մայիսի 24-ին հրաւիրած զինուորական ու քաղաքացիական ղեկավարների վերոնշեալ խորհրդակցութիւնում յայտարարում, թէ հնարաւորութիւն չի

տեսնում կռիւր շարունակել եւ անհրաժեշտ է որոշում կայացրել նահանջել առանց կռուի: Ելոյք ունեցողների ու ներկաների բացարձակ մեծամասնութիւնը կողմ էր նահանջին: Եւ ահա այդ ճակատագրական պահին հրետանու մարտկոցի պետ, երիտասարդ սպայ Գուրգէն Տէր-Մովսիսեանը* յայտարարում է, թէ ինքը չի հնազանդուում հրամանատարութեան այդ որոշումին, քանի որ նահանջը դաւաճանութիւն է: Այդ ժամանակ Ղարաքիլիսայում եւ Գիլիջանում ծառայած, դէպքերին

**Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից բժ. Իսահակ Տէրտրեանի վկայութեամբ Գ.Տէր-Մովսիսեանը(Մոստտով,Մովսիսեան)ղարաբաղցի էր,«Լեռնային»կոչւող 4-րդ հրետանային մարտկոցի հրամանատարը,որը յուսահատ բազմութիւններին դէպի ճակատ մղող եզակի սպաներից մէկն էր (տե՛ս յաջորդ էջերը): Սկսած 1914 թուականից մասնակցելով տարբեր կռիւների՝ արժանացել է սպայական բոլոր պարգեւներին, երեք անգամ վիրաւորուել:1918 թ. մայիսի 25-ին, երբ թշնամու դէմ իր մարտկոցի մղած ճակատամարտի ընթացքում վերջացան թնդանօթի արկերը, թրամարտի նետուեց դէպի ճակատի ամենավտանգաւոր հատուածը եւ առիւծամարտ տալով թուրք զօրքերի դէմ, զոհուեց Ղարաքս գիւղի մօտերքում գտնուող թիւ 750 բարձունքը գրաւելիս, որը վճռական նշանակութիւն ունեցաւ մեր զօրքերի մայիսի 25-ի ընդհանուր յաղթանակի գործում: Ցաւօք իր մասին այլ տուեալներ չունենք: Նրա զխաւորած հրետանային մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար Պետրոս Պետրոսեանցի (Պետրոս Տէր-Պետրոսեանց, որը հրամանատարի զոհուելուց յետոյ փոխարինել է նրան) մի զեկուցագրից յայտնի է, որ ճակատամարտից յետոյ,նրա մարտկոցի ռազմիկները իրենց քաջ ու նահատակ հրամանատարի մարմինը մայիսի 28-ին, թշնամու զօրամասերից շրջապատուած լինելու պայմաններում,Մայմեխի մօտերքից հասցնում են Գիլիջան եւ ամփոփում տեղի ս.Աստուածածին եկեղեցու բակում: Ղարաքիլիսայի ճակատամարտի բոլոր մասնակիցներն անխտիր, որոնց թում նաեւ մարաջախտ Յովհաննէս Բաղդամեանը, միաբերան վկայում են, որ Գուրգէն Տէր-Մովսիսեանը անզուգական հերոս եւ մեծ հայրենասէր անհատականութիւն էր: Ցաւօք նրա լուսանկարը եւս չը յաջողուեց գտնել: (Ի. Տէրտրեան, Երկերի ժողովածոյ, հտ. 3(Ուխտաւածները), Թեհրան, 1956 թ., էջ 394-396, հտ. 6(Հայկական գոյամարտ), Թեհրան, 1957 թ., էջ 308-309;Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Ղարաքիլիսայի հերոսամարտը,Թիֆլիս, 1920 թ.:«Մշակ»թերթ, 1918 թ. յունիսի 2; 3. Թուրշեան, Սարղարապատի հերոսամարտը, Երեւան, 1969 թ,էջ171;Կոնստանդին Բագրատեան, Գօղը, պօղվիզի, սուղբը, Կիեւ, 1998 թ.:Աւետիս Ահարոնեան,Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք»ամսագիր, 1932 թ., յունուար, թիւ 3(111); Ա.Յարութիւնեան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիւները, Երեւան,1984 թ., էջ194:Գ.Ղարիբջանեան, Մայիսեան հերոսամարտերի արձագանքները, . «Հայկական բանակ» ամսագիր, 1998 թ., թիւ 2(16), էջ 69; Դր.Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յաղթանակը, էջ 84-86,109-111, 202-203,214-217; Ա. Ղ., Ուղեգրական տեսութիւն, «Յառաջ»օրաթերթ, Երեւան, 1920 թ., հոկտեմբերի 26, էջ 1; И. Баграмян, Мои воспоминания, Ереван , 1979,էջ 88եւ այլն):*

ականատես, 1917-1918 թթ. Հ.Յ.Գ. Գիւմրիի կենտրոնական կոմիտէի ղեկավար գործիչ, կոմիտէի «Ժայռ» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր, բժիշկ Արշակ Ղազարեանը Երեւանի «Յառաջ» օրաթերթում տպագրած իր մի ընդարձակ յօդուածում նույնպէս վկայում է, որ զօրքը թուրքերին դիմադրելու համար Ղարաքիլիսա է վերադարձել կրտսեր սպայի շնորհիւ. «...Մայիսի 22-ին մեր զօրամասերը նահանջեցին Գիլիջան: Երեք օր մնացին Գիլիջան, այդ կարճ ժամանակամիջոցում մեր զօրահրամանատարութիւնը կազմակերպեց ցրիւ եկած զօրամասերը եւ 24-ին, մօտ 6000 զօրագնդով, վերադարձան Ղարաքիլիսա: Սպայութեան ու զօրքի տրամադրութիւնը շատ բարձր էր, նրանք գնում էին մեռնելու: Այստեղ պիտի ասել, Ղարաքիլիսա վերադառնալու գործի մէջ մեծ դեր խաղաց չորրորդ թնդանօթածիգ գումարտակի հրամանատար, երիտասարդ սպայ Մովսէսեանը: Առաջինը Մովսիսեանի քննանօթածիգ գումարտակն էր, որ մեծ օվսաննաներով ճանապարհուեց Ղարաքիլիսա»⁴³: Դրանից յետոյ իր պատմական հրաշակերտ ելոյթն է ունենում Նժդեհը եւ իրադրութիւնը շեշտակի փոխում է: Ներկաները որոշում են կռուել մինչեւ վերջին փամփուշտը: Այնուհետեւ Գիլիջանի սր Աստուածածին եկեղեցում (օծուել է 1901թ., բոլշեակները քանդել են 1936 թ.:), իր կազմակերպած հանրահաւաքում էլ անելի հզօր մի ելոյթով Նժդեհը ոգեւորում է ժողովրդին եւ հէնց այդտեղից մարտիկներին շարժում դէպի Վանաձոր-Ղարաքիլիսա:

Բերենք այդ իրողութիւնը հաստատող մի քանի վկայութիւններ ու փաստեր:


Զանգեզուրի հերոսամարտի ռազմական նշանատր գործիչներից Ռուբէն Նարինեանը (Լեռնահայաստանի բանակի գլխավոր սպայակոյտի պետ) գրում է. «1918 թ. մայիս ամսուան Ղարաքիլիսայի հերոսական կռիւների նախօրեակին, երբ հայկական բանակի բարձր հրամանատարութիւնը մատնուել էր անորոշ վիճակի, իսկ զօրամասերը խուճապի, եւ շատերն արդեն բռնել էին Գիլիջան-Թիֆլիս ճանապարհը, երեսում է Նժդեհը եւ իր կրակոտ ճառերով լքուած զօրամասերը ոգեւորում... վերականգնում ընկճուած հոգիները... Հրամանատարութիւնը նկատելով զօրամասերի անսպասելի ոգեւորութիւնը եւ պայքարը շարունակելու պատրաստականութիւնը, առաջարկում է զօրամասերի ղեկավարներին եւ սպայութեան ժողովներ ունենալ եւ շուտափոյթ յայտնել իրենց վճիռը՝ կռուել, քե՞՞ նահանջել: Բոլոր գնդերն ու առանձին զօրամասերը որոշում են հանում՝ կռուել մինչեւ վերջին կաթիլ արիւնը... Մինչ այդ, Նժդեհը հեծելագօր հարիւրեակի գլուխն անցած հետախուզութիւն էր կատարել եւ զեկուցել գլխավոր հրա-

մանատարութեան, որ թշնամին Գիլիջան չէ մտած, եւ տարածուած լուրերը ստոր անձանց գործն է եղած»⁴⁴:

Յ.Իրազեկը վկայում է. «Նժդեհը... իսկոյն կաղալով (պաշտպանական կռիւներին ուղից թեթեւ վիրատուել էր, Ռ. Հ.) շտապում է եկեղեցու բակը եւ ժողովրդին ու զօրքին միտինգի հաւաքելով՝ կախարդում է ամենքին իր վարպետ խօսքով: Պատկերը միանգամից փոխում է եւ ամենքի ընկած ոգին բարձրանում: Այժմ ամենքը՝ եւ զօրքը, եւ ժողովուրդը պատրաստ են կռուելու անգամ իրենց կեանքները գոհաբերելու հայրենիքի փրկութեան համար: Եւ սկսում է մի խանդավառ շարժում դէպի յետ, նորից Ղարաքիլիսա: Մինչդեռ քիչ առաջ ամենքի յուսահատ ու տխուր հայեացքն ուղղուած էր դէպի Մեմիոնովկայի բարձունքը՝ այնտեղից դէպի Երեւան, Նոր Բայազետ եւ դէպի բոլոր անյայտ հեռուները գնալու համար: Այժմ ամենքը բերկրանքով դառնում են դէպի յետ, դէպի իրենց երկնայ ճանապարհը, որտեղից անցել էին իրենց սեւ բախտն անիծելով: Դառնում են դէպի Ղարաքիլիսա՝ կերտելու համար նշանատր հերոսամարտը: Խանդավառութիւնը ընդհանուր էր»⁴⁵:

Դէպքերին մասնակից մէկ ուրիշը՝ ՀՅ Դաշնակցութեան գործիչ Երուանդ Խան Աղալեանը, Նժդեհի հարցը քննող Դաշնակցութեան Գերագոյն Դատական ատեանում 1921 թ. հոկտեմբերի 7-ին տուած իր ցուցմունքներում, որը ըսել են դատավարութեանը մասնակցած՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին ժամանակակից եւ ականատես ուրիշներ, ասում է. «Այն ժամանակ, երբ ամբողջ զօրքը, ժողովուրդը, ինտիլիգենցիան, բոլորը բարոյալքուած փախչում էին առաջին իսկ պատահած ճանապարհով, այն ժամանակ երբ հայ բանակի սպայութիւնը ժողով էր գումարում Գիլիջանում, ստիպում էր գեներալ Նազարբէկովին գնալ Ղարաքիլիսա եւ սուրը յանձնել թշնամուն, ահա այդ ժամանակ հրապարակ եկաւ Նժդեհն իր ամբողջ հասակով: Նժդեհը, երբ հրաման ստացաւ կուսակցութիւնից կատարել Արամ փաշայի պահանջն (երեք օր դիմանալ)*, անցաւ հաւաքոյթի յարմար տեղը եւ ասաց. «Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնան: Իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապէս մեռած չի հա-

* Երբ զօրավար Սիլիկեանը մայիսի 22-ին Սարդարապատը գրաւած թուրքական զօրքի դէմ առաջին յաղթանակը տարաւ եւ նրան պարտադրեց 15-20 կմ փախչել, թուրքերը վերադասաւորելով ուժերը ամէն գնով ձգտում էին վերանուածել զիջած դիրքերը եւ դա նրանց գրեթէ յաջողում էր: Ահա այդ վճռական պահին եթէ թշնամուն յաջողուէր Ղարաքիլիսայից յաղթարշաւով մտնենալ Երեւանին, Սարդարապատի ճակատամարտի ելքը ուրիշ պիտի լինէր: Ահա այդ նկատառումներով էր Արամը պահանջում գոնէ «երեք օր դիմանալ»:



Գլխաւոր հայոց եկեղեցին (հիմնուել է 1901թ., բոլշեւիկները քանդել են 1936 թ)



Աւետիս Ահարոնեան



Նիկոլայ Ղորղանեան



Թովմաս Նազարեկեան



Մեսրոպ արք. Մովսիսեան

մարում՝ թող հետեւի ինձ»։ Եւ նա գնաց քիչ մարդկանցով։ Կառարեց ամե-
նամեծ գործն՝ իր անձնագոհութեամբ տուեց պատմութեանը Ղարաքիլի-
սայի հերոսամարտն, իսկ մեզ՝ անկախ Հայաստան»⁴⁶։

«Նժդեհը այդ օրերում յայտնուեց Կարաքիլիսի ճակատում,- գրում է
ականատեալ՝ վերոյիշեալ վաշտապետ Վախտանգ Տէր- Յարութիւնեա-
նը,- նախ որպէս խրախուսող առաքեալ։ Նրա խօսքը՝ պողպատ հալեց-
նելու եւ պատնէշ կանգնելու հիպնոսացուցիչ գրաչառութիւնն ունէր։ Դա-
սալիքութիւնը նահանջում էր Նժդեհի հայրենաշունչ խօսքի առաջից։
Շուտով ամեն մարդ դէպի ճակատ գնալու եւ կենաց ու մահու վերջնա-
կան կռիւ մղելու տրամադրութիւն վերստացաւ՝ շնորհիւ Նժդեհի թէ՛ հա-
մոզիչ խօսքին եւ թէ՛ կռիւ վարելու նրա ժողովրդաճանաչ հմտութեան։

Նժդեհն էր որ մղեց շիրակցին կատաղի կռուի։ Նրա խօսքն ու անձ-
նուէր գործն էր, որ մեր զինուորը կռուեց»⁴⁷։ Դէպքերին քաջատեղեակ
ժամանակակիցներ Ա.Ամուրեանը եւ Ռէնը նշում փաստը յիշատակում
են, որպէս վաղուց արդէն անբազրուած, համընդունելի ու անստարկելի
իրողութիւն՝ գրելով.«...Որովհետեւ նոյն ճակատի վրայ(Կարաքիլիսայի,
Ռ. Հ.։) Գ. Նժդեհի մի կրակոտ ճառի հետեւանքով հազարատր հայեր
զենք վերցրին եւ դէպի ճակատ խոյացան»(Ա. Ամուրեան)։ «Բոլշեւիկա-
ցած ռուս զօրքը փախչում է Հայաստանի բարձրավանդակից՝ մեզ թող-
նելով մեր ոսոխի դէմ-յանդիման։ Նորից հերոսներ պէտք էին մեր միջից,
մեր սեփական ուժերով կռուելու եւ ազատուելու։ Եւ ահա Նժդեհը հրաշ-
ունչ նի ճառով դասալքուած հայկական զօրքը քաշում է Կարաքիլիսայի
վրայ, ուր տեղի է ունենում ահաւոր ու վճռական ճակատամարտ»⁴⁸։

Հերոս կապիտան Գուրգէն Տէր-Մովսիսեանի մարտկոցի ռազմիկ,
Դիլիջանի եկեղեցու հանրահասարակ մասնակից,վերոյիշեալ Սերգէյ Թո-
րոսեանը գրում է.«Ճատերից ինձ յաջողուեց լսել միայն երկուսը։ Խօսում
էր Գարեգին Նժդեհը։ Շատերը ծանօթ են Նժդեհի պերճախօսութեան եւ
հռետորական կարողութիւններին։ Բայց այդ օրուան նրա ճառը խոր
տպաւորութիւն թողեց բոլորի վրայ։ Նրան յաջողուեց շատերի սրտի ու
հոգու մէջ նորից վառել հաւատք դէպի մեր ժողովրդի ապագան։ Ընդհա-
նոր ցնցութեան մէջ նա կոչ արեց բոլորին անմիջապէս շարժուել դէպի
Կարաքիլիսէ, բռնել դիրքեր, ուր դեռ կանգնած էին նահանջած զօրամա-
սերից ոմանք եւ կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը։ Յետոյ զար-
մանքով տեսա կապիտան Մովսիսեանին։ Նա բոլորովին կարծէս վերա-
ցած էր։ Իր պարթեւ հասակը, առնական կեցուածքը եւ զինուորականի
կատարեալ ֆիզիքականը ինքնին մեծ տպաւորութիւն էր ձգում։ Իր ուժեղ
ձայնով այդ անզուգական հերոսը համեստօրէն ասում էր.«Ես ճառ խօ-

սել չը գիտեմ. ես զինուորական եմ, ենթակայ հրամաններին։ Բայց մի
բան լաւ գիտեմ։ Եթէ այդպէս շարունակուի եւ մենք չը կռուենք թուրքերի
դէմ, նրանք կը ոչնչացնեն բոլորովին ամբողջ հայութիւնը։ Երկար մտա-
ծելու ժամանակ չը կայ։ Բոլորս մի մարդու պէս դէպի ճակատ»։ Ոգեու-
րութիւնը դառնում է աննկարագրելի։ Վրայ հասաւ զօրավար Նազարբե-
գեանի հրամանը, ուղղուած զօրքին՝ «Յառաջ դէպի ճակատ»։ *Եւ կատա-
րուեց հրաշքը։ Դեռ մէկ օր առաջ բարոյալքուած ժողովուրդը եւ զօր-
քը, մէկ մարդու պէս, նետուեցին առաջ, դէպի կռիւ*⁴⁹...»(ընդգծումն իմն
է, Ռ. Հ.)։ «Գարեգին Նժդեհը,- գրում է Կարօ Գեորգեանը,-1918 թ. մա-
յիսեան ճգնաժամային օրերուն մատոյց անգնահատելի ծառայութիւն-
ներ Կարաքիլիսէի ռազմաճակատին վրայ, զօրավար Թ. Նազարբեկեա-
նի ընդհանուր հրամանատարութեան տակ։ Այդ օրերուն Կարաքիլիսէի
մէջԳ. Նժդեհ խօսեցաւ ճառ մը, որ ալեկոծեց ամբողջ ժողովուրդը եւ
մղեց զայն հերոսական զոհաբերութեանց»⁵⁰։

Դէպքերի մէկ այլ ակնառտես, գլխապետ Արտաւազ Յարութիւնեա-
նը գրում է. «Նժդեհը շատ անգամ ոգեշունչ խօսք ուղղած էր բազմութե-
ան, ի մասնատրի՝ մարտական ուժերուն։ Բայց Կարաքիլիսէի ճակա-
տամարտի նախօրէին արտասանած ճառով՝ ինքն իրեն գերազանցեց։
Ծովածաւալ բազմութիւնը, որ յուսալքուած, ընկճուած, հոգեկան
ծանր տազնապի էր մատնուած, մէկէն փոխուեցաւ հմայուած ու
հիպնոսացած Նժդեհի հրաշունչ խօսքերէն։ Էլեկտրականացած ամ-
բոխը ռազմական բարձր տրամադրութիւն ցոյց տուաւ ու սկսաւ գո-
չել միաբերան. «Կեցցէ՛ Նժդեհը», «Մահ կամ Ազատութիւն»։

«Դէպի ճակատ, այնտեղ է մեր փրկութիւնը», - կը հնչէր Նժդեհի
հուժկու, վճռական եւ ինքնավստահ ձայնը։ Պէտք էր տեսնել, թէ Նժդեհի
ճառէն ետք, ինչպէս պահ մը լքուած, ու այժմ գօտեպնդուած այդ բազ-
մութեան մէջէն մարտական ուժերը համախմբուեցան զինուորական-
ներու շուրջ, եւ՝ *ամբոխային վիճակէն դուրս եկած, կարգապահութե-
ամբ ենթարկուեցան հրահանգներու՝ կազմելով վաշտեր եւ* գումար-
տակներ (ընդգծումն իմն է, Ռ. Հ.)։ Այսպիսով Կարաքիլիսէի ճակատը,
որ բաց էր մնացել եւ թշնամին պիտի կարողանար լիկոյտացիայի են-
թարկել Արարատի եւ Սարդարապատի ռազմաճակատները, ապահովե-
ցաւ ու զոցուցեցաւ բաց աչքերով դէպի մահ գացող զօրամասերով։ Եւ
այդ բոլորը՝ շնորհիւ Նժդեհին»։

«Դիլիջանի եկեղեցու բակում Նժդեհի խօսած ճառը,- յաճախակի
ասել է այդ ճառը լսած Յ. Չարիֆեանը,-Կարաքիլիսէի պատմական ճա-
կատամարտը հոգեբանօրէն կարելի դարձնող խօսք էր։ Նա պատմում

էր եւ զարմանում մարդկային խօսքի հոգիները յեղաշրջող եւ ցնցող ոյժի վրայ»⁵¹:

«...Նոյնն է կատարում նաեւ Գլխիջանի եկեղեցու բակում,–*իր Հայաստան- Արիական նախադիրք Առաջատր Ասիայում* աշխատութեան մէջ գրում է 20-րդ դարի հայ իմաստասիրական մտքի զագաթներից մէկը՝ դոկտոր Հայկ Ասատրեանը,–ուր ծերունի զօրավար Նազարբեգեանը խեղդող արցունքով մարտի հրաւեր էր կարդում իր բանակին եւ Գարեգին Նժդեհը իր ցնցող ճառով բորբոքում էր հայ զօրքի խանդը...⁵² Յոյժ արժէքատր է դէպքերին ակնատես, դաշնակցական յայտնի գործիչ Վահէ Արծրունու (Ծնուել է 1884 թ., Շատախի գաւառի Կողբ գիւղում, մահացել 1958 թ., Թեհրանում, Ռ.Հ.) վկայութիւնը: Նա գրում է. «Մեր զօրքը, կարծէք, յենակ կորսնցուցած էր եւ կը դժուարանար ապահով առանցք մը գտնել՝ ինքնապաշտպանութեան համար...

Այս պայմաններուն մէջ յուսարումն ընդհանրացաւ եւ խորացաւ, կարգը եւ կանոնը տեղի տուին բնազդային աննպատակ նահանջի: Անդրամիկը, որ կը պահէր աջ թելը, օրերով ինքզինք կտրեց յարաբերութիւնէ ընդհանուր հրամանատարին հետ... Բազմաթիւ սպաներ եւ ահագին թուով զօրք բռնեցին Սանահինի գիծը դէպի Թիֆլիս եւ, վերջը վերջ, չնչին բացառութիւններով կտորուեցան: Զօրավար Արեշեանը, անպատասխանատու կերպով մեկնած լինելով Թիֆլիս, զօրավար Նազարբեգեան անոր տեղ զօրամասի ճակատի պետ նշանակեց գնդապետ Բէկ-Մամիկոնեանը: Իր անցեալէն դատելով՝ հայու եւ Հայաստանի հետ կապ ու առնչութիւն չունեցող մէկը, բնատրութեամբ՝ դիւրագրգիռ, ենթակաները իրարու հետ շողկապելու ձիրքէն գրեթէ զուրկ, մանաւանդ՝ շատերուն ծանօթ որպէս Մուրատի եւ Սեպուհի վաշտը Կարսում զինաթափելու ուղղակի պատճառ: Դժբախտ էր այս ընտրութիւնը՝ յատկապէս այս դժբախտ օրերուն համար...

Հայկական զօրքը... լքեց հեռացաւ Ղարաբախի սանձան դիրքերէն՝ առանց թշնամիի հետքը տեսած ըլլալու: Իրաց այս կացութեան առաջ գնդապետ Բէկ-Մամիկոնեան հրահանգեց զօրամասի բոլոր մասերուն, նկատի ունենալով ստեղծուած դրութիւնը, հինգ օրուայ զէնք ու մթերք վերցնել՝ աւելի հեռուներ մղելու պարտիզանական կամ խմբական պայքար: Այս հրահանգը, եթէ շատերուն ճիշտ ուզած եւ սպասածն էր, պակաս չէին նաեւ անոնք, որոնք վրդովուեցան՝ տեսնելով հայ հրամանատարութեան աններելի տկարութիւնը: Աւելի քան վրդովմունքը... որովհետեւ շատ չանցած ամէն կողմէ ծայր տուաւ բացայայտ դժգոհութիւն: Հարկադրուած զօրավար Նազարբեգեանի կարգադրութեամբ՝ գն-

դապետ Բէկ-Մամիկոնեան Գլխիջանում կը հրաւիրէ խորհրդակցութիւն, աւելի շուտ՝ տեսակ մը զինուորական խորհուրդ... Բազմամարդ եւ խառը ժողովի մը ներկայութեան գնդապետ Բէկ-Մամիկոնեան ճնշուած եւ յուսահատ տոնով մը պատկերացնելէ յետոյ ստեղծուած կացութիւնը՝ յանուն զօրավար Նազարբեգեանի յայտարարեց, թէ հնարաւորութիւն չտեսնելով կռիւր շարունակելու, իրաւունք կը տրուէր հեռանալ ցանկացողներուն շարունակել իրենց ճամբան, իսկ հեռանալ չկամեցողները պէտք է մնային իրենց պատկան զօրամասերուն մէջ ու սպասելին նոր կարգադրութեան: Բոլոր թնդանօթներն ալ պէտք էր անմիջապէս փոխադրել Զիրուխի գիւղը ու թաղել ապագայ գործածութեան համար: Ծնշող, ուղղակի խեղդող պահ... Շատերը կ'սպասէին նման յայտարարութեան մը, շատեր ալ ուրիշ ելք չէին տեսներ: Բայց փառք եւ պատիւ Հայ արեան: 4-րդ հրետանիի (մարտկոցի) պետ, երիտասարդ սպայ Գուրգէն Տէր-Մովսէսեանը՝ կրակ կտրած վեր ցատկելով իր տեղէն, որոտաց. «Ես չեմ հնազանդի այդ որոշման: Դա դաւաճանութիւն է: Ո՛չ ոք իրաւունք ունի այդպէս վարուելու Զայոց ճակատագրի հետ: Ես իմ թնդանօթներով այս իսկ թուէին կը մեկնեմ ճակատը՝ մեռնելու: Ով տղամարդ է եւ հայու արիւն ունի իր երակներում՝ թո՛ղ իմ ետեւից գայ»: Մթնոլորտը մէկէն փոխուեցաւ: Կրտսեր սպայի մը համարձակ ժեստը սեւ ստուեր մը ձգեց զօրահրամանատարութեան հրահանգին վրայ:

Ընդհանուր ոգեւորութիւն մը ծայր տուաւ: Նժդեհ, հետեւելով Տէր-Մովսէսեանին, ոգեշունչ ու կրակոտ ճառ մը խոսեց՝ կրկնելով եւ աւելի պարզելով իր նախորդի սպարտական մտքերը: Բախտի զուգահիշարեամբը՝ ճիշտ այդ ժամանակ հասաւ զօրավար Սիլիկեանի հեռագիրը, որով հաղորդելով Սարդարապատի զոյապայքարը, կ'առաջարկէր Ղարաբախի թեւէն հարուածել թշնամիին եւ թոյլ չտալ, որ ան նորոնոր ուժեր հասցնէր իրենց դէմ (*Ընդգծումներն իմը*, Ռ.Յ.): Տեղի տուաւ նաեւ ընդհանուր հրամանատարութիւնը: Գնդապետ Բէկ-Մամիկոնեան, անտես առնելով քանի մը թուով առաջ կարդացուած իր հրահանգը, հրամայեց անմիջապէս կազմակերպուել եւ վերադառնալ Ղարաբախի թափուր մնացած դիրքերը: Տէր-Մովսէսեանը իր հրետանիով, Նժդեհը իր հարիւրակով խօսքէն անցան կենդանի գործի, ու «հուռաներու» խլացուցիչ թնդիւնի տակ բազմահազար յուսաբեկ բազմութիւն մը, թուապէս սիրտ առած, դիմեց դէպի ճակատը: Զօրավար Կամազեան մահացու հարուածներու տակ զօրատրն ու անզօրը բէնց դէպի առաջատր դիրքերը: Գլխիջանէն մինչեւ Ղարաբախի լեռն ու ձորը նոր շունչ, նոր կենսանք ստացան:

Սպայ Գուրգեն Տեր-Մովսեսեանը աճապարեց ու յաջողութեամբ գրաւեց համար 750 բարձունքը, անհաւասար ուժերու դէմ կռուեցաւ եւ հերոսաբար ալ հոն ինկաւ՝ իր պարտքը լրիւ կատարած, իր ու հայ ժողովուրդին երազն իրագործած: Իր բոլոր փորձերը անյաջող անցնելով համար 750 բարձունքին դէմ՝ թշնամին իր ծանրութեան կենտրոնը դարձուց դէպի ձախ թեր՝ նպատակ ունենալով գրաւել համար 920 բարձունքը: Միսալ կարգադրութեան մը շնորհիւ գնդապետ Սամարցեանի ուժերը փոխանակ Մեծ Մայմեխի, բարձրացան Փոքր Մայմեխը: Իսկ մինչ այդ, թշնամին աննկատ կերպով գրաւելով նախորդը, անկէ սկսեց հարուածել աջ ու ձախը՝ պատճառելով մեծամեծ կորուստներ եւ հարկադրելով նոր նահանջ: Սպաներ Արշակ Բէկ-Փիրումեանց, Օննիկ Վէրիլեան, Յուսիկ Բէկ-Փիրումեան, Սամարցեան, Նժդեհ եւ շատ ուրիշներ հերոսաբար շարունակեցին կռիւը, մինչեւ որ ուժասպառ լինելով, կամաց-կամաց տեղի տուին, եւ Տղմուտի ափանց պատմութիւնը կրկնուեցաւ Ղարաքիլիսէի ժեռուտ լեռնաշխարհին մէջ: Հայ զօրքը նահանջեց, բայց անոր նահանջը յաղթանակ էր, այդ ընդունեց տաճիկ հրամանատարութիւնը: Իրական պայքարը վերջացաւ, Հայաստանի անկախութիւնը հռչակուեցաւ վճռական բռնակի մը եւ ի գին հազարաւոր երիտասարդ կեանքերու: Սարդարապատ սկսեց, Բաշ Ապարան շարունակեց եւ Ղարաքիլիսէ վերջացուց հայ ազատագրական պայքարի վերջին փուլը:

Երեք ճակատներումն էլ հայ սպան վճռական դեր կատարեց: Ու հայ սպայութեան մասին խօսելիս միշտ պէտք է յիշել Սարդարապատը, Բաշ Ապարանը եւ Ղարաքիլիսէն: Թո՛ղ ոմանք լքեն իրենց դիրքերը եւ անձնական փրկութիւն փնտռեն Թիֆլիս եւ այլուր: Բայց անոց օրինակին չեն հետեւեր անկի սրտոտ ու արի Տեր-Մովսեսեանները, Փիրումեանները, Սամարցեանները, Նժդեհները եւ քանի մը տասնեակ իրենց զինակից զօրականներ»⁵³:

Կապիտան Գուրգեն Տեր-Մովսեսեանի հրետանային 4-րդ մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար, շտաբս-կապիտան Պետրոսեանցը, իրենց մարտկոցի ռազմական գործողութիւնների մասին զեկուցագրում վկայում է. «...Յանկարծ լուսեցին զանգերի դողանջներ, բոլորը վազեցին դէպի զանգերը, վազում էին սպաներ, զինուորներ, փախստականներ՝ չիմանալով ինչ է պատահել, բայց բոլորի աչքերում փայլում էր փրկութեան յոյսը, գտնուեցին ուժեղ ոգով մարդիկ՝ բոլորին կոչ անելով գնդեր կազմել եւ յարձակուել թշնամու վրայ... Ինձ համար, որ գրչի մարդ չեմ, դժուար է նկարագրել Հայաստանի համար այդ պատմական օրը, որը գուցէ թէ մեր ժողովրդին տուեց ապրելու իրաւունք: Մի քանի ժամում

ձեւաորոնցին մի քանի գնդեր»⁵⁴: Չեռքիս տակ է Դիլիջանի եկեղեցու բակում հաւաքուածներից մէկի՝ դիլիջանցի Բագրատ Սահակեանի (հաւանաբար ծնունդ է անցեալ դարի սկզբին, մահացել 1980-ականների վերջերին) արժէքատր, ինչ որ տեղ եզակի յուշերը: Եզակի այն իմաստով, որ նախ՝ մենք առայժմ դիլիջանցի ուրիշ որեւէ այլ յուշագիր չունենք, որը նկարագրէր նշուած իրադարձութիւնը: Եւ երկրորդ՝ Բ. Սահակեանը յիշողութեամբ վերարտադրում է նաեւ Դիլիջանի եկեղեցու բակում Նժդեհի արտասանած ճառի որոշ հատուածներ, ինչն առայժմ որեւէ այլ աղբիւրում չի յաջողուել գտնել: Նկատի ունենալով, որ դա այդ պատմական ճառի՝ մեր ձեռքի տակ եղած միակ վերարտադրութիւնն է, որից կարելի է թէկուզեւ շատ մօտաւոր, բայց այնուամենայնիւ ինչ ոչ չափով պատկերացում կազմել նրա ճառի բովանդակութեան մասին, մեջքերում եմ գրեթէ ամբողջութեամբ. «...Բնութիւնն ուրախանում էր, իսկ մեր սրտերը սեւացել էին: Թէ ինչ էր սպասում մեզ, ինչ արհաւիրք էր նախապատրաստում, բնութիւնն անտեղեակ էր... Մի ներքին ձայն անբացատրելիօրէն կանխագգում էր մի նոր դժբախտութիւն, որ բարբարոս բուրքերը նոր արշաւանքի են նախապատրաստում, ինչից յետոյ թողնելու էին ծխացող, աւերակուած գիւղեր, քաղաքներ, մեռնողների յուսահատ հառաչանքներ, արեան լճակների մէջ թաւալող մանուկներ... Այս եւ նման մտքեր էին թափառում բոլորիս գլուխներում, ամէն մէկը մի ելք էր որոնում... Եւ հանկարծ անհանգիստ, անսովոր, ահագոտ դողանջեցին եկեղեցու զանգերը: Մի՞թէ... բուրքերը յարձակման են անցել եւ մօտենում են Դիլիջանին... Մեր տունը քաղաքի ծայրամասերում էր: Թաղի բնակիչները դուրս թափուեցին տներից ու բակերից: Բոլորը շնչասպառ դիմեցին դէպի եկեղեցի: Աւելի անհանգիստ էին գաղթականները... Եկեղեցու բակն ու շրջակայ փողոցներն արդեն լեւի-լեցուն էին մարդկանցով, ասեղ զցելու տեղ չկար: Ոչ ոք չգիտէր թէ ինչ է պատահել: Կանայք եկեղեցու պատերն էին համբուրում, ծեր ու մանուկ սարսափահար դողում էին, այս ու այն կողմ նայում՝ մի քան իմանալու յոյսով:

Այս համընդհանուր անորոշութեան ու ժխորի մէջ լսուեցին ձայներ. «Նժդեհը, Նժդեհ սպարապետը... Նժդեհը եկել է... գալիս է..., ով է Նժդեհը... ինչու՞ է եկել»:

-Ուշադրութիւ՛ն, հանգստացէ՛ք, լաց ու կոծով ոչինչ չեք անի, հիմա կը գայ պարոն Նժդեհը, նա ուզում է խօսել ձեզ հետ... լռութիւ՛ն:

Ժողովուրդը մի պահ քարացաւ, աղմուկ-աղաղակը դադարեց... Բոլորն սպասում էին:

-...Ահա գալիս է հայոց սպարապետը՝ պարոն Նժդեհը, - յուժկու ձայ-

նով որոտաց հսկա զինուորականը:

...Բոլորը լռեցին, ետ-ետ գնալով՝ ճանապարհ էին բացում փոքրիկ գո-րախմբի համար, որի առջեից զինուած մարդկանցով շրջապատուած գալիս էր մի զինուորական՝ արաբական գեղեցիկ նժոյգի վրայ: Նժոյգին այնպէս էր նստած ձիու վրայ, որ թու՛մ էր՝ ձուլուած է նրան: Շրախմբում մօտ երկու տասնեակի չափ կը լինէին, բայց ասում էին թէ նրա զօրաբա-նակը մօտ քսան հազարի է հասնում...

Նժոյգին լուռ ու մտահոգ մօտեցաւ բարձր պատին, որտեղ կանգնած էր հսկա զինուորականը...

Գիլիջանի գաղթական ուսուցիչ պարոն Օսէփը բարձր ձայնով գոչեց.

—Կեցցէ՛ պարոն Նժոյգինը, բարբարոս տաճիկների ահ ու սարսափը, մեր փրկիչը:

Նժոյգինը ձեռքը բարձրացրեց, ամբոխը լռեց... Նժոյգի աչ ոտքի թաթը փաթաթուած էր բինտով, առանց սապոգի էր. երեսի վիրատրուած էր: Ամբոխը կանգնած էր տխուր, յուսալուծ... Չէր լսում ոչ մի շշուկ, բոլորը սպասում էին թէ ինչ է ասելու Նժոյգինը...

Նրա ձին անհանգիստ ծառս էր լինում: Նժոյգինը փորձառու արտիստի նման իր ազդու եւ կրակոտ հայացքով չափում էր ամբոխին եւ իր այդ դիրքով աւելի էր գրգռում ամբոխի հետեքրքրութիւնը: Վերջապէս, զսպե-լով ամենի նժոյգին, նա բարձր ձայնով սկսեց խօսել.

—Սիրելի՛ ժողովուրդ, թանկագին եղբայրներ եւ քոյրեր, թէ՛ կռիւների բովով անցած իմ զինակիցներ... Թշնամին ոտնատակ անելով Անդրկով-կասեան հաշտութեան պայմանագիրը՝ յարձակուել է Ալէքսանդրապոլի խաղաղ բնակչութեան վրայ: Թուրքական հրոսակները Լենկթեմուրի, Չինգիզ խանի եւ միւս բարբարոսների օրինակով արշաւում, մահ ու աւ-էր են տարածում մեր հայրենիքի վրայ... Այս րոպէիս էլ լսում են սրա-խողխող արուածների հառաչանքները... Ռուսական զօրքը նահանջել է, ռուսները հեռու են մեզանից, Ռուսաստանում դրութիւնը խառն է, խառ-նաշփոթութիւն է նաեւ նրանց ղեկավարութեան մէջ, նրանք չեն կարող մեզ օգնութեան գալ... մեր առաջ թուրքերն են, Ադրբեջանը՝ մինչեւ ատամները զինուած... Այս բոլորից օգտուելով՝ թուրքերը անարգել ար-շաւում են եւ իրենց ետեից թողնում կոտորած, ւաւրածութիւն... Նրանք այժմ արշաւանք են ծրագրում դէպի Երեւան, դէպի մեր սուրբ Էջմիածի-նը... Թուրքերը որոշել են ֆիզիկապէս ոչնչացնել հայ ժողովրդին եւ մեր հինատուրք քաղաքներում ու գիւղերում մահմեդական բնակչութիւն հաս-տատել, ոչնչացնել մեր սուրբ հաւատը, աշխարհի երեսից ջնջել հայ անունը:

Բայց, սիրելի հայրենակիցներ, սիրելի՛ ժողովուրդ, մի՞թէ մենք թոյլ կտանք մեզ հետ այդպէս վարել:

Ո՛չ, հազար անգամ ո՛չ:

Մենք մեր արիւնով կը պաշտպանենք մեր հայրենիքը: Մի՞թէ մեր երակներում չկայ Վարդան Մամիկոնեանի, Մեծն Տիգրանի, Աշոտ Եր-կաթի ու միւս քաջերի արիւնից գէթ մի՛ կաթիլ:

Ես համոզուած եմ, որ եթէ մենք համախմբուենք, դեն նետենք վախն ու յուսահատութիւնը, շատ կարճ ժամանակում ոչ միայն կը կանգնեց-նենք թշնամու առաջխաղացումը, այլեւ ետ կը գրաւենք մեր կորցրած տարածքները, մեր պատմական քաղաքներն ու գիւղերը: Ես համոզուած եմ, որ այդ դէպքում քրիստոնեայ միւս երկրները... Անգլիան, Ֆրանսիան մեզ օգնութեան կը գան, նրանք չեն թողնի, որ հնագոյն, հարուստ պատ-մութիւն եւ նշակոյթ ունեցող քրիստոնեայ Հայաստանը ոչնչանա թուրք բարբարոսների ոտքերի տակ»:

Հանկարծ քարացած ամբոխի միջից լսուեցին նախ թոյլ, յետոյ բաւ-ական բարձր ձայներ. «Անգլիան ու Ֆրանսիան շատ հեռու են, մենք ռուսներին ենք ուզում... Պարոն Նժոյգեհ, ռուսներին խնդրէք գան մեզ օգ-նութեան»:

—Սիրելի՛ ժողովուրդ, — շարունակեց Նժոյգինը, — ես լաւ եմ ճանաչում տա-ճիկներին, ես Բուլղարիայում մասնակցել եմ բուլղարների ազատագրա-կան պայքարին թուրք բարբարոսների դէմ... Բաւական է մի ուժեղ հարու-ած, եւ թուրքերը կը բռնեն փախուստի ճանապարհը, ինչպէս այդ եղաւ Բուլղարիայում... Բուլղարիան ազատագրուեց տաճկական լծից, մենք ինչո՞վ ենք պակաս բուլղարներից... Ես հաւատում եմ մեր ուժին, եւ մենք կը յաղթենք առանց ռուսների, առանց ուրիշ ուժերի: Միայն հարկատր է սքափուել: Ով գէնք չունի՝ թող վերցնի, ով ձի չունի՝ գտնի, ես կառաջնոր-դեմ ձեզ դէպի Սուրբ պատերազմ: Եթէ մենք ձեռքներս ծալած նստենք սպասենք, որ ռուսը կամ անգլիացին մեր փոխարէն կուեն եւ մեր հողերը մեզ վերադարձնեն՝ ոչնչի չենք հասնի: Ի՛մացէ՛ք, մեծ ժողովուրդներն էլ ուժեղներին են պաշտպանում: Թոյլերին տէր կանգնողներ չեն լինում: Վարդանանց սուրբ պատերազմի ժամանակ այս նոյն խօսքերով էր դի-մում քաջ Վարդանն իր զօրականներին: Հիմա ես կրկնում եմ նրա խօս-քերը եւ կոչ եմ անում. մահ կամ ազատութիւն: Ուրիշ ճանապարհ չկայ»⁵⁵:

Խիստ կարեւոր է այն հանգամանքը, որ, ինչպէս միաբերան նշում են բոլոր ականատեսներն անխտիր, Նժոյգինը ոչ թէ սոսկ իր ճառերով է հո-գեփոխել կռուի տարել յուսահատ ու հոգեբանօրէն պարտուած բազմու-

թիններին, այլեւ, որն ամենակարեւորն է, որպէս յառաջապահ՝ *հայ գործի առաջին բախումը թշնամու հետ առաջնորդել ու վարել է ինքը*: (Բանակի գլխաւոր հրամանատար Թ.Նազարբեգեանը *թուրքերի դէմ հակայարձակումի առաջին հրամանը* տուել է Նժդեհին, որն էլ իր գործնաստով *Դիլիջանից առաջինն է թշնամու վրայ նետուել կռուի*):

Մէջբերում են այս ամենը հաստատող վկայութիւններ, որոնց մեծ մասը, ինչպէս արդեն նշել են, Ղարաքիլիսայի մասին գրուած գիտական աշխատութիւններում շրջանառութեան մէջ չի դրուած:

«Վերջին պայքարի խիզախ քայլը պատկանում էր Դիլիջանին, ուր կենտրոնացել էին հայ գործի կազմալուծուած մասերը եւ փախստականների հոծ բազմութիւնը: Նրանց մէջ ռազմական տրամադրութիւն ստեղծողն եղաւ ժողովրդական հերոս Նժդեհը: (Այս ու յետագայ ընդգծումներն իմն են, Ռ.Յ.): Նրա եւ մի քանի էնտուզիաստ գործիչների կրակոտ ճառերի վայրկեանական ազդեցութեան տակ վճռուեց դիմաւորել թշնամուն Փամբակի լեռներում, բաց կրծքով դուրս գալ նրա դէմ եւ մի անգամ էլ ցոյց տալ արար աշխարհին, որ հայը... զիտէ հերոսաբար կուել եւ փառաւոր մահով մեռնել... Վախկոտ ու թուլամորթ ամբոխը վերածնունդ է: Նրա միջից ջոկուում են հազարաւոր կամաւորներ, կազմուում են ռազմիկ գնդեր եւ շարժում առաջ... Աւանգարդը հանդիսանում է Նժդեհի հեծելազունը, որ յետագայում, Հաջի-Ղարայի (այժմ՝ Լեռնապատ, Ռ.Հ.) տակ երեւան է հանում առասպելական յանդգնութիւն: Հայ գործի անսպասելի վերադարձը նոր ոգի եւ նոր ախիւն է ներշնչում Փամբակի քրտն... մասսային: Առաջ է գալիս՝ առանձնապէս Ղարաքիլիսայում՝ անսահման ոգեւորութիւն: Թշնամուն դիմաւորելու վերջին փորձը փոխուում է ժողովրդական պայքարի: Դա կուի պատրաստութիւն չէր, դա անմահութեան տօն էր: Ամենքի դէմքի վրայ փայլում էր ցնծութիւն. բոլորն էլ իրանց զգում էին ազատ ու հպարտ: Անծանօթ մարդիկ իրար պատահելիս գրկախառնում, հոնգուր-հոնգուր լալիս էին... Պատանուց սկսած մինչեւ զառամեալ ծերունին զէնք են վերցնում-կուի շտապում. դեռահաս կոյսից մինչեւ պառաւ գեղջկուհին գործի են անցնում-թիկունք ամրացնում... Նժդեհի խումբը Դաճրբազի ու Դաջի-Ղարայի արանքում գերմարդկային ծիգեր է գործադրում կանգնեցնելու թշնամու բազմապատկուած ուժի ներխուժումը. նրա մի խումբ քաջերն առասպելական հերոսների նման հրաշքներ են գործում»⁵⁶: Ականատես Վախտանգ Տէր-Յարութիւնեանը շեշտում է. «Նժդեհի իր կազմակերպչական այդ փրկարար դերը շուտով գլուխ բերելուց յետոյ, *ինքն անձամբ* նետուեց օրհասական կռուի մէջ, առաջին *դիր-*

*քերում, առաջնորդի դերով՝ կենդանի գործի կենդանի օրինակ հանդիսանալով իր զինակից-պաշտօնակիցների եւ զինուորուքեան»*⁵⁷: «Արինահեղ ճակատամարտ մղուեց Փամբակի կիրճում, Ղարաքիլիսի մօտերը, - գրում է Հայկ Ասատրեանը, - ուր գոր. Նազարբեգեանի հրամանով, Գ. Նժդեհի գործնասը, մայիսի 24-ին, սկսեց կռիւը, որ յաջորդ օրը, նոր ոյժերի ժամանումով, վերածուեց ընդհանուր յարձակումի: Թուրքերը ջարդուած՝ նահանջեցին դէպի Համամլու: Չորս օր քաջութեան պանծալի գործեր կատարուեցին այդտեղ: Հայ գործն անընդհատ գրոհում էր թուով գերազանց թշնամու դիրքերը: Թիկունքից սպասում էր Անդրանիկի հարուածը, որ դժբախտաբար, ինչ որ թիրիմացութեամբ, տեղի չունեցաւ եւ թուրք գործը ոչ միայն փրկուեց վերջնական ոչնչացումից, այլեւ մայիսի 27-ի կէսօրին անցաւ հակայարձակումի, վերագրաւելով իր մի քանի դիրքերը: Փամբակի կիրճում թափուած էին մօտ 5000 դիակներ: 2000-ը հայկական, 3000-ը թրքական»⁵⁸: Իր յուշերում Ս. Թորոսեանը շեշտում է. «Դիլիջանի եկեղեցոյ զաւթի մէջ տեղի ունեցած միտինգից յետոյ, ամեն ոք շտապում էր իր կարելին անել՝ օգնելու համար ճակատին... [դէպի ճակատ] առաջին շարժողները եղան Նժդեհի ծիաւոր գունդը եւ մեր մարտկոցը» (նկատի ունի կապիտան Տէր-Մովսիսեանի մարտկոցը, Ռ.Հ.):⁵⁹ Հիմնուելով նաեւ օտար աղբիւրների վրայ, այդ հանգամանքը մատնանշում է նաեւ ֆրանսահայ պատմաբան Ս. Աֆանասեանը. «Մայիսի 24-ին Ղարաքիլիսայից հետախուզութեան մեկնած հայկական յառաջապահ խումբը (Նժդեհի խումբն էր, տե՛ս յաջորդիւ, Ռ.Հ.): Դարպասի մօտ հանդիպում է թշնամուն»⁶⁰: «Ժամերգութիւնը վերջացաւ... Յառաջապահ հեծելագործը շարժուեց դէպի Ղարաքիլիսա տանող ճամբան. եւ Նժդեհի հետախուզական գործասիւնը առաջինը խաղաց դէպի թշնամին՝ նրա գորութիւնն ու վեր դիր պարզելու համար:

...Հայ գործերի այս յեղակարծ յայտնուելը նորէն սրտապնդեց դժբախտ աւանի բնակիչներին, արիւթիւն եւ ոգի ներշնչեց յուսահատ ժողովրդին, որ ոտքի ելաւ մեր մարտիկներին օգնելու, ինչով կարող էր: Նոյնը կատարուեց եւ Ղարաքիլիսէի հարեւան Ղշլաղ գիւղում, ուր Նժդեհի գորասիւնի մասերը դարան մտան, շրջակայքի անտառապատ բարձունքներին հսկելու համար: (Այս եւ յաջորդ բոլոր ընդգծումներն իմը, Ռ.Հ.):

Շուտով երեւացին թուրք յառաջապահները եւ անգիտակ դարանակալ մեր ոյժերի ներկայութեան, ծուղակն ընկան: Կռիւր բորբոքուեց բոլոր դարաններից: Թուրքերը ծանր կորուստներով փախստական նետուեցին դէպի Ազնուր՝ առանց կարողանալ տանելու անգամ իրենց վիրաւ-

որները: Յառաջապահ մասերի այս բախումը եւ մերոնց յարթանակը (Իմա՝ Նժդեհի հրամանատարութեամբ, Ռ. Հ.:) ընդհանուր ոգեւորութիւն առաջ բերեց մեր զօրքերի շարքերում: Լաւ սկսուածք էր մեծ ընդհարումի... Ճակատը կազմուած էր եւ մեր գլխատր ուժերը հետզհետէ հասնում էին, դիրքեր գրաւում: Այստեղ էր արդէն գնդապետ Ղորղանեանն իր հեծելազօրքով: Հետզհետէ եկան գնդապետ Սամարցեանն իր հետեւակ զօրաբաժինով եւ գնդապետ Յովսէփեանը, որոնց շուտով պիտի միանար գնդապետ Ապրեսեանի զօրամասը...

Մեր առաջին յաջողութեան (իմա՝ Նժդեհի զօրաջոկատի, Ռ. Հ.:) լուրը կայծակի արագութեամբ անցել էր Գուգարաց սար ու ձորով եւ ո՛վ հրազէն ունէր եւ բազկի ուժ, շտապում էր ճակատ... Մի օր առաջ թշնամուն աղ ու հացով ընդառաջող Ղարաքիլիսան այժմ ոտքի էր ատամները սեղմած, քիկունքն իր օջախին եւ հրացանը ձեռքին աներկիւղ... Մեր մէկի դէմ տասն թուրք էր ճակատում...

Մայիսի 26-ին, կռիւ 3-րդ օրը, թուրքերի մի նոր յարձակում ծայր տուեց: Կէս օրին մօտ ամբողջ ճակատի վրայ, որ ձգում էր տասնեակ քիլոմետր տարածութեան վրայ, արիւնահեղ բախումը երկու բանակների վերստին աւելի կատաղի, աւելի յամառ քան երբեք: Հաջի Ղարայ քաղաքը գիւղին նայող բարձունքների վրայ ամբացած թշնամին կրակ բացեց մեր ձախ թելի դէմ, ուր գործում էր գնդապետ Սամարցեանի զօրաբաժինը, որին շուտով պիտի միանար Նժդեհի զօրասիւնը: Մեր ձախ թելը ուժգին քնդանօթային կրակով ծեծում էր թուրքերի դիրքերը, որից յետոյ՝ Սամարցեանի եւ Նժդեհի միացեալ ուժերի գրոհն սկսուեց... մեր ձախ թելի յարթութիւնը կատարեալ էր: Այս մեծ յաջողութեամբ կնքուեց երկրորդ օրուան ճակատամարտը:

Անդրանիկից լուր չկար: Առաւօտից սկսեալ բոլորի աչքը դարձած էր այն կողմը, որտեղից նա կարող էր յանկարծ յայտնուել իր երեք հազարանոց, լաւ սպառազինուած զնդով: Եւ նա չկար ու չկար:

Եւ եթէ մինչեւ լուսաբաց Անդրանիկը կամ որեւէ այլ օժանդակ ուժ չհասներ, մերոնց վիճակը օրհասական դառնալու չափ վտանգուած կարելի էր համարել: Սպասումի մղձաւանջային գիշերն անցաւ, եւ աւա՛ղ, ո՛չ մէկը հասաւ եւ ո՛չ միւսը: Ո՛չ ռազմամթերք, ո՛չ հաց... Մայիսի 28-ին, ճակատամարտի չորրորդ օրը, ողբերգական առաւօտ էր բացում մերոնց վրայ: Մեր ռազմամթերքը սպառուելու մօտ էր եւ մեր քնդանօթները մեծ մասամբ լռութեան դատապարտուած... Ջօր. Նազարբէկեան ժամանակին զգաց վտանգը եւ հակառակ մեր զօրքերի տոկունութեան եւ անընկճելի արիութեան՝ ընդհանուր նահանջի հրաման տուեց:

Եւ 1918 թ. մայիսի 24-ին, կէսօրից յետոյ ժ. 3-ին սկսուած ահեղ ճակատամարտը Ղարաքիլիսէի առջեւ դադարում էր մայիսի 28-ին, կէսօրէ ետք ժ. 3-ից 20 ընդմէջ: Մեր բանակը քաշուեց Բօզքենու-Նիկիտինօ գծի վրայ, նորէն փակելով թշնամու ճամբան Ղարաքիլիսէից դէպի Երեւան ուր եւ մնաց մինչեւ Բաթումի դաժճնագրի ստորագրութիւնը... Ղարաքիլիսի ճակատամարտում ո՛չ յարող եւ ո՛չ յարթած կար. այլ երկու ջարդուփշուր բանակներ նորէն դէմ-դէմի մնացին:

Հայ ցեղը այդ օրերին սրբազան Աւարայրը ոգեկոչեց եւ իր մեծ հայրերի ռազմական կորուվով կեանքի եւ մահու մարտի ելաւ... Եւ Հայոց աշխարհի սիրուն, երկու հազարի չափ մեր ընտիրները իրենց մատաղ կեանքը զոհեցին: Եւ թշնամին, որ մի քանի անգամ աւելի կորուստներ ունեցաւ, երկար ժամանակ պիտի յիշէ այդ ճակատամարտը, ինչպէս պարսիկները Աւարայրը (451 թ.) եւ արաբները Վարդանակերտը (702թ.): Արդարեւ, այդ երեք հերոսամարտերը մեր պատմութեան ակեծուփ ծովից դուրս ցցուած գրանիտ ժայռեր են, որոնց վրայ երեք անգամ հայ հայրենիքի թշնամիների կատաղութեան պիքները փշրուեցին:

Եւ եթէ Աւարայրը հզօրագոյն սատարիչն եղաւ Մամիկոնեան Մարգարայանութեան աշխարհում, եւ Վարդանակերտը Բագրատունեաց փառաւոր տոհմի ուղին հարթեց դէպի հայկական գահը, Ղարաքիլիսէ-Սարդարապատը մեր օրերում Հայաստանի Հանրապետութեան հիմքերը ձգեցին, Միացեալ եւ անկախ Հայաստանի համար»⁶¹:

Այժմ մէջբերենք նաեւ ճակատամարտին մասնակցած զինուորականների՝ մեր ձեռքի տակ եղած շատ սուղ վկայութիւնները ճակատամարտին Նժդեհի դերակատարութեան մասին:

Ղարաքիլիսայի դիւցազնամարտի հերոս դեկավարներից մէկը՝ հեծելազօրային բրիգադի հրամանատար, գնդապետ Նիկոլայ Ղորղանեանը (Կորզանով) զօրավար Նազարբէկեանին յղած իր 1918 թ. յուլիսի 4-ի զեկուցագրում նշում է. «Մայիսի 24-ին Ղարաքիլիսայում էր գտնուած միացեալ հեծելազօրային ջոկատը, որը բաղկացած էր առաջին հեծեալ զնդից, Ղարսի զնդից եւ կամաւորների (Իմացի՛ր Գ. Նժդեհի կազմաւորած, Ռ. Հ.:) ջոկատներից: Թրեքի քանակը՝ 2000 եւ 4 քնդանոթ՝ շտաբ կապիտան Մոսէսովի (Գուրգէն Տէր-Մովսիսեանց, Ռ. Հ.:) տնօրինութեան տակ: Համաձայն Ղարաքիլիսայի ջոկատի պետի մայիսի 24-ի հեռագրի՝ իմ առջեւ խնդիր էր դրուած առաջ շարժուել Արջուտ, Մարալ-Կուրսալայ գծով, որտեղ ահրաժեշտ էր դնել պահակային հսկիչ զօրանա՛ս՝ ունենալով հսկիչների ռեզերվ: Մայիսի 25-ի առաւօտեան շտաբի պետ, պորուչիկ Եղիազարովի եւ պորուչիկ Նժդեհի հետ՝ իր 40 ձիաւորներով եւ դուրս

եկա հետախուզութեան: Արջուտի կիսակայարանի մօտ հեռադիտակով նկատելի էր խճուղու աջ ու ձախ կողմերից սարերով շարժող հակառակորդի ոչ մեծ խմբեր՝ 10-15-ական մարդկանցով: Ես ենթադրեցի, որ դրանք հակառակորդի հետախույզներն են: Վերադառնալով Դարբաս՝ ջոկատի մօտ, ես մէկ հեծելավաշտ առաջ մղեցի դէպի Արջուտ, որի առաջ խնդիր դրեցի Արջուտ-Սարալ-Կուրսալի զծում իրականացնել հետախուզութիւն՝ ապահովելու այդ գիւղերի գրառումը: Հեծելավաշտը ուղարկելու պահին ես Նժդեհից տեղեկացել էի, որ իմ աջ թեւում՝ սարերում նա ձերբակալել է հակառակորդի մօտ 100 հայդուկներ: Երբ առաջ շարժող հեծելավաշտը մօտեցաւ Արջուտին, հակառակորդը նրա վրայ քնդանօթային կրակ բացեց, որից յետոյ ինձ զեկուցեցին, որ հակառակորդի հետեակը շարժում է Արջուտ-Կուրսալի ճակատով: Եւ սկսուեց երկրորդ մարտը 750 բարձրունքի ուղղութեամբ: Շտաբս-կապիտան Մոստովի անձնուրաց գործողութիւնները, դիմահար գնդակոծութիւնը թուրքերի բաց դիրքերին՝ կասեցրին հակառակորդի բուռն գրոհը: Մեր հետեակը քաջալերուեց... Այդ օրը ջոկատի կորուստները կազմեցին. գոհեր՝ 4-րդ գումարտակի հրամանատարը, 1-ին հրաձգային գումարտակի հրամանատարը, շտաբս-կապիտան Մոստովը, 25 զինուորներ: Վիրաւորներ՝ 1 սպա, 40 զինուոր»⁶²:

Ղարաքիլիսայի ճակատամարտում Նժդեհի վճռական դերակատարութիւնը անուղղակիօրէն կարելի է մակաբերել նաեւ մարաշախտ Յովհաննէս Բաղրամեանի յուշերից: 1918 թ. մայիսեան ազատամարտերին մասնակցած մեծ զորահրամանատարը գրում է. «Ղարաքիլիսայի ուղղութեամբ գործող հայկական զօրքերի հիմնական միջուկը, զօրավար Նազարբէկեանի գլխաւորութեամբ հակառակորդին անհրաժեշտ դիմադրութիւն ցոյց չտալով, անփոյթ նահանջեց Դիլիջանի շրջան: Միայն վերջապահ զօրամասերի եւ կամաւորների ակտիւ գործողութիւնների շնորհիւ այդ տազնապալի օրերին յաջողուեց պահել Ղարաքիլիսան: Եւ միայն Սարդարապատում եւ Բաշ-Ապարանում մեր զօրքերի յաջող գործողութիւնների մասին լուրեր ստանալուց յետոյ զօրավար Նազարբէկեանը...կազմակերպեց Դիլիջանից մեր զօրքերի վերադարձը Ղարաքիլիսայի շրջան, որտեղ այդ ժամանակ ներխուժած թուրքերի դէմ կատարի մարտեր էին գնում»(ընդգծումներն իմն են, Ռ. Հ.)⁶³:

Հասկանալի է, որ Բաղրամեանը 1970-ական թուականներին գրած իր յուշերում Գարեգին Նժդեհի անունը չէր կարող տալ: Բայց նա յստակ շեշտում է, որ հայոց զօրքերի՝ Դիլիջան նահանջի ժամանակ Ղարաքիլիսան յաջողուեց պահել վերջապահ զօրամասերի եւ կամաւորների

շնորհիւ եւ որ հայոց զօրքերի՝ Դիլիջանից Ղարաքիլիսա վերադառնալու «ժամանակ...թուրքերի դէմ կատարի մարտեր էին գնում»:

Արշակ Ղազարեանը Երեւանի «Յառաջ» օրաթերթում տպագրած վերոյիշեալ յօդուածում եւս գրում է. «...Երբ փորքական ոյժերը բռնեցին Ջաջուռի բարձունքները, մեր զօրամասերը այլեւս չամրացան Փամբակի ահարկու ձորի երկու ափով ձգուող անմատչելի լեռնալանջերի վրայ. նրանք համարեա թէ բոլորն էլ եկան լցեցին Ղարաքիլիսա: Մի երկու զօրամաս միայն, որպէս յետնապահեր(որոնց մէջ նաեւ Նժդեհի ջոկատը, տե՛ս Բենիամին Նաւոյեանի մէջբերածս յուշերը, Ռ. Հ.), մնացին Աղբուլաղ, Նալբանդ եւ Համամլու գիւղերում: Բայց վերջիններս էլ երկար չմնացին իրենց դիրքերում, եկան Ղարաքիլիսա եւ մայիսի 22-ին մեր բոլոր զօրամասերը նահանջեցին Դիլիջան»⁶⁴:

Մէջբերածս բազմաթիւ վկայութիւններն անհերքելիօրէն ապացուցում են, որ թէ՛ վերջապահ փոքրիկ զօրամասերից զօն է մէկը եւ թէ՛ յատկապէս կամաւորների խումբը ղեկավարում էր Նժդեհը: Իսկ հայոց զօրքերի ընդհանուր հակայարձակումը, ինչպէս տեսանք վերը, այս անգամ արդէն որպէս յառաջապահ, սկսեց Գարեգին Նժդեհը՝ կատարի ու յաղթական մարտեր մղելով թշնամու դէմ:

Գնդապետ Կոնստանդին Բագրատեանը 1998 թ. Կիւեւում հրատարակած իր մի գրքում մէջբերում է Նժդեհի մարտական գործողութիւնների մասին Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից իր հայր Բենիամին Նաւոյեանի նկարագրութիւնը, որը յոյժ արժեքաւոր է նաեւ այն առումով, որ մեզ առայժմ չի յաջողուել գտնել որեւէ մէկ այլ աղբիւր, ուր տրուէր Վանաձորում Նժդեհի վարած ռազմական գործողութիւնների աւելի ընդարձակ մի նկարագրութիւն. «Թուրք բանակը, չը հանդիպելով զօրավար Նազարբէկովի գլխաւորութեամբ գործող հայոց բանակի որեւէ դիմադրութեանը, յընթացս գրաւեց ռազմավարական կարեւոր պատմէշ հանդիսացող Ջաջուռի լեռնացքը, իսկ մայիսի 20-ին՝ Համամլուն եւ մօտեցաւ Ղարաքիլիսային: Եւ միայն շնորհիւ վերջապահ զօրամասերի նախաձեռնող գործողութիւնների եւ գնդապետներ Գարեգին Տէր-Յարութիւնեան-Նժդեհի (յուշագիրը պորուչիկ Նժդեհին գնդապետ է կարծել՝ երեւի նկատի ունենալով Նժդեհի ինքնուրոյն, համարձակ ու նախաձեռնող գործողութիւններն այդ կռիւներին եւ նրա մեծ հեղինակութիւնը, Ռ. Հ.): եւ Ղորղանեանի ընդհանուր ղեկավարութեամբ գործող Լուռու եւ Գուզարբի շրջանների աշխարհագրաքիցների խիզախ հակայարձակումների, հնարաւոր եղաւ... Ղարաքիլիսայի մատոյցներում կանգնեցնել թուրքական 11-րդ դիւիզիայի զօրամասերի առաջխաղա-

ցումը: Յառաջ, տուեալներ կան, որ հայկական կորպուսի հրամանատար, փորձառու զօրավար եւ անցեալում քաջ զինուորական Նազարբէկեանը (Այդ նահանջի համար Նազարբէկեանը լռեցիներից ստացաւ «նազադ բեզում» (հայերէն՝ ետ փախչել) մականունը: Ծան. Կ. Բագրատեանի), Ալեքսանդրապոլի անյաջող ճակատամարտից յետոյ այն աստիճանի էր կորցրել իրեն ու հաւանաբար բարոյապէս ընկճուել, որ ռազմավարական տեսակէտից նպատատուր Ջաջումի լեռնանցքում պաշտպանութիւն չը կազմակերպեց եւ կրատրական նահանջներով ետ քաշուեց Դիլիջան: Եւ միայն Մարդարապատում եւ Բաշ-Ապարանում հայոց զօրքերի յաջող գործողութիւնների եւ գնդապետ Գարեգին Տէր-Յարութիւնեանի հրամանատարութեամբ Բզովդալի (այժմ՝ Բազում, Ռ. Հ.) Դարբասի, Հաջիդարայի սահմաններում գործող վերջապահ զօրամասերի ու աշխարհագրայինների վճռական յարձակումների մասին տուեալները ստանալուց յետոյ գեներալ-լեյտենանտ Նազարբէկեանը իր զօրքերի հիմնական խմբաւորումը որոշեց վերադարձնել Դարաքիլիսա...»⁶⁵:

Շարունակե՞նք մէջբերումները Նժդեհի քաղաքական հակառակորդ, բոլշեւիկ Բենիամինի յուշերից, որը, ինչպէս նշեցի վերը, մեր ձեռքի տակ եղած առայժմ *միակ վաւերագիրն է*, որտեղ առաւել ընդարձակ ու մանրամասնօրէն նկարագրում է Նժդեհը թէ՛ որպէս անձնական օրինակով զինուորներից քաջալերող անվախ ու քաջ կուռղ թրամարտիկ հրամանատար եւ թէ՛ իբրեւ սառնասիրտ ստրատեգ ու ռազմավար. «Հայոց կանոնաւոր բանակը Դիլիջանից վերադառնալուն պէս անմիջապէս եկաւ մեզ օգնութեան... սկսեց յենակէտերով ու ժեղացնել ու ամրացնել պաշտպանութիւնը... Չախից՝ Դշլաղ գիւղի շրջակայքի Մուլեյման սարից այն կողմ գտնուող Փաշինգիւղ քոչավայրի շրջանում, աջից՝ Կամակատար բարձունքի ետեւի այգիներում ու ձորերում... 1918 թ. մայիսի 24-ին գնդապետ Տէր-Յարութիւնեանի հեծեալ ջոկատը, որը գտնուում էր Կամակատար մատուռի բարձունքի ետեւի թաքստոցում, այգիների ու ձորերի միջով մօտենալով թուրքական պաշտպանական դիրքերի աջ թեւին, յընթացս մարտաշարք կազմեց՝ յարձակուելու նպատակով: Թուրքերը մօտաւորապէս հայկական զօրախմբի քանակութեամբ մի հեծելախումբ (բնագրում՝ եսկադրոն, Ռ. Հ.՝) մղեցին առաջ: Հեծելազօրային թրամարտը, դիմահար սուլիմամարտերն ու ձեռնամարտը տեւեց մի քանի ժամ: Արկերի պայթիւնից, ձիաւորների ու հեռուակի կոխկրտոցից մարտադաշտում փոշու սիւն էր բարձրացել: Թում էր, թէ կուռղ կողմերը հոգնել են եւ հակառակորդը համաձայնելու է ռազմական առաջին անյաջողութեան հետ: Բայց ահա թուրքերը Արշուտի կողմից, մերոնց աջ թելը շո-

ջանցելով, Գեոզալդարայի (Վանաձորից մօտ 20 կմ հեռավորութեամբ գիւղ, Ռ. Հ.՝) միջով Բզովդալ մղեցին մի քանի քարմ հեծելախմբեր: Ստեղծուեց թելերից շրջապատուելու վտանգ: Գնդապետ Տէր-Յարութիւնեանը կամ, ինչպէս նրան այդ ժամանակ էին յաճախ անուանում, խմբապետ Նժդեհը հեծելախմբով ու Դարաքիլիսեցի ձիաւոր աշխարհագրայիններով շարժուեց առաջ՝ թշնամու դէմը կտրելու համար: Թուրքերը մերոնց նկատելով, «ալլահ, ալլահ» գոչիւններով նետուեցին գրոհի: Գնդապետը (Գարեգին Նժդեհը, Ռ. Հ.՝), հեւիհեւ փնչացնող ձիուն թեթեակի զսպելով, ձեռքը բարձրացրեց վեր: Մեր ձիաւորները արշաւը դանդաղացրին, իսկ հեծելաջոկերի հրամանատարները սուրացին իր մօտ: Թրով, ցուցափայտի մման ցոյց տալով տեղանքը եւ հրահանգելով ում ո՞րտեղից գրոհել, նա մի անգամ էլ շուռ եկաւ, մի քանի թուրք սպասեց մեր ետ ընկած աշխարհագրայինների եւ «Դշլաղի հայկական կազակների» (այդ տարիներին Լոռի-Գուգարքի գիւղերում Գոնի եւ Կուրանի կազակների օրինակով, կազակական շարժումներ էին առաջ եկել) մօտենալուն: Երիտասարդ խմբապետի (Գարեգին Նժդեհի, Ռ. Հ.՝) մտաւորական դէմքը փոխուեց, դարձաւ մտայոգ ու խիստ: Քրտինքը քունքերից հոսում էր ցած՝ լուանալով ու լղզուելով դէմքի փոշին: Աչքերը հուրիբում էին զինավառ կրակով: Մեր հրետանին եւ մի քանի գնդացիներ կրակ բացեցին թուրք հեծելախմբի վրայ, բայց չը նայած կորուստներին, նրանք շեշտակի մօտենում էին: Չսպելով ոտքերը տեղում անհամբերութեամբ տեղից-տեղ շարժող նժոյգին, որը կարծէս կանխագգում էր մահացու գօտեմարտը, գնդապետը խօսեց. «Իմ մարտական եղբայրներ, մենք գնում ենք կռուելու մեր բազմաշարժար, քրիստոսաբար մարտիրոսացած հայ ժողովրդի համար: Ենիչերի վիժուածքներին թոյլ չենք տա ծաղրուծանակել նրան: Յիշեցէ՛ք սրբազան Էջմիածինը: Սուրբ Կամակատարին ուղղած մեր աղօթքները մեզ օգնական: Յանուն մեր հաւատի, Աստուած մեզ հետ»:

Զօրահրամանատարը մէկ հարիւրեակով սուրաց թուրքական հեծելազօրին ընդառաջ, իսկ երկու այլ հեծելախմբեր ուղարկեց աջ եւ ձախ կողմերից թուրքերին առնելու կիսաշրջանի մէջ: Չիատր զանգուածները պատ կազմած դուրս եկան իրար դէմ, մահաբեր գրկախառնումով միացան զիրար: Սկսուեց արիւնալի դաժան սուլիմամարտը, որը տեւեց մօտ մէկ ժամ: Դժուար էր հասկանալ ինչպէ՞ս կուարտուի այդ կտորածը: Ես ձգտում էի աչքիցս բաց չը թողնել խմբապետին, որովհետեւ, որպէս տեղացի, նշանակուել էի ուղեկցորդ: Նա գտնուում էր մեր զօրքերի մարտաշարքի կենտրոնում եւ մարտը վարում էր վստահ ու համարձակ, իսկ

անհրաժեշտության դեպքում՝ սրամարտում էր որպես գերագանգ դրագուն: Թուրքական հեծելազորը ճնշմանը չը դիմացաւ, սկսեց նահանջել նախ քեւերից, ապա՝ կենտրոնից եւ վախենալով շրջապատումից՝ մէկական մահապարտների հեծելավաշտ թողնելով որ պատասպարեն միւսներին, սկսեց մարտադաշտից գլուխն ազատել: Դշլաղ գիղի արեւմտեան կողմի այգիների շրջակայքից մի քանի դաշտային հրանոթներ սկսեցին կրակել նահանջող թուրք հեծելազորի վրայ՝ ցրելով նրանց եւ նահանջը վերածելով փախուստի: Մեր զորքերը վրայ տուին ու նեղեցին նահանջող թուրքերին, սկսեցին խիզախօրէն ու կատաղի հալածել նրանց: Թուրքերը փորձում էին դուրս պրծնել, բայց դա նրանց համարեայ չէր յաջողում: Երբեմն հայ եւ թուրք հեծեալները, ինչպէս ձիանրցման դուրս եկածներ, սուրում էին կողք-կողքի:

Եւ միայն այն ժամանակ, երբ մերոնք նրանց նահանջի ճամփան փակեցին, սկսուեց յետընթաց կրակոցներն ու թրամարտը: Այսպէս մեր զորքերը նահանջող թուրքերին հետապնդեցին մինչեւ Արշուտի, Դուրսալի (Մալիտակից 6 կմ արեւելք, Փամբակի ափին, Վանաձոր գնացող խճուղու եւ երկաթգծի աջ կողմում, Ռ.Հ.) մատուցները: Տասնեակ կիլոմետրոր ձգող լեռնալանջերը եւ Փամբակի գետեզերքին հարող դաշտերը ծածկուած էին մարդկանց եւ անասունների դիակներով: Թուրքական 11-րդ դիւիզիայի աջ թեւի առաջապահ զօրամասերը եւս ջախջախուեցին ու ետ շարտուեցին...

Երբ մեր զորքերը աջ թեւից գնդապետ Տէր-Յարութիւնեանի, ծախքեւից՝ գնդապետ Դորդանեանի հրամանատարութեամբ թուրքերին հալածելով հասան Արջուտ-Կուրսալի մատուցները, թուրքերը շրջակայ բարձունքներից գրոհող հայոց զորքերին առան քեւահար մահաբեր կրակի տակ: Մեր զորքերը, յատկապէս հեծելազորը, կորուստներ կրեցին: Խմբապետը (Նժդեհը, Ռ.Հ.) հրահանգեց հեծելազորը հեռացնել մօտակայ բարձունքների պատասպարանները, իսկ հետեւակին հրամայեց հրանօթային կրակի պաշտպանութեան տակ խրամատաւորուել նուաճումով դիրքերում:

1918 թ. մայիսի 26-ի յաղթական օրը թեքում էր դէպի արեւմուտ...- Թուրքերը, այս ճակատում կրելով առաջին լուրջ պարտութիւնը, շտեմել, բարոյապէս ընկճուել էին: Ճակատամարտի առաջին օրումից յետոյ ճակատի Դարաքիլիսայի ուղղութեան շտաբը տեղաորոտեց Դարբաս գիւղում: Տէր- Յարութիւնեանը (Նժդեհը) իր օպերատիւ խմբով գիշերեց Շաքար Սարոյեանի, իսկ Դորդանեանը՝ Մովսէս Աւագենի տանը...

Եթէ Անդրանիկի զորքերը... միանային այդ հատուածի մեր զորքե-

րին, ապա անտարակոյս է, որ մենք միացեալ ուժերով կարող էինք գլխովին ջախջախել թուրքական՝ այդ ուղղութեամբ յարձակող զօրքը ճիշտ այնպէս, ինչպէս Մարդարապատում... Բայց թէ Անդրանիկի այդ քայլի պատճառն ինչ էր, մնում է հանելուկ ...

Եղափիլո գիղի (Այժմ՝ Գուգարք գիղը, Ռ.Հ.)բարձունքներով, ուր գտնուում էր ս. Մարգիս մատուռը, նահանջում էր հայոց զօրքը: Գետի ափից Նժդեհն իր բոցակարմիր ձին նստած՝ երկու քիկնապահների ուղեկցութեամբ լուռ հետեւում էր իր զօրքի մնացորդների շարժումներին: Երբ զօրախումբն արդեն գետի աջ ափին էր, նա հանեց գլխարկը, խոնարհուեց լեռներին, երեք անգամ խաչակնքեց եւ դանդաղօրէն, կարծես չուզենալով, ձին քշեց Փամբակի ծանծաղուտը: Դա վերջին անգամն էր, որ ես տեսնում էի խմբապետին՝ Գնդապետ Տէր-Յարութիւնեանին: Լինելով նրա քաղաքական յամոզումների թշնամին՝ ես ինչ որ անհասկանալի ներքին զգացողութեամբ, հնարաւոր է՝ ենթագիտակցաբար, նրա նկատմամբ յարգանք էի տածում, որպէս խիստ ողբերգական ճակատագրի տեր մի մարդու եւ որպէս իր հայրենիքի դաժան ճակատագրի համար անկեղծօրէն մտահոգ օրինաւոր հայ քրիստոնեայի»⁶⁶:

Ականատեսների վկայութիւնները եզրափակում են Նժդեհի վերոյիշեալ երկու յօդուածներով, որոնք չնչին տարբերութիւններով, գրեթէ բառացի կրկնում են իրար (ցաւօք, Ա. Ա. Ահարոնեանին տրամադրած Նժդեհի յուշերն ամբողջութեամբ առայժմ յայտնաբերուած չեն): Յարմար նկատեցի մեջբերման համար հիմք ընդունել Սոֆիայում տպագրուած «Ազատ խօսք» օրաթերթի տարբերակը («Դարաքիլիսէի հերոսամարտը»)՝ պակասող հատուածները լրացնելով «Ռազմիկ» թերթում տպագրուած յօդուածից, որի սկզբի մի քանի շատ կարեւոր տեղեկութիւններ պարունակող նախադասութիւնները «Ազատ խօսք»թերթում տպագրուած տարբերակում չկան:

Յօդուածում նշուած է Դիլիջանի սբ. Աստուածածին եկեղեցու բակում հաւաքուելու հանգամանքները, իր արտասանած ճառի շատ ժխտ նախադասութիւններով նկարագրութիւնը եւ նոյնիսկ ժամը, ինչպէս նաեւ՝ գնդապետ Դորդանեանի միջոցով *Գարեգին Նժդեհին* ուղղուած թովմաս Նազարբեգեանի հրամանի պատճէնը: Այդ վաւերագրից Դարգուում է, որ Նժդեհը ճակատ մեկնելուց առաջ, ըստ իր սովորութեան, իր զինուորներին հաւաքում է եկեղեցու բակը՝ այնտեղից շարժուելու համար: Մակայն, քանի որ ջոկատը առաջի՛նը պիտի գնար թշնամու վրայ, այդ պատճառով էլ զօրաջոկատը եկեղեցուց դէպի ճակատ տանելու նպատակով Նժդեհի կազմակերպած արարողութիւնը դառնում է ժո-

դովրդական մաղթանք, համաժողովրդական ինքնաբուխ հանրահաւաք:

Մէջբերենք վկայութիւնը.

«Չայկական կորպուսի հրամանատարը հրամայում է ձեզ՝ հենց այսօր Ձեր գործնաստի վերադառնալ Ղարաքիլիսէ՝ շփման մէջ մտնել թշնամու ուժերի հետ եւ սպասել օգնութեան:

Չեժեալ գնդի հրամանատար՝ գնդապետ Կորգանով:

մայիս 24, Դիլիջան:

Ստանալով այդ հրամանագիրը՝ կարգադրեցի գործնասիս կեդրոնա-նալ Դիլիջանի եկեղեցոյ բակը: Վայրկեանների ընթացքում տարածուեց Ղարաքիլիսէ վերադառնալու լուրը: Ժամը 3-ի մօտերը եկեղեցու շուրջ խոնուեց ժողովուրդը: Եկել էին ճամբայ դնելու մեզ: Սպայակոյտի համհարզը կարգաց Երեւանից ստացուած վերջին տեղեկութիւնները՝ Սարդարապատում մեր զօրքերի տարած յաջողութեան մասին: Քիչ անցած՝ յայտնուեց զօր. Նազարբէկեանը եւ խոր յուզումով հաղորդեց Արամի պահանջը՝ «Երեք օր ժամանակ տալ Երեւանին, որ կարողանա հաշտութիւն կնքել թուրք հրամանատարութեան հետ»: Ապա մի քանի խօսքով օրհնեց մեր չուն: Գնալով յուզումը կը խորանար: Եկեղեցում վաղուց էր սկսուել ժամերգութիւնը եւ զանգերի դողանջը, միացած քահանաների երգեցողութեան, տխրօրէն կ'արձագանգէր հեռուները: Պէտք էր երկու խօսք ասել մեկնելու պատրաստ գործնասիս եւ-առաւելապէս ժողովուրդին: Գեռ խօսքս չէի վերջացրել, երբ հայեացքս հանդիպեց ծերունի գօրավարի (Թ. Նազարբէկեանի, Ռ. Հ.): հայեացքին-արցունք կար նրա աչքերի մէջ: Լալիս էին, լալիս բոլորը: Ինձ էլ խեղդել սկսեց արցունքը... եւ հոգեբանական այդ մթնոլորտի մէջ, հազարի չափ զինուորներ ու կամաւորներ բռնեցին դէպի Ղարաքիլիսա երկարող ճամբան: Մայիսի 24-ն էր...»⁹⁷:

Այստեղ պէտք է շեշտել եւս մի խիստ կարեւոր հանգամանք. Նժդեհի գորաջոկատին ճանապարհ դնելու արարողութեանն ու ժողովրդական այդ հանապատրաստից հաւաքոյթին, որը հրաւիրել էր Նժդեհը, մասնակցում եւ ելոյթ է ունենում ռազմաճակատի գերագոյն գլխաւոր հրամանատարը: Մա նշանակում է առանձնապատուկ վերաբերմունք *ռազմարշաւը* սկսող գորաջոկատին, այսինքն՝ ռազմական վերին աստիճանի պատասխանատու եւ ճակատագրական գործողութիւնների սկիզբ, որից կախում էր ամբողջ ճակատամարտի բախտը:

Իրօք՝ *Իրադրութիւնն այնպիսին էր, որ ոչ միայն տունալ կռուի բախտը, այլեւ ժողովրդի ինքնավստահութեան եւ իր ուժերի հանդէպ վերականգնուած հաւատի պահպանումը, այսինքն՝ ամբողջ ճակատա-*

մարտի յաջողութիւնը կախում էր թուրքերի հետ առաջին բախումից:

Երբ ասում ենք, թէ Նժդեհն է Ղարաքիլիսայի ճակատամարտի կազմակերպիչն ու վարողը, յատկապէս նկատի պիտի ունենանք նաեւ հոգեբանական այս իրավիճակը:

Եթէ հայերն այդ առաջին գոտեմարտը շահէին, համընդհանուր ոգեւորութիւնն ու մարտական ոգին անելի՛ կը բարձրանար: Իսկ պարտուելու դէպքում՝ բարոյալքումն ու գլխապատառ փախուստը կը դառնար անկասելի ու անկառավարելի:

Ահա այս առանցքային ու շրջադարձիկ հոգեբանական պահի ամբողջ պատասխանատուութիւնը ճակատագրի բերումով ընկաւ Գարեգին Նժդեհի վրայ, քանի որ երգումը, Սարիղամիշը, Կարսը եւ Գիւմրին իրար ետեւից գրաւելով երեք ամսում վանաձոր հասած եւ որեւէ լուրջ դիմադրութեան չը հանդիպած թուրքերի *հետ հայոց զօրքի առաջին* բախումը պիտի ղեկավարէր ինքը:

Այս վերին աստիճանի պատասխանատու եւ վճռական կռում տանելով փայլուն յաղթանակ՝ Գ. Նժդեհը ոչ միայն իր ճառով կազմակերպեց դիմադրութիւնը, այլեւ իր անկրկնելի քաջութեամբ: Կասեցնելով թշնամու յաղթարշաւը՝ նա բազմապատկեց յաղթանակի հանդէպ զինուորների եւ ժողովրդի հաւատը նաեւ մարտի՛ դաշտում:

«Մօտ հազար զինուորներով եւ կամաւորներով կը վերադառնայի Ղարաքիլիսէ: Արդէն անցել էինք Սիմեոնովկա գիւղը, երբ մեր ձախ թելի ուղղութեամբ ընդհատ գոռացին մի քանի հատ հրացաններ: Թշնամու լրտեսներն էին՝ դարանամուտ եղած անտառում: Քառորդ ժամու չափ կանգ առաւ գործնասը, մինչեւ որ յառաջապահները կը մաքրէին ճամբան: Գիշերուայ ժամը 2-ին հասանք արեւ եւ անմարդաբնակ Վարդանալու գիւղը, ուր թողնելով հետեակ ուժերս, մէկ յիսնեակ ձիաւորներով յառաջացայ դէպի Ղարաքիլիսէ: Հայ աւանի վրայ տիրող մեռելային լռութիւնը եւ լոյսի չգոյութիւնը շատ շուտ մատնեցին, որ թշնամին դեռ ոտք չի կոխել այդ տեղ: Տուն չկար որ սպիտակ դրօշակ պարզած չլինէր: Սպիտակ էր հագել մեր չքնաղ ամբարանոցը, որ շուտով պիտի կարմրէր մեր եւ թշնամու արիւնով:

Մի տասնեակ ձիաւորներ, որոշ յանձնարարութեամբ, ուղղելով դէպի Ղշլաղ՝ ձիս թշեցի դէպի այն տունը, ուր գիշերել էի ընդամենը հինգ օր առաջ: Բախեցի դուռը, բայց մնացի անպատասխան: Մօտեցա պատուհանին՝ նորէն լռութիւն: Խեղճերը չէին պատասխանում, կարծելով թէ թուրքն է յայտնուել: Սկսեցի անուններ տալ: Բացուեց դուռը եւ յայտնու-

եց Ալեքսանդրապոլէն գաղթած Յակոբ Էհրամճեան ընտանիքը: Բոլորի դէմքերի վրայ թէ ուրախութիւն, թէ սարսափ կար: Աւետելով Մարդարապատի մեր յաղթութեան լուրը, որոշ տեղեկութիւններ ուզեցի թուրք ոյժերի եւ շրջանի հայ բնակչութեան տրամադրութեանց մասին: Պարզուեց որ թուրք զօրքը գտնուում է Արչուքում, եւ որ լուսաբացին տանուտէրի գլխաւորութեամբ մի պատգամաւորութիւն պիտի մեկնէր աղ ու հաց մատուցելու թուրք զօրահրամանատարութեան:

Ուղարկեցի կանչել իշխանութեան ներկայացուցիչներին: Եկան՝ զարմացած: Փարատեցի նրանց տարակուսանքը եւ պահանջեցի՝ հրաժարուել Ղարաքիլիսէն առանց կռուի թշնամուն յանձնելու մտքից: Խոստացան՝ «Հայոց զօրքին մատաղ անել ամէն ինչ՝ եւ հաց, եւ հարստութիւն, եւ կեանք»: Պահանջեցի սուրհանդակներ եւ նրանց միջոցով գրութիւններ ուղարկեցի շրջակայ գիւղերը, յորտրելով զէնք կրելու ընդունակ գիւղացիներին մի քանի օրուայ հացի պաշարով եւ ունեցած ռազմամթերքով, մինչեւ կէսօր, ներկայանալ ինձ, Ղշլաղում: Առանձին գրութեամբ պահանջեցի ներկայանան նաեւ քահանաներին եւ ուսուցիչներին: Այդ կարգադրութիւններից յետոյ, Մլխիթար Տէր-Աբրահամեանին ուղարկեցի՝ մեր զօրամասը առաջնորդելու Ղարաքիլիսէ, իսկ ես անցա Ղշլաղ: Պէտք էր յարմար դիրքեր ընտրել եւ դեռ լոյսը չբացուած տեղաւորել ոյժեր- զօրամասիս թուական սակաւութիւնը շնատնելու համար: Ղշլաղում գիւղացիութեանը գտայ ոտքի վրայ եւ անհանգիստ: Չօրամասս ցանցառակի բռնեց նախապէս ճշտածս կրակի գիծը-կեղորունը՝ գուգահեռ Ղշլաղին, նրանից մէկ ու կէս վերստ առաջ, ձախ թելը՝ դէպի հարաւ ինկած անտառապատ բարձունքները, իսկ աջը՝ մօտ երկու վերստ, երկաթուղագծից դէպի հուսիս ձգող բաց դաշտը: Բնական է, որ ռազմագիտական պահեստի ոյժի չգոյութիւնը, ինչպէս եւ ռազմամթերքի պակասը, պիտի թելադրէին ինձ ցանցեր փռելու թշնամու ռազմագործողութեանց ուղղութեանց վրայ: Բռնապարտեան յստակատեսութիւն պէտք չէր գիտակցելու համար, թէ այդ օրուան մեր ամենաթեթեւ յաջողութիւնն անգամ զինովցնելու աստիճան պիտի խանդավառէր մեր զօրքն ու ժողովուրդը, - քանզի էրզրումէն մինչեւ Գուգարք միայն տխուր պարտութիւնն էր եղել մեր բաժինը, - իսկ չնչին անյաջողութիւնը բացարձակապէս անկարելի պիտի դարձնէր մեր հետագայ դիմադրութիւնը: Գիտէի-թուրքը, հաւատարիմ իրեն, մեր Ղարաքիլիսէ վերադառնալու յանդգնութիւնը պատժելու, իր Ալլահի արնոտ կամքը կատարած լինելու համար՝ քինաբափ պիտի լինէր անգէն ազգաբնակչութեան գլխին: Ուրեմն, պէտք էր գործի լծել հայ մարդու եւ արիութիւնը, եւ հնարամտու-

թիւնը, որպէսզի քմահաճ Մարսն այդ օրը առաջին անգամ մեզ ժպտար: Այդ մտահոգութեամբ, մեր կռուագծէն մօտաւորապէս 1000 քայլ առաջ, երեք կէտերի վրայ դարաններ դրի. հետեւակներից՝ անտառի մէջ, ռմբաձիգներից՝ երկաթուղագծային կամուրջի տակ, իսկ հեծեալներից՝ բաց դաշտի մէջ ինկած մի հնօրեայ վանքի ատերակների մէջ: Դարանամուտ այդ խմբակները՝ առանց մատնելու իրենց ներկայութիւնը, թոյլ պիտի տային թշնամուն յառաջանալու մինչեւ դարանների գիծը եւ ապա, խաչածեւ կրակի տակ առնելով, պիտի խորտակէին նրան: Մեր ոյժերը պիտի սպասէին ազդանշանի, որ տրուելու էր հրթիռի միջոցով:

Լոյսը նոր էր բացուել, եւ արդէն վերադարձել էին Արչուքի ուղղութեամբ ուղարկածս հետախոյզները: Այլեւս վայրկեանէ վայրկեան կը սպասէր թշնամին: Շրջագայելով մեր յառաջադիրքերը՝ կը խրախուսէի զինուորներս՝ նրանց մինչեւ վերջ գոտեպինդ պահելու համար, յիշեցնելով նրանց Երեւանի մեզմից պահանջած «երեք օրեր»-ը: Կենտրոնական դարանից նշանացի հասկացրին թշնամու դէտերի երեւալու մասին: Մի քանի վայրկեան անց՝ մենք այլեւս աչքի եւ կրակի հաղորդակցութեան մէջ էինք թշնամու հետ: Նա կ'առաջանար յաղթ-յաղթ, տողածեւ ու խորութեամբ բռնած երկաթուղագծի երկու կողմերը: Ժամը 9-ի մօտերը (առաւօտեան, Ռ. Հ.) թշնամու կողմից սկսուեց նախակիրը՝ թեթեւ հրացանածոթեամբ: Մեր ոյժերն ու դիրքերը շոշափելու նպատակով, թշնամին կը դանդաղէր, եւ հասկանալի էր դա: Չէ՞ որ մենք առանց կռուի էինք լքել Ղարաքիլիսէն եւ այսօր թուրք զօրահրամանատարութիւնը կը սպասէր հայոց աղ ու հացին-զայն պղծելու համար: Բացի այդ, վերին հրամանատարութիւնը թոյլ էր տուել սխալներից ամենաաղետալին- օրեր առաջ նա ազատ էր արձակել 4-5 հազար թուրք զերիները*, մի արարք, որ թշնամին պիտի բացատրէր մեր շուարուն վիճակով: Այսօր, սակայն, նա ստիպուած էր նոր զոհեր ու ժամանակ վատնելու՝ մեզ տեղի տալու հարկադրելու համար, մեր ֆիզիկական եւ բարոյական ողնաշարը ջարդելու համար:

Ժամը տասը անց էր, երբ սկսուեց ընդհարումը. դարձեալ աննշան ոյժերի միջեւ: Մեր դարանները կը շարունակէին իրենց մահառիթ լուսի-

* Այս իրողութիւնը շեշտում է նաեւ Մետրոպ եպիսկոպոս Տէր- Սովսիսեանը՝ Ամենայն Շայոց Գեորգ Ե վեհափառին յղած իր զեկուցագրում. «Ղարաքիլիսայում... Կարսից տեղափոխուած կալին 3000 թուրք զերիներ, որոնք չնայած շտաբի եւ զօրքի հեռանալուն, երկու ամբողջ օր սպասել էին առանց պահապանների... թողել հեռացել էին» (ԴԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թերթ 9):

նը: Ղշլաղ կը հասնէին կամատրներ եւ կ'ուղարկուէին խտացնելու մեր շղթաները: Թշնամու յառաջապահ զօրասիւնը այլեւս կը մօտենար մեր դարանների գծին: Մերոնք սկսել էին ջղայինութիւն ցոյց տալ: Արծակուեց սպասուած հրթիռը, որին կայծակի արագութեամբ յաջորդեց մեր դարանակալ յամբերի փոթորկային կրակը: Ծուղակուած թշնամու ոյժերի մի մասը խուճապով հետխաղացութիւն փորձեց, իսկ միւս մասը խառնախառնի թափուեց երկաթուղագծի վրայ: Մեր դարանները կը շարունակէին իրենց ռումբերի, գնդացիներէի եւ համազարկերի տարափի տակ պահել յանկարծակիի եկած թշնամուն: Օգտուելով թուրքերի փափուկ վիճակից՝ ռազմամուտ ուժերս քաշեցի առաջ: Փամբակի ձորերը դողացին ռումբերի որոտից: Թշնամին կը դժուարանար ուշաբերուել եւ կը հնձուէր անխնայ: Տրուեց գրոհի հրամանը: Սկսուեց յարձակումը: Վրէժով բեռնատր մեր մարտիկները կը յարձակուէին վագրերի նման: Մեր զարկերի զօրութիւնից շատերի սուիները ծռուեցին, փշրուեցին:

Կռիւ էր, որ որքան տարերային, այնքան կարճատեւ եղաւ: Թշնամին տագնապով դէպի Արշուտ կը փախչէր: Նա ժամանակ չունեցաւ անգամ իր վիրատրներին փրկելու: Մենք կը շարունակէինք մեր տակտիկական ճոճաբաղը: Հայ մարտիկն այդ օրը, այդ ժամին, արժանի էր իր ցեղի անունին:

Ճակատամարտի առաջին օրը սկսուել էր՝ Հայ ոգու փայլուն գերազանցութեամբ՝ յաղթանակով: Այլ եւս կար համոզումը, թէ պիտի յաջողենք աւելի մեծ քայլով Ղարաքիլիստում կրկնելու Սարդարապատը եւ տալ Երեսանին իր ուզած երեք օրը՝ Բաթումի մեր պատգամատրութեան գործը հեշտացնելու համար:

Այդ օրը մայիս 25-ն էր: Ճակատամարտի երկրորդ օրը նոյնպէս սկսուեց եւ պսակուեց մեր յաջողութեամբ: Հայ շինականի արիւթիւնը լիոնիդասեան կիրճի կը վերածէր Ղարաքիլիստին: Մայիս 27-ի գիշերը լուսացրինք երկու գիշերամարտերով եւ համբուրելի մնաց Հայ Զէնքը:

Մեծ ճակատամարտի վերջին արարը այլեւս սովորական բախում չէր, այլ մահակոխի:

Մայիս 28 էր՝ Սրբազնասուրբ եւ տօնելի՛ օր: Այդ օրը Տփլիսի մէջ Հայոց Ազգային Խորհրդի կողմից տեղի պիտի ունենար Հ. Հանրապետութեան հռչակումը, իսկ Բաթումում պիտի կնքուէր հաշտութեան դաշինքը:

Այսպէսով կ'իրականանար դարատր երազը-Հայ Արիւնով սրբուած Արարատեան դաշտում կը վերականգնուէր Հայ Հայրենիքը, որի մէջ յար

եւ յաւետ պիտի ապրին արիւթիւնն ու փառքը, Սարդարապատի եւ Ղարաքիլիստի հերոսականը կերտող ռազմիկները»⁶⁸:

Վերջերս որոշ պատմաբաններ Ղարաքիլիսայի ճակատամարտը հերոսամարտ չեն համարում, քանի որ մայիսի 28-ին, երբ հայ զինուորը ստիպուած եղաւ նահանջել թշնամու գերակշռող ուժերի առաջ, թուրքերը ետ գրաւեցին Վանաձորը եւ այլ բնակավայրեր, կոտորեցին հազարաւոր խաղաղ բնակիչներին:

Անշուշտ, մայիս 27-ի յաղթանակից յետոյ հայոց զօրքի յարձակողականի կասեցումը թիրիմացութեան հետեւանքով կատարուած ռազմավարական սխալ էր, որը շեշտել են թէ՛ ժամանակակից եւ թէ՛ յետագայի որոշ գործիչներ: Ի դէպ՝ մայիսի 28-ի նահանջը մի յաւելեալ կռուան է այն իրողութեան օգտին, որ Ղարաքիլիսայի ԵՌՕՐԵԱՅ ճակատամարտի յաղթանակները ոգեշնչել ու կազմակերպել է Գարեգին Նժդեհը, քանի որ Նժդեհի շնորհիւ հրամանատարական կորուսեալ լծակներին եւ իրաւունքին վերատիրացած մեր վերին հրամանատարութիւնը դարձեալ՝ նահանջի հրաման է տալիս, որը խափանելու կամ սրբագրելու այլեւս որեւէ հնարատրութիւն չունէր Գարեգին Նժդեհը...

Վերոյիշեալ Ա.Ղազարեանը գրում է. «...Մայիսի 27-ին Ղարաքիլիսայի մեծ ճակատամարտն էր. մերոնք բռնել էին ձախ թելի վրայ՝ դէպի Մայմեխ ձգող լեռնալանջերը... իսկ թշնամու ուժերը բռնում էին Սարու եւ Հաջի-Կարա գիւղերի առաջը բռնող լեռնաշղթան... Կռիւ ճակատը ձգում էր 6-ից 8 վերստ: Թուրքերի գնդացրային կրակը սոսկալի էր: Իւրաքանչիւր 50 սաժէնի վրայ գործում էր համարեայ մէկ գնդացի: Թշնամու փամփուշտները կարկտի նման էին տեղում: Փոշու ամպեր էին բարձրանում: Մեր զօրքերը առաջանում էին ամբողջ ճակատում, լուռ, անկրակ, հերոսաբար... Մի քանի ուժեղ ուռաներ եւ մեր զօրքերն արդէն դուրս էին բշել թշնամուն իր դիրքերից. այնուհետեւ սկսում է թուրքերի հետապնդումը. մեր ձախ թելը գրաւում է Հաջի Կարան եւ առաջանում բռնում է թուրքերի երկրորդ դիրքերը... Սակայն շուտով մեր զօրքերի հետապնդումը կանգնեցում է մեր զօրահրամանատարութեան կողմից. ոչ միայն կանգնեցում, այլեւ հրաման է արձակում մեր ձախ թելի զօրամասերին յետ նահանջել բռնած դիրքերից... Այս կարգադրութիւնը ճակատագրական նշանակութիւն ունեցաւ մեր զօրքերի համար եւ պատճառ դարձաւ մեր փառատր յաղթութեանը պարտութեան փոխելուն... Մեր զօրքերի կանգնեցումը, մանաւանդ մեր ձախ թելի ինքնակամ նահանջը, թուրքերին հնարատրութիւն է տալիս 3 ժամայ մէջ նորից

կազմակերպել եւ երեկոյեան ժամը 10-ից հակայարձակումի դիմել: Գիշերայ ժամը 12-ին Ջալալ օղլու թուրքական մի գունդ Բզովդալից առաջանում է եւ անցնում մեր աջ թեւի թիկունքը: Միաժամանակ տեղեկութիւններ են գալիս, որ ձախ թեւի վրայ թուրքական մի գունդ, երկու քնդանօթով, բարձրացել է Մայմեխի գագաթը եւ նպատակ ունի Ղարաքիլիսի թիկունքն անցնել: Առաջանում է մի ծանր կացութիւն. վերջին տեղեկութիւնը անհաւանական է թոււմ, սակայն 28-ի լոյս առաւօտեան, Հաջի Կարայի ուղղութեամբ թուրքերը ուժեղ յարձակման են դիմում եւ այդ ժամանակ ահա լուր է ստացում, որ իսկապէս թուրքական մի գունդ բռնել է Մայմեխի գագաթը եւ կռիւ է բռնել մեր այնտեղի զօրամասի հետ: Մեր զօրահրամանատարութեան այլ ելք չի մնում, քան յետ նահանջել: Յետագայում պարզում է, որ Մայմեխի գագաթը բարձրացող թրքական զօրագունդը, դեռ եւս մայիսի 24-ից ուղարկած է լինում Բաշաբարանի մեր զօրամասի թիկունքն անցնելու համար»⁶⁹:

«Հայ զինուորականութիւնը Դիլիջանի ձորում,- գրում է Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը,- հայ գաղթականութեան ահռելի պատկերի տպաւորութեան տակ ցնցուեց եւ իբրեւ մի մարդ՝ պահանջեց իր գեներալներից նորից գնալ պատերազմի դաշտ եւ թշնամուն դուրս վանել մայրենի հողից: Եթէ Ղարաքիլիսայի պատերազմը հակառակ հայ զինուորների անվեհեր քաջութեան, այդքան անփառունակ վերջացաւ, դրա մեղքը ընկնում է միմիայն ապաշնորհ ղեկավարների վրայ»⁷⁰:

Պատմաբան Վ. Մելիքեանի կարծիքով «Մայիսի 16-ից 20-ը թուրքերը Ղարաքիլիսայի ուղղութեամբ ակտիւ գործողութիւններ չը ձեռնարկեցին, ինչն այդ օրերին հայկական ջոկատների համար հնարատրութիւն էր ստեղծում ամուր պաշտպանութիւն կազմակերպելու այնպիսի նպաստաւոր բնագծում, ինչպիսին էր Ջաջուռի լեռնանցքը: Ցաւօք, այդ շարուեց: Արեշեանը զօրախմբի հրամանատարութիւնը յանձնեց գնդապետ Բէյ-Մամիկոնեանին եւ ինքը մեկնեց Ղարաքիլիսա: Նահանջող գնդերի անձնակազմի զգալի քանակութեամբ զինուորներ լքում են զօրամասերը: Թուրքերը օգտուելով դրանից, մայիսի 20-ին... մօտենում են Վորոնցովկային... եւ գրաւում այն... Ուշադրութեան է արժանի այն փաստը, որ(ըստ օրագրի) մայիսի 20-21-ը Նազարբէկեանի վրայ Անդրկովկասի կառավարութեան կողմից ճնշում է գործադրուել՝ թուրքերի հետ բանակցելու թուրքական զօրքերը երկաթուղով Ջուլֆա փոխադրելու վերաբերեալ: Նման տրամադրութիւններ ունէր նաեւ Բէյ-Մամիկոնեանը, որը հաղորդում էր իր անելանելի փիճակի եւ հետեւաբար թուրքերի պայմաններն ընդունելու մասին... Բարումի բանակցութիւնները,

անշուշտ, ապակողմնորոշել էին թէ՛ Նազարբէկեանին, թէ՛ Արեշեանին եւ թէ՛ յատկապէս Անդրանիկին»⁷¹:

Այո՛, եռօրեայ հերոսամարտից յետոյ հայոց զօրքերը նահանջեցին ու Վանաձորը յանձնեցին թշնամուն: Բայց արդեօ՞ք նշուած հանգամանքը իրաւունք ու հիմք է տալիս ստուէր գցել այդ անմահ ղիւցազնամարտի վրայ:

Նախ՝ կատարուել էր Ղարաքիլիսայի զօրաջոկատի վրայ դրուած ռազմավարական հիմնական խնդիրը. հայ զօրքը եռօրեայ յաղթանակներով թշնամուն պահել էր իր դիրքերում:

Երկրորդ՝ եթէ այս տրամաբանութեամբ առաջնորդուենք, ապա պարտութիւն պիտի համարենք նաեւ Սարդարապատը, քանի որ քաղաքական ղեկավարութիւնը յաղթանակած հայ զօրքին թոյլ չը տուեց զարգացնել յաջողութիւնը, թշնամուն հալածել մինչեւ Ղարս, իսկ հերոսամարտից մէկ ամիս յետոյ, յուլիսի 8-ից 9-ը, թուրքերը վերագրաւեցին ոչ միայն Սարդարապատը, այլեւ Արտաշատը, այսօրուայ Մասիս քաղաքը, հասան մինչեւ Սայաթ-Նովա եւ Այնթափ գիւղերը եւ գտնուելով Երեւանից ընդամէնը եօթ կիլոմետր հեռաւորութեան վրայ՝ Հայաստանի նորահռչակ Հանրապետութեանը թողել էին ընդամէնը 12 հազար քառ. կմ տարածք...⁷² Մինչդեռ թէ՛ Ղարաքիլիսայի եւ թէ՛ Սարդարապատի ճակատագրական նշանակութիւնն այն է, որ այդ հերոսամարտերը Արեւելահայաստանը փրկեցին ծրագրուած տեղահանութիւնից եւ դրանց շնորհիւ հայութիւնը պահպանուեց ու շարունակեց գոյատեւել իր աշխարհագրական տարածքի մի փոքրիկ հողակտորի վրայ, որը հիմք դարձաւ, որպէսզի մենք մեր հայրենիքի փրկուած մի հատուածում վերականգնենք մեր պետականութիւնը:

Այնպէս որ Ղարաքիլիսայի ճակատամարտի առանցքային նշանակութիւնը, որը առաջինը բացայայտել ու ներկայացրել են դէպքերի իրագեկ ժամանակակիցները, շատ ատելի խորախորհուրդ ու տարողունակ է, քան մինչեւ այսօր թուացել է առաջին հայացքից:

Հիմնուելով վկայաբերուած աղբիւրների վրայ՝ աներկբայօրէն կարող ենք անել հետեւեալ եզրակացութիւնը.

առաջին.

մայիսի 24-ից 27-ը Ղարաքիլիսայում թուրքերի դէմ հայ զօրքի յաղթանակը, որը ռզեշնչող գլխատր երկու հանգամանքներից մէկը սք էջմիածնի մատոյցներում Հայաստանեայց եկեղեցու սկսած ու ռզեշնչած մայիսի 22-ի առաջին վճռական յաղթանակն էր թուրքերի դէմ, շրջադարձային ու վճռական էր, քանի որ այդ նոյն ժամանակ Սարդարապատում

հայերը անհրաժեշտ չափով չէին կարողացել զարգացնել յաջողութիւնը, իսկ թուրքերին յաջողուել էր մայիսի 22-ի եւ 24-պարտութիւններից յետոյ ուշքի գալ եւ վերադասաւորելով ուժերը՝ վերականգնել մարտունակութիւնը: Հետեւաբար անժխտելի է այն իրողութիւնը, որ եթէ Կարսից ու Ալեքսանդրապոլից յաղթանակներով դէպի Երեւան արշաւող թուրքերը 1918 թ. մայիսի 24-27-ին Ղարաքիլիսայում պարտութիւն չը կրէին, ապա Սարդարապատի, նաեւ Ապարանի մայիսի 26-ից 29-ի վերջնական յաղթանակները չէին լինելու, քանի որ Գիլիջանից, Ապարանից ու Սարդարապատից թուրքերի անկասելի մուտքը սբ. Էջմիածին ու Երեւան դառնալու էր անխուսափելի...

Ուստի, իրօք որ. *«Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսէի ճակատամարտի ոչ թէ օրուայ . Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենա: Ղարաքիլիսէի եռօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը դրեց Հայկական պետութեան»:*

Երկրորդ՝ Ղարաքիլիսի ճակատամարտի նախօրէին գորքի մէջ բացակայող կարգապահութիւնը, այն է՝ հրամանատար-զինուոր, ենթակայ-ստորադաս այլեւս գոյութիւն չունեցող յարաբերութիւնները, ինչպէս նաեւ՝ ռազմիկների ճակատելու ոգին ու կարողութիւնը Գարեգին Նժդեհը վերականգնեց, ո՛չ թէ ճակատի հրամանատարութիւնը: Չլինէր Նժդեհը, գորքն ու աշխարհագորը չէին ենթարկուելու հրամանատարութեանը եւ թշնամու դէմ չէին կռուելու, ինչպէս չը կռուեցին Էրզրումում, Կարսում եւ Ալեքսանդրապոլում...

Հետեւաբար՝ մենք պէտք է հաւատանք ժամանակի այն պետական ու ռազմական խոշոր գործիչներին ու յատկապէս դէպքերի մասնակիցներին, այդ թում նաեւ Նժդեհին, որոնք միաբերան ու անվերապահ պնդում են երկու իրողութիւն.

առաջին՝ որ Ղարաքիլիսայի ճակատամարտը եղել է մայիսեան հերոսամարտերից շրջադարձայինն ու առանցքայինը:

Երկրորդ՝ ճակատից խունապահար փախչող ժողովրդին ու անձնատուր լինելու տրամադրուած զինուորականներին ոգետրել, հոգեփոխել, կազմակերպել, այն է՝ *ճակատամարտ տալու նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելով՝ հրամանատարութեանը չենթարկող հայոց գորքին այդ հեղինակագուրկ հրամանատարութեանը վերաներթարկելով՝ յաղթական կռուի է տարել* Գարեգին Նժդեհը:

Հայ պատմագիտութիւնը այս իրողութիւնը պէտք է վերջապէս ուսումնասիրի, ընդունի, հաստատի եւ պաշտօնապէս արձանագրի՝ յանուն

պատմական ճշմարտութեան, որի դէմ անհնար է որ խորհրդային տանջարաններում 11 տարի զնդանուած ու գերիմաստնացած Մեծ տարօնականը կեանքի վերջում դոյզն ինչ մեղանչէր, երբ դա չէր արել ու չէր անի նոյնիսկ իր երիտասարդ ու վառվորուն տարիներին, քանզի նման թուլութիւնը բացարձակապէս հակոտնեայ էր նրա արքայական էութեանը, խառնուածքին ու բնատրութեանը:

Եւ ահա կեանքի վերջում՝ 1955թ. աւարտած իր վերջին աշխատութեան մէջ, որն ի դէպ, հրաշքով է հասել մեզ, գրում է.

«Ես տեսել եմ մեր ժողովրդին իր բիրերի մէջ, տեսել ռազմի իր սուրբերին եւ գայլերին՝ Վարդաններին ու Վահաններին:

Եւ ժողովրդի հզոր շունչով օծուած՝ երկու անգամ անհաւասար ճակատամարտերի եմ առաջնորդել նրա զաւակներին:»

– Ղարաքիլիսէի օրհասական օրերին, երբ թուրք հորդանների հետ մահը կանցնէր Ախուրեանը, ու երկու տարի անց՝ Միւնիքում, ուր պանթուրանականները կը նկրտէին լեռնահայութիւնը վերածել դիակների կամուրջի՝ թուրք եւ թաթար հայրենիքների միջեւ:

Եւ երկու դէպքում էլ հայ մարդը կատարել է ռազմի մեծագործութիւններ, քանզի մեզ հրամայել ու վարել է աչքը ժողովրդի»⁷²:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կրճատուած տարբերակը տպագրուել է «Էջմիածին» ամսագրի 2004թ. Ե համարում, էջ 79-99)

- 1.Կ.Սասունի, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին(1914-1918), Պէյրոս, 1966թ., էջ 205-206:
- 2.Հր.Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յարթանակը, Երևան, 1988 թ., էջ 84-86,21; Հմմտ. Ա.Յարութիւնեան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիւները, Երևան,1984 թ., էջ174-177,209-210;Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յարթանակը, 1991 թ.,էջ33-34:
- 3.Ա.Յարութիւնեան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիւները, էջ174-177,188:
- 4.Ե.Տակաբժեւսկիյ, իզ խտորիի ինօստրանցոյ ինտերքենցիի ի գրածդանցկոյ վոյնը վ Ազերբայճանե, Բարու, 1957 թ., էջ 82,87:
- 5.Հր.Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան եւ անկկուն կամբի վկաները. «Հայկական բանակ» ամսագիր, 1998 թ., քիւ 2(16), էջ17:
- 6.Աւետիս Ահարոնեան, Երկերի ժողովածոյ, 10 հատորով, հտ. Ե, Թեհրան, 1983 թ., էջ 429-430, «Անդրանիկ» յուշագրութիւնից:
- 7.Աւետիս Ահարոնեան, Երկերի ժողովածոյ, 10 հատորով, հտ. Ե, Թեհրան, 1983 թ., էջ 429-430, «Անդրանիկ» յուշագրութիւնից:
- 8.Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք» ամսագիր, 1932 թ.,փետրուար, քիւ (112), էջ 95:
- 9.Հայրենիք» ամսագիր, 1932 թ. յունուար, քիւ 3, էջ 90:
- 10.Տես՝ Անդրանիկ Օզանեան, Անդրանիկը կը խօսի, Փարիզ, 1921 թ.:
- 11.Հայրենիք» ամսագիր, 1932 թ. յունուար, քիւ 3,էջ 98-99:
- 12.Հայրենիք» ամսագիր, 1932 թ. յունուար, քիւ 3,էջ 99:
- 13. Հր. Սիմոնեան, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996 թ.,էջ166:
- 14. Յովհ. Զաքազանեան, Դաշնակցութիւնը անեյիք չունի այլեւս, Վիեննա, 1923 թ., տե՛ս շարադրանքի 17-րդ կէտը; Սուրէն Սելիբեան, Սի դրուագ Դարաքիլիսէի ճակատամարտից, «Հայրենիք» ամսագիր, 1920թ., Պոսթըն, բացատիկ, էջ 26; Զօրավար Գ. Ղորղանեան, Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին կովկասեան ռազմաճակատին վրայ, «Հայրենիք» ամսագիր, 1928 թ. յունուար, քիւ 3, էջ 144; մարտ, քիւ 5, էջ 126;Սարո, Մեծ Հերոսամարտը, «Աշխատատոր»քերթ, Հ.Յ.Գ. Վրաստանի կեդրոնական կոմիտէի պաշտօնաթերթ, 1919 թ. մայիսի 28, չորեքշաբթի, քիւ 105, էջ 2-3; Գ. Կացարով, Հայաստանը եւ հայկական հարցը պատերազմից առաջ ու յետոյ, Սոֆիա, 1927 թ.(Կ. Ծիմզոզեանի հայերէն թարգմանութեամբ՝ Երևան, 1999 թ., էջ 37:)եւ այլն:
- 15.ՀԱԱ,ֆ.121, ց.1,գ.79,թ.7-10; Հմմտ. Հր.Աւետիսեան, նշ. աշխ., էջ115,298; ՀԱԱ, ֆ.68\200, գ.11, ք. 63; «Աշակ» քերթ, 1918թ., քիւ 103, էջ 3(Հմմտ. Գուրգէն Օհանեան, Մեծ Դարաքիլիսայի հերոսամարտը, Երևան, 1992թ., էջ 26) : Հմմտ. նաեւ՝ Ե. Լուդշուպեյտ, Տուրքիյա վ գօղը պերվոյ միրավոյ վոյնը, Մոսկվա, 1966 թ., էջ 188:

- 16.Ա. Յարութիւնեան, նշ. աշխ., էջ 188 :
- 17.Աւետիս Ահարոնեան. Աւարայրի ոգեկոչումը. «Հայրենիք» ամսագիր, 1932 թ., յունուար, քիւ 3 (111), էջ 96:
- 18.Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Դարաքիլիսայի հերոսամարտը,Թիֆլիս, 1920 թ., էջ 5: Եթէ նկատի ունենանք, որ 1918 թ. վերջին Հայաստանի առաջին հանրապետութիւնում ապրում էր մօտ մէկ միլիոն երկու հարիւր հազար մարդ (չը հաշուած գաղթականութիւնը), որոնցից հայեր՝ 700 հազար, մօտ կէս միլիոն էլ Կովկասի բարսար, ապա, երկ գաղթականները Մուշեղ Ղազարեանի նշած քիւ կէսն էլ լինէրին,միեւնոյնն է, կարելի է պնդել, որ այդ ճակատագրական օրերին Դարաքիլիսա էր հաւաքուել-խոնունել իրօք որ ապագայ Հայաստանի Հանրապետութեան հայութեան մեծ մասը:
- 19.ՀԱԱ, ֆ.57, ց. 5, գ.178, ք.10-13, գ. 187, ք.1-14, տպագրուած է՝ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Բ, Երևան, 1996 թ., էջ153, 368-382, 270, 376:
- 20.Յ.Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ, 1917-1922, Պէյրոս, 1956 թ., էջ29:
- 21.Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925 թ., էջ 399:
- 22. Խորէն աւագ քահանայ Խանգաղեան, Յուշեր եւ տպատրոթիւններ 1919 թ., Երևան, 1998 թ., էջ87-88:
- 23.ՀԱԱ, ֆ. 57,ց.5, գ.178, քերթ 6:
- 24. Յ. Թուրշեան,Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969 թ., էջ175; ՀԱԱ, ֆ.57,ց.5,գ.182, ք.9:
- 25.Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Դարաքիլիսայի հերոսամարտը,Թիֆլիս, 1920 թ., էջ 5-13, 14-16:
- 26.«Հայրենիք» ամսագիր,1951 թ., օգոստոս, քիւ 8(307), էջ 71:
- 27. «Ռազմիկ» քերթ, Սոֆիա,1943 թ. մայիս 29, քիւ 107, էջ 3:
- 28.Բանբեր Հայաստանի արխիւների, 1992 թ., քիւ 3, էջ 141:
- 29.ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, Ա-21, էջ 38-42: Հմմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Դարաքիլիսա, 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998 թ., էջ18-19:
- 30.ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, Գ-21,քերթ 77 եւ հակառակ էջը: Հմմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Դարաքիլիսա, 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998 թ., էջ40-41:
- 31.Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրոս, 1956 թ., էջ 31- 32:
- 32.Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Դարաքիլիսայի հերոսամարտը. էջ 16-17:
- 33.Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 96-97:
- 34. Խորէն աւագ քահանայի նշ. յուշագրութիւնը, էջ 88:
- 35.Զօրավար Թ. Նազարբէկեանի յուշերը (ռուսերէն), Բանբեր Հայաստանի արխիւների, 1992, քիւ 3, էջ 143-144:
- 36.Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Դարաքիլիսայի հերոսամարտը,Թիֆլիս, 1920 թ., էջ13:
- 37.Աւետիս Ահարոնեան, Աւարայրի ոգեկոչումը. «Հայրենիք» ամսագիր, 1932 թ., յունուար, քիւ 3 (111), էջ 81,83-84:
- 38.Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յարթանակը, Երևան, 1991 թ., էջ 63:
- 39.Յ.Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ, 1917-

1922, Պէյրուք, 1956 թ., էջ 31-32:

40. Չեռագիրը մեզ տրամադրեց հանգուցեալ Ամիրբէկեանի տիկին Լիլիկ Ամիրբէկեանը: Նա ասաց, որ գրաբնօրինակն այդ ճառը կրճատել-հանել է իր ամուսնու «Վերջին հողակտորի վրայ» երկհատոր վէպի (Երևան, 1973թ.) շարադրանքից:

41. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, ք. 10-13, գ. 187, ք. 1-14, տպագրուած է՝ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիրք Բ, Երևան, 1996 թ., էջ 376:

42. Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երևան, 1991 թ., էջ 63:

43. Ա. Ղ. Ռազմական տետրիսն, «Յառաջ» օրաթերք, Երևան, 1920 թ., հոկտեմբերի 26, էջ 1:

44. Ասօ, Գարեգին Նժդեհ, Պէյրուք, 1968 թ., էջ 473:

45. Զ. Իրազեկ, Սօսիկ անցեալից, պատմական դէպքեր եւ սպորտմենք, 1917-1922, Պէյրուք, 1956 թ., էջ 31-32:

46. Հ. Յ. Դաշնակցութեան Բոստոնի Կեդրոնական դիւան, դատական գործ, էջ 401-403, տպագրուել է՝ Ա. Յարութիւնեան, Գարեգին Նժդեհ, 1921 թ. Թատրիզի դատավարութիւնը, Երևան, 2004 թ., էջ 220; «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, քիւ 107, էջ 3:

47. «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, քիւ 107, էջ 3:

48. Շնէտր Ալեքսանդր, Սարդարապատի հերոսամարտը, Ֆրեզնօ, 1967 թ., Ա. Ամուրեանի առաջաբանը, էջ 44; «Հորիզոն» թերթ (Մալոնիկ), 1935 թ. յունուարի 22, էջ 2; Օնիկ Ստեփանի Փանիկեանի 1953 թ. յունիսի 23-ի հարցաքննութիւնը (ՀՀ կառավարութեանն առընթեր ԱԱԾ դիւան, Օնիկ Ստեփանի Փանիկեանի քիւ 13169 քրէական գործ, հտ. 2, էջ 224) եւ նշուած աշխատութեան ձեռագիրը (Արտասագ, Չօր. Նժդեհ (Մարտը եւ մարտիկը) Նոյն գործը, հտ. 2, ծրար 2, էջ 6):

49. Սերգէյ Թորոսեան, Հայ-բրքական պատերազմի օրերին, «Հայրենիք» ամսագիր, 1951 թ., օգոստոս, քիւ 8(307), էջ 72-73:

50. «Յուսարթ» օրաթերք, Կահիրէ, 1957, օգոստոսի 15:

51. Ասօ, Նժդեհ, Պէյրուք, 1968 թ., էջ 67, 468:

52. Հայկ Ասատրեան, Հատընտիր, Երևան, 2004 թ. էջ 332; տե՛ս նաեւ՝ Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29:

53. Վահէ Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայութիւնը, Օւտախ: Երևան, 2002 թ., էջ 362-365:

54. ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 79, էջ 20; Հմմտ. Հր. Աւետիսեան, նշ. աշխ., էջ 213:

55. Բագրատ Սահակեան, Նժդեհը Դիլիջանում, «Դիլիջան» թերթ, 1994 թ., հոկտեմբերի 7 (քիւ 30), հոկտեմբերի 20 (քիւ 31), նոյեմբերի 10 (քիւ 32):

56. Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Ղարաբիխայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920 թ., էջ 16-17:

57. «Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, քիւ 107, էջ 3:

58. Հայկ Ասատրեան, Հատընտիր, Հայաստան-Արիական նախադիրք Առաջադր Ասիայում, Երևան, 2004 թ., էջ 333: Տե՛ս նաեւ՝ Ռազմիկ» թերթ, 1943 թ. մայիս 29, քիւ 107, էջ 3:

59. Սերգէյ Թորոսեան, Ղարաբիխէի ճակատամարտը, «Հայրենիք» ամսագիր, 1951 թ., սեպտեմբեր, քիւ 9(308), էջ 55:

60. Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երևան, 1991 թ., էջ 63:

61. Աւետիս Ահարոնեան, Ասարայրի ոգեկոչումը, «Հայրենիք» ամսագիր, 1932 թ., յունուար, քիւ 3(111), էջ 91-92, 96, 100-101:

62. ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գործ 79, էջ 20-21: Հմմտ. Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յաղթանակը, Երևան, 1988 թ., էջ 201-202: Փաստաթղթի կրճատ տարբերակը տպագրուել է՝ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաբիխաս, 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998 թ., էջ 73-ում:

63. Յովհ. Բաղդամեան, Իմ յուշերը, Երևան, 1979 թ., էջ 87 (ռուսերէն):

64. «Յառաջ» օրաթերք, 1920 թ. հոկտեմբերի 26, էջ 1:

65. Константин Багратян, Годы, подвиги, судьбы, Киев, 1998 г. էջ 37:

66. Կոնստանդին Բագրատեան, նշ. աշխ., Կիւնվ, 1998 թ. էջ 37, 41-42, 44-45, 48:

67. «Ազատ խօսք» օրաթերք, Սոֆիա, 1935 թ. մայիսի 31, էջ 2; «Ռազմիկ» թերթ, 1939 թ., քիւ 121, արտատպուած է՝ Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 2, Երևան, 2002 թ., էջ 272:

68. «Ազատ խօսք» օրաթերք, Սոֆիա, 1935 թ. մայիսի 31, էջ 2; «Ռազմիկ» թերթ, 1939 թ., քիւ 121; Արտատպուած է՝ Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 2, Երևան, 2002 թ., էջ 272:

69. «Յառաջ», 1920 թ. հոկտեմբերի 26, էջ 1:

70. Յ. Թուրշեան, նշ. աշխ., էջ 175:

71. Վ. Մելիքեան, Բաշ-Ապարանի եւ Ղարաբիխայի հերոսամարտերը, «Հայկական բանակ» հանդէս, 1998 թ., քիւ 2, էջ 53-54:

72. Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928 թ., էջ 122-123:

73. Գ. Նժդեհ, Բանտային գրառումներ, Երևան, 1993 թ., էջ 29:

Ռ-աՖայել Համբարձումեան

Ղարաքիլիսայի համատարած խումապը
յալքանակի վերածող
ոգին

Շապիկը եւ ձեւաորումը՝
Անուշաւան Համբարձումեանի

© Ռ. Գամբարձումեան, 2005թ.
© «Նախիջեւան», 2005թ.

NAKHIJEVAN Publishing House